

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գ



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



CHURCH FATHERS

III

ST. GREGORY OF NYSSA

ON THE MAKING OF MAN

ОТЦЫ ЦЕРКВИ

III

СВ. ГРИГОРИЙ НИССКИЙ

ОБ УСТРОЕНИИ ЧЕЛОВЕКА

ETCHMIADZIN – 2008 – ЭЧМИАДЗИН

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

(ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
2008

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Գ - 301

Հրատարակության է երաշխավորված
Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի կողմից

*Քննական բնագիրը,
առաջաբանը և ծանոթագրությունները
Սյրելլա Վարդանյանի
(բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)
Խմբագիր՝
ՆԳԱ ակադեմիկոս Ս.Ս. Արևշարյան*

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ

Գ - 301 ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ (ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ) : - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008,- 272 էջ:

Քրիստոնեական եկեղեցու նշանավոր դեմքերից մեկի՝ IV դարի աստվածաբան ս. Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» (379 թ.) գլուխգործոցը հայերեն թարգմանել են 717 թ. Կոստանդնուպոլսում Ստեփանոս Սյունեցին և Դավիթ Յուլպատոսը: Սույն գրքում առաջին անգամ ներկայացվում է Նյուսացու երկի հայերեն թարգմանության քննական բնագիրը՝ առաջաբանով և ծանոթագրություններով հանդերձ, որ կազմված է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հիման վրա:

Գիրքը հասցեագրված է հելլենիստական և հայ մշակույթի պատմությամբ զբաղվող հայագետներին՝ աստվածաբաններին, փիլիսոփաներին, բժիշկներին, բնագետներին, արվեստաբաններին ու լեզվաբաններին, ինչպես նաև այդ խնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին:

ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՃԵԿԵՆԱՍՏԻՈՅԱՐ

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ

ԱՐՄԵՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ

ISBN 978-99930-75-85-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

© Ս. Վարդանյան, 2008 թ.

*Սուրբ Զատկի տոնի առթիվ ընծա՝
Քրոջա՝ Իրմային, աշխատասիրողից*

ԱՌԱՋԱԲԱՆ

Հունաբան դպրոցի ուշ շրջանի թարգմանությունների շարքում աչքի է ընկնում Դ. դարի նշանավոր աստվածաբան ու փիլիսոփա Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» («Յաղագս կազմութեան մարդոյ») (379 թ.) երկը: Այն իր մեջ ներառել է մարդաբանության հարցերի լայն սպեկտր՝ սկսած աստվածաբանությունից մինչև բնափիլիսոփայություն և բժշկություն (34, 64):

Նյուսացու գիրքը լայն ճանաչում է գտել հայ մատենագրության մեջ: Միայն Մաշտոցի անվան Մատենադարանում այն պահպանվել է 30 գրչագրերում՝ ձեռ. Հ^մ 51, 417, 418, 419, 421, 463, 464, 466, 467, 468, 469, 470, 552, 620, 1500, 1649, 1828, 2103, 2498, 2508, 2509, 2708, 3184, 3463, 3979, 5253, 6622, 6848, 7135, 9427 (6, 7, 8, 9, 14, 21, 24, 51, 63, 66 և այլն): Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանն ունի «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատության 6 գրչագրեր (Հ^մ 56, 294, 1128, 1129, 1241, 2119) (12), իսկ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանը՝ 5-ը (Հ^մ 390, 757, 820, 1122, 1810) (20):

Միջնադարում Նյուսացու գիրքը թարգմանվել է լատիներեն (Դիոնիսիոս Փոքր՝ Չ. դ., Էրիուգենա՝ Թ. դ.), հայերեն, ասորերեն ու վրացերեն, իսկ նորագույն շրջանում՝ ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, իսպաներեն, լեհերեն և ռուսերեն լեզուներով ու հրատարակվել՝ սկսած 1512 թ. մինչև մեր օրերը (PG 44, 124 D-256 C; Forbes; MM; *Ēððüä*, n.145-146; 26, 29, 32, 35, 36, 38, 39, 63):

Առաջին անգամ եվրոպական գրականության մեջ Նյուսացու երկի հայերեն թարգմանությանն անդրադարձել է Նոյմանը “Versuch einer Geschichte der armenischen Literatur” գրքում (38): Հետագայում Ջորջ Ֆորբսը, հիմնվելով մխիթարյաններից ստացած տեղեկությունների վրա, այն բնութագրել է որպես բանագի թարգմանություն (Forbes): Նույնիսկ մեր օրերում Ֆիլիպ Լևինն իր “Two Early Latin Versions of St. Gregory of Nysse’s *περί κατασκευής ανθρώπου*” (36) արժեքավոր ուսումնասիրության մեջ համարյա ոչինչ չունի ավելացնելու այս կարծիքին:

Պատճառը պարզ է՝ հայերեն բնագիրը մինչ այսօր ձեռագիր վիճակում է: Այժմ հրատարակության ենք հանձնում «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի քննական բնագիրը, որի համար հիմք է ծառայել հունարեն բնագրին աննամոտ կանգնած՝ Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ-ԺԳ. դարերի Հ^մ 468 լիարժեք ձեռագիր մատյանը և ԺԳ-ԺԷ. դդ. ինը գրչագրեր՝ Հ^մ 51, 469, 470, 620, 1500, 1649, 2508, 3463, 5253:

Հայերեն թարգմանության ժամանակի ու թարգմանիչների հարցը հայագիտության մեջ առաջացրել է տարակարծություններ: Հայերեն գրչագրերի հիշատակարաններում միաժամանակ հանդես են գալիս գրության երկու տարբեր տարեթիվ՝ մեկը ըստ աշխարհի արարչագործության (6227 կամ ավելի ճիշտ՝ 6225 թ), որը համապատասխանում է Փրկչականի 717 թվականին, իսկ մյուսը՝ ըստ հայոց թվականության ՄԻԱ., այսինքն՝ 772 թ.: Հիշատակարանում ասված է. «Ի Յ.երորդի Մ.երորդի Ի.երորդի Է.երորդի (6227) արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թոյոյ՝ ի չորեքտասաներորդի ընդիքտիոնին, իսկ ըստ հայոյմ թվի ՄԻԱ. (772), յառաջին ամի թագաւորութեան Լեւոնի, թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի, Նիսեա եպիսկոպոսի, ի ստոյգ արիւնակաց, ի Կո[ս]տան[դն-]ուպալիս, ի ձեռն Դաթի Հիւպատոսի, ի թագաւորական սեղանոյն յանգիւնառի [Կենառի], ի ձեռն Ստեփանոսի քահանայի եւ քերդողի, աշակերտի տեսռն Մովսէսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի» (ձեռ. 470, էջ 115աբ):

Հետագայում պարզվեց, որ հայոց ՄԻԱ. (772) թվականը չի համապատասխանում ո՛չ Բյուզանդիայի Լևոն Գ. կայսեր թագավորության ժամանակաշրջանին (717-741 թթ.) և ո՛չ էլ Ստեփանոս Սյունեցու ապրած տարիներին (680-735 թթ.), ուստի հայագետներից Մ. Չամչյանը (17) և Հ. Տաշյանը այն համարեցին գրիչների սխալ: Վերջինս գրում է. «Դար մը յառաջ Հ. Միքայել Վ. Չամչեան իւր Պատմութեան մէջ քերած է յիշատակարանս ուրիշ ձեռագրի մը համեմատ, ուր թուերը քիչ մ'ալլազգ են: Աշխարհիս թուական կը դնէ 6225, իսկ «Կենառ» բառի տեղ կը կարդանք ուրիշ աղաւաղութիւն մը «յակիւնառի»: Ասոնք ի բաց թողով՝ կը յիշեցընենք, որ Չամչեանի օրինակը «ըստ հայոյմ թուականին ճԿԵ.» կկարդայ, որ է 716, ուրեմն՝ կրնանք ըսել՝ ճիշդ: Չամչեան կը յաւելու թէ «ի միում ձեռագրի» միայն «ՄԻԱ.» թուական գրուած է, գոր «յայտնի սխալ գրչաց» կանուանէ» (23, էջ 9-10):

Համաձայն Գ. Հովսեփյանի կարծիքի, «այս ձեռագրի «իսկ ըստ հայոյմ ՄԻԱ.» յետին յավելումն է, Լևոն Գ.ի և Լևոն Գ.ի (775-780) թուականների շփոթմամբ» (5, էջ 55): Ի դեպ ասենք, որ ՄԻԱ.ն չի համապատասխանում նույնիսկ Լևոն Գ.ի թագավորության առաջին տարուն, որը պիտի լիներ ՄԻԳ.ն (775թ.): Անդրադառնալով այս հարցին՝ «Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ» գրքում Կ. Մուրադյանը նկատում է. «որ հետագոտողի «յետին յավելումն է» վերապահմամբ միանգամայն տեղին է, հաստատվում է վերում վկայակոչված Մաշտոցի անվան Մատենադարանի Հ^ժ 469 գրչագրի օրինակով, ուր «իսկ ըստ հայոյմ ՄԻԱ.»ն Ստեփանոս գրչի ձեռքով ավելացվել է լուսանցքում և միայն հետագա ընդօրինակություններում է մուծվել բնագիր և այդ եղանակով դարձել հիշատակարանի մաս» (14, էջ 68): Համաձայն մեր հետազոտման տվյալների՝ Մաշտոցյան Մատենադարանի գրչագրերի հիշատակարաններում առկա է միայն «ՄԻԱ.» թվականը:

Վիճարանություններ են ծավալվել նաև թարգմանչի, կամ ավելի ստույգ ասած՝ թարգմանիչների անձի շուրջ, քանի որ Ստեփանոս Սյունեցուց բացի և նույնիսկ նրանից առաջ հիշատակարանում նշված է Դավիթ Հյուպատոսի անունը, որը կրում է «թագաւորական սեղանոյն կենառի (cenarius), այսինքն՝ սեղանապետի պատվավոր տիտղոսը: (Ի դեպ հիշենք, որ վերջինս ձեռագրերում հաճախ առկա է աղավաղված «յակիւնառի» կամ «յանգիւնառի» ձևով և որոշ հեղինակների, այդ թվում Բրոսսեի կողմից (33), մեկնաբանվել է որպես կելար (cellarius), այսինքն՝ մառանապետ):

Այս պարագայում հայագետների կարծիքը բաժանվել է. նրանցից մի մասը, օրինակ՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հեղինակները (ՆՀԲ էջ 16) և Գ. Ջարբխանալյանը (9) որպես թարգմանիչ էին ընդունում միայն Է-Ը. դարերի անվանի գիտնական Ստեփանոս Սյունեցուն, մինչդեռ շատերը (2; 3, էջ 36; 14; 49), ելնելով վերոհիշյալ հիշատակարանի և ԺԳ-ԺԴ. դարերի նշանավոր հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի (18, էջ 135) «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում բերած հայտնի վկայությունից («Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դավիթ անուն եւ թագաւորական սեղանի կենառի. եւ ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնիսիոսի. եւ դնէ ինքն դժուարագոյն եւ խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ եւ զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիսացոյն զԲնութեան եւ զԿազմութեան»), համարում են Դավիթ Հյուպատոսին Սյունեցու համագործակից:

Հետաքրքրական է նշել, որ Դիոնիսիոս Արեոպագագուն վերագրվող երկերի հայերեն թարգմանության հիշատակարանում համարյա նույնությամբ կրկնվում են Նյուսացու երկի հիշատակարանի տվյալները, միայն այն տարբերությամբ, որ իբրև թարգմանության ժամանակ նշված է հայագգի Փիլիպպոս կամ Փիլիպպիկոս Վարդան (711-713) Բյուզանդիայի կայսեր թագավորության երկրորդ տարին՝ 712 թվականը (ըստ արարչագործության՝ 6220-ը):

Ամփոփելով ձեռագրերում առկա հիշատակարանների տվյալներն ու պատմիչների վկայությունները, ինչպես նաև հայագետների որոշ ճշգրտումները՝ կարելի է եզրակացնել, որ հասնելով Պոլիս 712 թ., երբ հայերի հիշողության մեջ դեռ թարմ էին «կրակի տարին» ու նրա արհավիրքները, Ստեփանոս Սյունեցին այստեղ ծանոթանում է հայ իշխան Դավիթ Հյուպատոսի հետ, որը հայագգի կայսր Փիլիպպոսի սեղանապետն էր, ու նրա օգնությամբ թարգմանում վերոհիշյալ երկերը, ավարտելով իր գործը Լևոն Գ. կայսեր թագավորության առաջին տարում՝ 717 թվականին:

Նախքան «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի վերլուծությանն անցնելը, համառոտ ձևով անդրադառնանք Գրիգոր Նյուսացու կենսագրության ու ստեղծագործական կյանքի կարևորագույն դրվագներին, որոնք իր ապրած դարաշրջանի իրական հայելին էին: Մի դարաշրջան, երբ քրիստոնեությունը, Միլանի էդիկտով (313 թ.) պաշտոնապես ճանաչվելով Հռոմեական կայսրու-

թյան կողմից, շարունակում էր համառ պայքարը վերջին ճիգերը գործադրող հեթանոսության ու բազմաթիվ աղանդների դեմ:

Նյուսացին, ամենայն հավանականությամբ, ծնվել է 335 թ., Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայում, բարեպաշտ քրիստոյա հույն ընտանիքում (14, էջ 25-26; 27, Տ. 188): Գարեգին Չարբհանայանը «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» գրքում այն միտքն է հայտնել, որ նա հավանաբար ծնված պիտի լիներ Փոքր Հայքի Մեքաստիա քաղաքում (9): Մակայն այդ ենթադրությունը մեզ քիչ հավանական է թվում, քանի որ հետազայում, երբ նա մի կարճ ժամանակով ընտրվեց Մեքաստիայի թեմի առաջնորդ, իր նամակներից մեկում այդ տարիները անվանել էր «բաբելոնյան գերություն» (27, Տ. 190): Հազիվ թե Նյուսացին այդպես խոսեր իր ծննդավայրի մասին:

Գիտնականության օրոք նրա պապը հալածանքներ, աքսոր ու գրկանքներ կրեց, սակայն հետագայում կարողացավ վերականգնել պատվավոր դիրքը մայրաքաղաքում: Հայրը, որ վախճանվեց բավականին երիտասարդ տարիքում, հռետոր էր: Նյուսացին ժառանգեց հոր ձիրքը: Նա բազմազավակ ընտանիքի երրորդ որդին էր: Հոր մահվանից հետո առօրյա հոգսերը ծանրացան մոր՝ Էմմելինայի ուսերին: Բացառիկ հեղինակություն էր վայելում ընտանիքում տատը՝ Մակրինան, որը քրիստոնեական ոգով դաստիարակեց իր թոռներին (ի դեպ հիշենք, որ նրանցից չորսը՝ ինքը Գրիգորը, նրա ավագ եղբայր Բարսեղ Կեսարացին ու կրտսերը՝ Պետրոս Մեքաստացին, ինչպես նաև ավագ քույրը՝ Մակրինան, հետագայում դասվեցին քրիստոնյա եկեղեցու սրբերի շարքը): Ավագ եղբայրը՝ փոխարինելով հորը, դարձավ նրանց համար ամբողջ կյանքում ուսուցիչ և խորհրդատու: Ուստի Նյուսացին գերադասեց ուսում ստանալ հայրենիքում՝ ի տարբերություն Բարսեղ Կեսարացու ու Գրիգոր Նազիանզացու, որոնք Կեսարիայից բացի սովորել են Աթենքի հռչակավոր համալսարանում (13, էջ 19-22; 14, էջ 25; 27, Տ.165-166):

Ուսումնառության տարիներին շնորհալի պատանին խորացավ աստվածաբանության կնճռոտ հարցերի մեջ, որպեսզի հետագայում պաշտպանի ուղղափառ քրիստոնյա եկեղեցու ուսմունքը՝ աղանդավորների, և առաջին հերթին՝ արիոսականների ու եվնոմիանների ոսնձգություններից (տե՛ս նրա «Բան խոստովանութեան հաստոյ», «Յաղագս Սուրբ Երրորդութեան», «Յաղագս հոգու եւ յարութեան», «12 Գիրք ընդդէմ Աննմանիցն» և աստվածաբանական բնույթի այլ աշխատություններ (14, էջ 74-97; 25, թ. 439-444; 27, Տ. 191-220; 29, 30, 31):

Միաժամանակ նա մեծ եռանդով ուսումնասիրում էր հին հույն փիլիսոփաների, բնագետների ու բժիշկների՝ Պլատոնի, Արիստոտելի, Հիպոկրատի, Գիոսկորիդեսի, Գալենի, Պտղոմեոսի և այլոց գործերը: Հավատարիմ լինելով իր դարաշրջանի փիլիսոփայական որոնումների խիզախ ոգուն՝ նա փորձում էր գտնել աստվածային ճշմարտությունը նաև ստոյիկյանների ու նորպլատոնականների գրվածքներում: Իր մտերիմ բարեկամ Գրիգոր Նազիանզացու հետ

Նյուսացին ուսումնասիրում է նաև նշանավոր աստվածաբան ու փիլիսոփա Օրիգենեսի կամ Որոգինեսի (185-253/254 թթ.) աշխատությունները և լույս ընծայում նրա մեկնություններից արված ընտիր ծաղկաքաղ: Հետաքրքրական է, որ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու համագործակցության արդյունքում ստեղծվեց «Ս. Գիրքը և նրա մեկնաբան Որոգինեսը» երկը (13, էջ 23): Ջարգացնելով վերջինիս մտքերը «Երգ երգոցի» «Թուղթ առ Ողոմայիադ» կոչված մեկնության նախաբանում՝ Նյուսացին պաշտպանում էր տակավին Փիլոն Ալեքսանդրացուց եկող Աստվածաշնչյան բնագրի ո՛չ միայն բառացի, այլև այլաբանական ընկալումը (22, 45, 57, 70): Պատահական չէ, որ համաձայն բյուզանդական վարքագրության (69), նա իր գիտելիքները կատարելագործելու նպատակով եղել է Պաղեստինյան Կեսարիայի նշանավոր դպրոցում, ուր նրանից մեկ դար առաջ դասավանդում էր ինքը՝ Որոգինեսը:

Այդ հասունացման տարիներին Նյուսացին ապրեց մեծ հոգեկան ճգնաժամ: Մի կողմից հռետորի բնատուր ձիրքը, ռոմանտիկ ոգին, երիտասարդական ավյունը և ջերմ կենսասիրությունը մղում էին նրան դեպի աշխարհիկ կյանք, մյուս կողմից ավագ եղբոր ու քրոջ օրինակը, որոնք հորդորում էին ընդունել կուսակրոնություն, պատճառ դարձան հոգեկան տվայտանքների: Համաձայն մի շարք վկայությունների, նա այսուամենայնիվ ամուսնացել է հոգեհարազատ Թեոսեփայի հետ, որը Գրիգոր Նազիանզացու քույրն էր: Միրած էակի մահը ծանր հարված էր Նյուսացու համար, ինչպես այդ երևում է Գրիգոր Նազիանզացու մխիթարական մամակից: Նա աստիճանաբար հեռանում է աշխարհիկ կյանքից, հրաժեշտ տալիս հռետորական արվեստին և ամբողջովին տրվում գիտական պրպտումներին ու մտորումներին: Պատահական չէ, որ նրա «Յաղագս կուսութեան» և «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» երկերում հաճախ զգացվում է անձնական ապրումների ջերմ շունչը (27, Տ. 189):

Այդ տարիներին վերջնականապես ձևավորվում է հռչակավոր Կապադոկյան խմբակը, իսկ ավելի ճիշտ՝ հանճարեղ համախոհների եռյակը, որի հոգևոր ղեկավարն էր Բարսեղ Մեծը, իսկ եռանդուն անդամները՝ անվանի աստվածաբան ու բանաստեղծ Գրիգոր Նազիանզացին և ինքը՝ Գրիգոր Նյուսացին: Կապադոկյացիները ձգտում էին աստվածաբանության մեջ ներմուծել ստոյիկյան փիլիսոփայության և նորպլատոնականության գաղափարները, ինչպես հայ իրականության մեջ V-VI դարերում այդ արեց հունարան դպրոցը (53, c. 286-287): Այդ հարցում նրանց դիրքորոշումը բավականին մոտ էր Որոգինեսի մտածելակերպին: Վերջինս, իր կրթությունն ստանալով Ալեքսանդրիայում և աշակերտելով Պլոտինոսի ուսուցիչ Ամոնիոսին, Կապադոկյացիների խմբակի անդամներից դեռևս մեկ ու կես դար առաջ փորձեց «պատվաստել ստոյիկյան փիլիսոփայությունը և նորպլատոնականությունը աստվածաբանության ծառին» (40, 67): Դժվար է ասել՝ որքանով նրան հաջողվեց իրականացնել իր մտադրությունը, որովհետև գիտնականի պրպտող միտքը հաճախ նրան

ստիպում էր աստվածաբանության մեջ էլ արտահայտել ծայրահեղ գաղափարներ. հիշենք թեկուզ նրա հայացքները *ἀποκατάστασις*-ի մասին (բառացի՝ վերականգնում), համաձայն որի պիտի փրկվեն ոչ միայն արդարները, այլև մեղավորները, նույնիսկ ինքը՝ սատանան: Հենց այդ պատճառով էլ, թեպետ նրա ներդրումը փիլիսոփայության ու աստվածաբանության մեջ ակներև էր, և քրիստոնյաների դեմ ծավալված հալածանքների հերթական ալիքի ժամանակ նա որպես մարտիրոս կնքեց իր մահկանացուն, սակայն հետագայում՝ 543 թ., Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովի կողմից բանադրանքի ենթարկվեց:

Օրիգենեսը մեծ ազդեցություն ունեցավ Կապադովկացիների և հատկապես Գրիգոր Նյուսացու աշխարհայացքի վրա, որը կիսում էր նրա մտքերը ոչ միայն զուտ փիլիսոփայական, այլ նաև աստվածաբանական հարցերի շուրջ, օրինակ՝ համընդհանուր փրկության կամ *ἀποκατάστασις*-ի վերաբերյալ: Պատմական նոր դարաշրջանում՝ Հուստինիանոսի օրոք և ավելի ուշ դարերում, երբ սրվեց պայքարը քրիստոնեության ներքին հոսանքների դեմ, որոնք դասվեցին աղանդների շարքը, Օրիգենեսի և նորալատոնականների հայացքներից շատերը դուրս մնացին ուղղափառ գաղափարախոսության շրջանակից: Ինքը՝ Գրիգոր Նյուսացին հազիվ փրկվեց ետմահու եկեղեցական բանադրանքից, իսկ նրա գործերի վրա դարեր շարունակ ծանրացավ «օրիգենիզմի» ազդեցությունը կրելու մեղադրանքը, որը բարեբախտաբար չէր սպառնում նրա գործընկերներին (*Ἐὐδῆα*, ն. 216-222):

Կապադովկացիների գործունեությունը լուրջ գիտական ոլորտով չէր սահմանափակվում: Բարսեղ Մեծը իր գաղափարակիցներին հորդորում էր եռանդուն մասնակցություն ցուցաբերել եկեղեցական կյանքին, և ինքը 370 թ. դարձավ Կեսարիայի մետրոպոլիտ, իսկ Գրիգոր Նյուսացին 371 թ.՝ Կապադովկիայի արևմուտքում գտնվող փոքրիկ Նյուսա քաղաքի եպիսկոպոս: Միայն Գրիգոր Նազիանզացին մերժեց Սասիմա կոչվող մի խուլ և աննշան վայրի եպիսկոպոս դառնալու՝ Մեծ Բարսեղի առաջարկը, ինչը որոշ սառնություն մտցրեց նրանց հարաբերությունների մեջ: Հետաքրքրական է, որ երբ բարեկամներից մեկը իր զարմանքն արտահայտեց Բարսեղ Կեսարացուն, թե ինչու էր նա Գրիգորի նման փայլուն անձնավորության համար ընտրել Նյուսայի պես անհրապույր մի վայր, նա պատասխանել էր, թե գերադասում է, որ ոչ թե իր թեմի փառքը բարձրացնի եղբորը, այլ վերջինս ինքը փայլ տա սեփական թեմին:

Արիոսականության դեմ նրանց պայքարն այն տարիներին, երբ գահին նստած էր աղանդավորների հովանավորող Վաղեսը, պատճառ դարձավ դաժան պաշտոնական հալածանքների, որոնք խիստ ճգնավորության հետ միասին կրճատեցին Բարսեղ Մեծի կյանքը, իսկ իր կրտսեր եղբորը դարձրին քավության նոխազ՝ արիոսականների կողմից ծավալված զրպարտչական արշավում: Արիոսական մեծամասնություն ունեցող սինոդի որոշմամբ Նյուսացին 376 թ. նույնիսկ զրկվեց իր թեմից: Միայն Վաղեսի սպանությունը 378 թ. վերջ

տվեց այդ հալածանքներին և նոր ասպարեզ բացեց Նյուսացու առջև (27, S.189):

Հուրախություն և ի ցնծություն իր թեմի՝ նա վերադարձավ Նյուսա և վերականգնվեց պաշտոնում: 379 թ. մասնակցել է Անտիոքում կայացած սինոդի աշխատանքներին, ապա կատարել տեսչական շրջագայություն Պոնտոսի և Փոքր Հայքի թեմերը: Այդ ընթացքում Նյուսացին ընտրվեց Սեբաստիայի թեմի քափուր մնացած աթոռի առաջնորդ: Սակայն ամբողջ սրտով կապված լինելով Նյուսայի հետ, նա հարմար առիթն օգտագործեց և պաշտոնից ազատվեց, Սեբաստիայի թեմը հանձնելով իր կրտսեր եղբորը՝ Պետրոսին:

Հաղթանակի և ցնծության այդ օրերին Նյուսացուն սպասում էր երկու ծանր կորուստ: Նա այցելում է Պոնտոսի մենաստանում իր ավագ քրոջը՝ Մակրինային, որը ավելի շուտ մայր և խորհրդատու էր եղել իր եղբայրների համար, և նրան գտնում մահվան մահճին գամված: Նրա հիշատակին Նյուսացին ձոնել է «Ի Սուրբ Մակրինայ» հիասքանչ ներբողը (14, էջ 75; 25, p. 438): Իսկ 379 թ. վախճանվում է Բարսեղ Մեծը: Նրա մահը ցնցեց Նյուսացուն և միաժամանակ մղեց կատարել իր վաղեմի ցանկությունը՝ ստեղծել «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործը:

Իր գրքի առաջաբանում, որը Բարսեղ Կեսարացու մահվան տարում, որպես նվեր Չատկի տոնի առթիվ, ձոնել էր կրտսեր եղբորը՝ Պետրոս Սեբաստացուն, նա բացահայտում է գործի բուն նպատակը, այն է՝ իրականացնել «Վեցարեայ»-ում անկատար մնացած ավագ եղբոր մտադրությունը՝ անդրադառնալ մարդաբանության հարցերին (4, էջ 321): «Ոչ իբրու ատարացուցանել եւ աղարտել խառնելով մերոյս զնորա ջանն կամեցեալ,- գրում է Նյուսացին:- Քանզի ոչ է արժան զբարձրն զայն թշնամանել բերան մերովքս հիւծեալ բանիք, այլ զի մի թուեցի անկատար եւ պակաս վարդապետին փառք յաշակերտսն իւր լինել: Քանզի եթէ թերոյն ի Վեցարեին ի մարդն տեսլեան ոչ մի որ յաշակերտելոցն փոյթ ինչ առ թերոյն լրումն մատոյց առեալ, լինէր յիրաւի զմեծէ փառաց նորա եպերանաց կռիւ, իբրու թէ ոչ կամեցեալ գիտութիւն ինչ հասական տեսանող ի լսաւոսն գործել» (ՏՄԿ, էջ 42, տող 10-18):

Գրիգոր Նյուսացու կյանքի վերջին տասնամյակը բավականին խաղաղ էր: Նա վայելում էր Թեոդոս կայսեր և նրա ընտանիքի սերն ու հարգանքը, զբաղեցնում բարձր եկեղեցական պաշտոններ, մասնակցում կարևորագույն եկեղեցական ժողովներին: Նյուսացին մեկն էր 150 ընտրյալ եպիսկոպոսներից, որոնք կայսեր հրավերով մասնակցեցին Կոստանդնուպոլսում 381 թ. կայացած Երկրորդ տիեզերական ժողովին: Վերջին անգամ նրա անունը հիշատակվում է 394 թ. Կոստանդնուպոլսում կայացած սինոդի առիթով, որը պայմանականորեն համարվում է Նյուսացու մահվան տարին (27, S. 190-191):

Ինչպես ասվեց, Նյուսացու գրական ժառանգության մեջ հատուկ տեղ է գրավում «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գլուխգործոցը, որը առանձնա-

նում է աստվածաբանական ու գիտական մտքի թռիչքով, նաև հանճարներից հատուկ մտածելակերպի հավերժ թարմությամբ ու արդիականությամբ, կենդանի լեզվի շնչով ու պատկերավոր մտածողությամբ: Հունարեն բնագիրը բաղկացած է առաջաբանից և 30 կամ 31 գլուխներից, որոնցից մոտավորապես կեսը (I, VII, VIII, IX, X, XI, XII, XIII, XIV, XV, XXIV, XXVIII, XXIX, XXX) նվիրված է փիլիսոփայական, բնագիտական ու բժշկագիտական հարցերի, իսկ մյուս կեսը (II, III, IV, V, VI, XVI, XVII, XVIII, XIX, XX, XXI, XXII, XXIII, XXV, XXVI, XXVII) գուտ աստվածաբանական բնույթի է, թեպետ հաճախ պատահում է, որ այս հարցերը քննվում են միևնույն գլխում:

Սկզբնաղբյուրի քննական բնագիրը՝ քսանից ավելի ձեռագրերի բաղա-տությամբ, 1855-61 թթ. լույս ընծայեց Ջորջ Ֆորբսը (Forbes): Վերջինս այն հրատարակեց փոքր տպաքանակով՝ իր սեփական տպարանում, որի պատճառով ուսումնասիրողների համար այսօր դարձել է գրեթե անմատչելի: Նրա հիման վրա 1893 թ. լույս տեսավ Նյուասցու գրքի անգլերեն թարգմանությունը՝ "On the Making of Man" (MM): Ֆորբսի դասակարգման համաձայն՝ գոյություն ունի 2 ձեռագրախումբ: Այս ձեռագրախմբերի միջև եղած տարբերությունը հիմնականում կառուցվածքային բնույթի է: Առաջին խմբի ձեռագրերը առաջաբանից բացի պարունակում են 30 գլուխ, մինչդեռ երկրորդ ձեռագրախումբը առաջաբանով հանդերձ ունի 31 գլուխ: Այս լրացուցիչ գլուխը լատիներեն տարբերակում և որոշ հունարեն ձեռագրերում գոյացել է ընդարձակ XII գլխի բաժանումից հետո: Սրանից բացի, երկրորդ ձեռագրախմբում հանդիպում են և այլ կառուցվածքային փոփոխություններ, օրինակ՝ IX գլխի վերջին մասը լատիներեն ձեռագրերում տարվել է X գլխի սկիզբը, իսկ XXVIII գլխի վերջին նախադասու-թյունը՝ XXIX գլխի սկիզբը: Մեր պատրաստած հայերեն քննական բնագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն պատկանում է երկրորդ ձեռագրախմբին (52): Վերոհիշյալ կառուցվածքային տարբերություններից, որոնք բնորոշ են այդ խմբին, այստեղ առկա է XII գլխի բաժանումը երկու առանձին գլխի (հայերեն թարգմանության ԺԳ-ԺԴ. գլուխներ), ինչպես նաև XXVIII-XXIX գլուխներում (հայերենի Ի-ԻԱ. գլուխներ) կատարած բնագրային տեղափոխու-թյունները: Դրանից բացի, հայերեն թարգմանությունը պարունակում է 31-ի փոխարեն 32 գլուխ, քանի որ առաջաբանը մեզանում դիտվել է որպես առան-ձին գլուխ: Հայերեն թարգմանության մեջ բացակայում է հունարեն բնագրի սկզբում գտնվող ձոնը՝ Գրիգոր Նյուասցու կրտսեր եղբայր Պետրոսին, սակայն դրա փոխարեն հեղինակի անվան կողքին նշված է նրա ավագ եղբայր Բարսեղ Կեսարացու անունը, որն առկա է նաև Ֆորբսի հրատարակած լատիներեն տարբերակի վերնագրում: Հասկանալի է, որ հայերեն թարգմանության մեջ այի-տի բացակայելը Նյուասցու գրքին նվիրված ոմն Նիկիտայի բանաստեղծու-թյուն-էպիգրամը՝ ΕΙΣ ΤΟΝ ΑΓΙΟΝ ΓΡΗΓΟΡΙΟΝ ΝΙΚΗΤΑ (PG, 44, 124D-126C), որը հանդիպում է միայն ուշ շրջանի բյուզանդական ձեռագրերում (Ēōdūā, n.180):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատության բազմաթիվ հրատարակությունների և ժամանակակից լեզուներով թարգմանությունների առաջաբաններում ու ծանոթագրություններում աշխատասիրողները մանրամասնորեն կանգ են առել աստվածաբանական ու փիլիսոփայական խնդիրների վրա, սույն ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրության առարկա ենք դարձրել Նյուսացու՝ վերլուծության տակավին կարող մնացած բնագիտական ու բժշկագիտական հայացքները, ինչպես և հայերեն թարգմանության հետ կապված բնագրագիտական ու տերմինաբանական հարցերը (52):

Նյուսացու գրքի առաջին գլուխը ամբողջությամբ նվիրված է տիեզերագիտությանը: Այն սինկրետիկ ձևով արտացոլում է ինչպես Արիստոտելի հայացքները բոլորածիր շարժման մեջ գտնվող, երկրակենտրոն և վախճան ունեցող տիեզերքի մասին (28, 56, *Ἔδῃα* *ñ.* 185-186), այնպես էլ ստոյիկյանների պատկերացումները նրա գոյացման վերաբերյալ, որոնք արտահայտված են նաև Կեղծ-Արիստոտելի «Յաղագս աշխարհի» երկում (10, 11): Համաձայն սրանց՝ «աստվածային Լոգոսը» կամ «հրային բնությունը» կամ եթերը սկզբում ստեղծել է չորս հիմնատարրեր՝ հուրը, օդը, ջուրը և հողը, որոնց բնությունը հակադիր է միմյանց, ապա՝ բոլոր մարմինները: Միանալով օդի հետ՝ այդ հրային բնությունը ներթափանցում է տիեզերքի մարմինների մեջ և ողջ տիեզերքը դարձնում մի ամբողջություն՝ շնորհիվ «ընդհանուր համաշնչի» (*συσπνοία*): Վերջինիս մեծ կարևորություն էր տալիս նաև Նյուսացին. «Եւ ի միասին շնչելով խառնի առ ինքն արարածս ի հակառակացն առանձնատրութեան գտեալ» (ՏՄԿ, էջ 47, տող 15-17): Համաշնչի գաղափարն առկա է նաև արևելյան փիլիսոփայական համակարգերում:

Նյուսացու աշխարհայացքը շատ հարցերում արտացոլում էր նորալատոնականության գաղափարախոսությունը: Համաձայն Պլոտինի և Պորփյորի տեսության՝ Միանական Գերբնական Էությունը կամ Առաջին Բարին իրենից ճառագում է միտքը (*νοῦς*), հոգին (*ψυχή*) և նյութական աշխարհը: Նյուսացին գրում է. «Արդ, մի ըստ տեսեցելոյ բանիս էապէս բարի: Իսկ միտքն ըստ կերպարանին բարոյն լինել, եւ նա ունի բարոյն գոլ: Իսկ բնութիւնն, որ ի մտացն ըմբռնեցեալ է, զարեւն իմն կերպարանի կերպարան է, ցուցանէ ի ձեռն սոցա» (ՏՄԿ, էջ 96, տող 19-20, էջ 97, տող 1-2):

Անցնելով բնության, և մասնավորապես բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև մարդու գոյացման հարցին՝ Նյուսացին, ի տարբերություն Արևելքի վաղ շրջանի քրիստոնյա աստվածաբանների, որդեգրեց ոչ միայն «Տիմեոսում» Պլատոնի առաջարկած՝ ոգու բաժանումը անմահի (կենտրոնը՝ գլխում) և մահկանացուի (կենտրոնը՝ սրտում ու լյարդում) (19, 68), այլև Արիստոտելի մտքերը ոգու երեք տեսակի ընդունակությունների մասին, շարադրված Մեծ Ստագիրացու «Ոգու մասին» (*Περὶ ψυχῆς*) գրքում (54): Զննադատելով

Պլատոնի տեսությունը, Արիստոտելը ոգին համարում էր միասնական, անբաժանելի, օժտված հետևյալ ընդունակություններով՝ բույսերին հատուկ սնվելու և բազմանալու կարողությամբ և զգացողությամբ, որ հատուկ է կենդանիներին և մարդուն: Ինչ վերաբերում է լոկ բանական էակին՝ մարդուն հատուկ մտածելու ընդունակությանը, ապա այստեղ Արիստոտելը Պլատոնի նման հակված էր ընդունելու, որ հոգու այս գերագույն դրսևորումը, որ այնքան մոտ էր աստվածային էությանը, կարող էր առանձնացած լինել:

Միավորելով այս երկու հույն հանճարների գաղափարները, որոնք հետագայում զարգացրին ստոյիկյանները, Գալենը ստեղծեց մի նոր սինկրետիկ համակարգ, ճանաչելով՝ բնական *φυσική*, կենդանական *ζωτική*, և շնչական *ψυχική* հոգի (Galenus; 46, p. 62-64): Հետևելով Գալենի ուսմունքին՝ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատության հեղինակը գրում է. «Քանզի ուսուցանել կարծեն ի ձեռն սոցա բանն, երիւք զանազանութեամբք՝ զկենդանականն եւ զշնչականն զարութիւն տեսանիլ: Քանզի մին է աճեցական միայն եւ կերակրական, զգոյգ եւ զկշիռ յաւելորդութիւն կերակրեցելոցն մատուցանելով, եւ բնականն ասի, որ եւ ի տունկս տեսանի: Քանզի է եւ ի տնկեալսդ կենդանական իմն զարութիւն, ի զգայութենէ անբաժացեալ, տեսանել: Եւ այլ միւս եւս թող զայս կենաց տեսիլ, որ եւ զտոյն զայս ունի, եւ զըստ *բնութեանն* [զգայութեանն] եւս մատակարարիլ առընկալաւ, որ ի բնութեան անասնոցն է: Քանզի ոչ միայն կերակրի եւ աճէ, այլ եւ զզգայական գործն եւ զընդունելութիւնն ունի: Իսկ կատարեալն ի մարմնի կեանք ի բանականին՝ ի մարդկային ասելով, տեսեալ լինի բնութեան՝ եւ կերակրելով, եւ զգալով, եւ բանի հասեալ, եւ մտաք մատակարարեալ: Եւ եղիցի մեզ այսպիսի իմն բանին բաժանումն էիցն, քանզի է ինչ, որ իմանալի է, եւ է, որ մարմնաւոր է ամենայն իրաք» (ՏՄԿ, էջ 71, տող 3-17):

Իր գրքում Նյուսացին անդրադառնում է նաև մեկ այլ կարևոր հարցի, այն է՝ թե մարմնի որ մասում է գտնվում մտածողության կարողությունը (*νοῦς*)։ մի հարց, որ հավասարապես հետաքրքրում էր բնափիլիսոփաներին ու աստվածաբաններին։ Համաձայն Պլատոնի տեսության, որին համամիտ էր և նրա ավագ ժամանակակից՝ գիտական բժշկության հայր Հիպոկրատը, այն տեղադրված է գլխուղեղում (19, 59, 62, 68)։ Սակայն Արիստոտելը, հակադրվելով այս տեսակետին, մտածողության կենտրոնը համարեց սիրտը՝ մի գաղափար, որ հետագայում որդեգրեց եկեղեցին (44, 46, *Λυρբε*)։ Դարեր շարունակ տևած այս բանավեճը ավարտվեց Գալենի օրոք, որը փորձառական ճանապարհով ապացուցեց, որ զգացողության, ինչպես նաև մտածողության ու շարժողության կենտրոնը գտնվում է ուղեղում և ոչ թե՛ սրտում։ «Մարդու մարմնի մասերի նշանակության մասին» գրքում Մեծ Պերգամացին գրում է. «Սակայն ասում է Արիստոտելը, ոչ բոլոր զգայարաններն են հասնում գլխուղեղ։ Այս ինչ խոսքեր են, ով Արիստոտել... Ես նույնիսկ այսօր էլ ամաչում եմ՝ հիշելով դրանք։ Մի՞թե ամեն մի ականջ չի մտնում թաղանթով պատած լսողական նյարդ։ Մի՞թե ամեն

աչք չի ստանում փափուկ և ամուր նյարդ... Եվ այսպիսով՝ բոլոր զգայարանները կապված են գլխուղեղի հետ» (58, շ. 295):

Անդրադառնալով այս բանավեճին՝ Նյուսացին գրում է. «Լեռացի այսուհետև ամենայն դիպեցուցանող կարծիք ընդունայնաբանութեան այնոցիկ, որ ի մասունս ուրեմն մարմնատրս գիմանալին արգելեալ փակեն զգործատրութիւն, յորոց ոմանք ի սրտի զիշխանականն գոլ դնեն, եւ ոմանք ի խելս զմիտս ասեն բնակեալ, վեր ի վերոյ իմն հաւանութեամբ զայսպիսի զկարծիս հաստատեն: Քանզի այն, որ ի սրտին դնէ զառաջնատրութիւնն, զըստ տեղոյն դիրն նորա առնէ բանին հաստատուն նշանակ, վասն թուելն իմն զմիջինն ամենայն ի մարմնոյն ունելով սորա զվայրն: Իբր թէ յառաջական ախորժութեան շարժման դիրաւ ի միջոյն առ ամենայն մարմինն բաժանեցելոյ, եւ այսպէս ի ներգործութիւնն յառաջ խաղացեալ: Եւ վկայ առնէ բանիս զտրտմական եւ զսրտմտական մարդոյն տրամադրութիւն, վասն զի թուին իմն այսպիսի ախտք ընդ ինքեանս շարժել զմասնս զայս առ սովոր ընդելութիւնն: Իսկ որ զխելսն զատուցանեն բնակութիւն խորհրդոյն, իբրեւ դղեակ իմն ամենայն մարմնոյն զգլուխն պարգեւեալ ի բնութենէն, ասեն, և բնակել ի սմա իբրև թագաւոր իմն միտք, իբրեւ հրեշտակաւք իմն եւ կամ պաշտպանաւք՝ զգայութեամբքն շուրջ զիրեաւ սպասաւորեալ: Նշանակ եւ սոքա այսպիսի կարծեացն առնեն զանցանելն ի հաստատուն գոյութենէն խորհրդոցն զայնոցիկ, որոց այրեցեալ եղեն խելապատակքն, եւ յանգիտութեանն վայելչականին լինել այնոցիկ, որք արբեցութեամբն խելագարեալք լինին» (ՏՄԿ, էջ 87, տող 5-20, էջ 88, տող 1-6):

Եթե գիտական առումով Նյուսացու ժամանակներում այս բանավեճն արդեն ավարտված պիտի համարվեր, աստվածաբանական տեսանկյունից այն դեռ հեռու էր վերջնական լուծումից: Աստվածաբաններից շատերը, վկայակոչելով Սուրբ Գրքը, հաստատում էին Արիստոտելի դրույթի ճշմարտացիությունը, սակայն Նյուսացին կասկածի տակ է առնում նրանց փաստարկները. «Ջիթէպէտ եւ զԳիրս ոմանք մեզ առ այս առաջի արկանիցեն, ի սրտի զառաջնորդ իշխանականն վկայելով, ոչ առանց հարցի խուզման զբանն ընկալցուք: Քանզի որ զսիրտ յիշեաց, եւ զերիկամունս յիշեաց, ասելով՝ «քննէ զսիրտս եւ զերիկամունս Աստուած»: Ապա ուրեմն՝ կամ երկոցունց եւ կամ ոչ ոմեք ի նոցանէ՝ զիմանալին արգելեալ փակեն: Եւ բթել իմաստական գործոյն եւ կամ բնաւ ամենեւին անգործ լինել՝ յորակութեան տրամադրութեան մարմնոյն ուսեալ, ոչ բաւական առնեն հաստատուն նշանակ ի տեղոջ իմիք զգաւրութիւն մտացն յարգել արկանել, քանզի որք լինին ի վերայ մասանցն խարշմունք, յիւրմէ ընդարձակութենէն արտաքս արգելեալ: Քանզի մարմնական է այսպիսի կարծիքս՝ ոչ կարել յառաջագոյն ըմբռնեցելոյ ամանոյն ի ձեռն ուրումն ի ներքս արկելոց, այլ իմն ի նմա վայր գտանել: Քանզի իմանալի բնութիւնն ոչ ի հասարակութեանն վայրի սիրէ բնակել մարմնոցն, եւ ոչ առաւելեցելոյ մարմնոյն արտաքս մղեալ՝ հանանի» (ՏՄԿ, էջ 91, տող 24, էջ 92, տող 1-15):

Արտահայտելով մեկ այլ կարծիք, որ մոտ էր Օրիգենեսի հայացքներին, նա փորձում էր ապացուցել. «Եթե ոչ ի մասին ումեմն մարմնոյս կապել զմիտսն, այլ ընդ ամենայն զուգագոյն մերձենալ՝ կշռապէս ընդ բնութիւնն ստորակայի մասինն՝ գործելով զշարժումն» (ՏՄԿ, էջ 111, տող 6-8): Այսպիսով, ըստ Նյուսացու՝ միտքը (νοῦς) գտնվում է ոչ թե որևէ առանձին օրգանում, այլ ներթափանցում է ամբողջ մարմինը (հիշենք, որ այս գաղափարը արտացոլում էր նաև ստոյիկյանների պատկերացումները Λόγος - νοῦς-ի ամենագո լինելու մասին):

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի այն բաժիններում, որոնք նվիրված են մարդու կազմախոսության ու բնախոսության հարցերին, և հատկապես վերջին՝ «Տեսութիւն իմն բժշկականագոյն յաղագս մարմնոյս մերոյ կազմածի սակաւութ» գլխում, հեղինակը հաճախ դիմում է Գալենի «Մարդու մարմնի մասերի նշանակության մասին» (De usu partium corporis humani) գրքին:

Սակայն բացի «գրքայինից», Նյուսացին ճանաչում էր նաև մարդու մարմնի կառուցվածքի ուսումնասիրության փորձառական եղանակը, այն է՝ դիահերձումը ու կենդանահատումը, որը Գալենից առաջ կիրառվում էր դասական շրջանի Ալեքսանդրիայում: Այսպես, նա գրում է. «Այլ զճշգրիտ մարմնոյս մերոյ կազմած ուսուցանէ իւրաքանչիւր ոք զինքն, յորոց տեսանին եւ կեայ եւ զգայ՝ զառանձինն բնութիւնն իւր վարդապետ ունելով: Գոյ մարթ եւ զայն, որ ի զիրս գործասիրութեամբ գրեցաւ յայդպիսի իմաստնոց յաղագս սոցայն պատմութիւն՝ ի ձեռն առեալ՝ զամենայն ինչ հաւաստի ուսանել: Յորոց ոմանց որպէս զհարդ ունի *տեսութիւնն* [դիրք] իւրաքանչիւր ոք, որ ի մէզն է, ի ձեռն հերձելոյ եւ պատառման ուսան» (ՏՄԿ, էջ 197, տող 4-11): Որ Նյուսացուն բոլորովին խորթ չէր այդպիսի փորձառական մոտեցումը, պարզ երևում է հետևյալ տողերից. «Եւ զի մեծ իմն մատուցանեն առ ի կեանս խելքն, յայտնապէս որ ընդդէմն դէպք եղև լինել յայտն է: Քանզի եթէ խոցումն ինչ եւ կամ պախումն, որ զնովաւ միզն իցէ կրեսցէ, անդէն վաղվաղակի զհետ երթայ ախտին մահ» (ՏՄԿ, էջ 202, տող 18-20, էջ 203, տող 1): Նման մի դեպք Գալենը նկարագրել է «Մարդու մարմնի մասերի նշանակության մասին» գրքում (58, c.18):

Նյուսացին մեծ հետաքրքրություն էր տաժում ուղեղի հիվանդությունների, ինչպես նաև քնի ու երագների ուսումնասիրության հանդեպ: Այդ խնդիրը ժամանակին հետաքրքրել էր նաև Պլատոնին ու Արիստոտելին: Պլատոնը նույնիսկ մարգարեական շնորհը և մարգարեական երագները վերագրում էր հոգու այն մասին, որ գտնվում է լյարդում (19, 68): Նյուսացին, մի կողմ դնելով մարգարեական երագների հարցը, քննարկում էր քնի բնախոսությունը և երագների, որոնց թվին նա դասում էր նաև հոգեկան հիվանդների զառանցանքները, կապը հիվանդության հետ: Նա գրում է. «Իսկ մեք ասեմք՝ միայն պարտ է զխոհականն եւ զգոյացեալ խորհրդոցն գործաւորութիւն ի միտսն ընկենուլ: Իսկ զըստ քնոյն զերեւութուտ բարբաջմունս նմանութիւնք իմն զըստ մտացն գործաւորու-

թեան, կարծեմ [ան] *բանատրագունի* ոգոցն տեսակի ըստ դէպ լինելոյ ստեղծանիլ» (ՏՄԿ, էջ 102, տող 15-19):

Ապա Նյուսացին տալիս է հոգեկան հիվանդությամբ տառապող մի անձի գառանցանքի վերլուծությունը՝ անձի, որին բուժել և խնամել էր ինքը: Մրանից իսկույն պարզ է դառնում նրա գործնական բժշկությամբ զբաղվելու ոչ պակաս ուշագրավ փաստը. «Բայց գիտացի եւ այլ եւս այնոցիկ, որ ըստ քնոյն առակաց պատճառք են, բժշկելով զոմն [ի մերձաւորաց] *ի պատճառաց* [մտաբախտութենէ] ըմբռնեցելոյ, որ ծանրացեալ կերակրով, աւելի քան զմարմնոյն կար մատուցեալ նմա, գոչէր առ այնոցիկ, որ շուրջ զնովաւ կային, ըստգտանելով, եթէ քաղիք աղբով լցեալ դիցեն ի վերայ նորա: Եւ ահա մարմնոյ նորա ի քիրտն փութացելոյ՝ *խնդրէր* [մեղադրէր] յայնցանէ, որ մերձն կային, ջուր ունել պատրաստ, յորոյ վերայ թանալ կալով, եւ ոչ դադարէր գոչելով, որպէս զի վճար այսպիսի պարսաւանաց զպատճառս իրացն մեկնեաց: Քանզի յանկարծարէն միանգամայն քիրտն բազում հոսեցաւ ի մարմնոյն, եւ որովայնն ապականեալ, զի քաղրթին ծանրութիւն նշանակեաց: Որ իբրու բթեալ էր [ախտիւ] ի լռչութենէն, վշտանայր բնութիւն, հաւանեալ ընդ ախտի մարմնոյն, այնոր նեղերն ոչ անզգայութեամբ ընկալեալ, հաւաստի յայտնել զտրտմեցուցանելին յայտնապէս վասն ի հիւանդութենէն յաճման, ոչ զարութիւնս ստացեալ: Մորա ըստ արժանոյ, եթէ ոչ ի հիւանդութենէն, այլ այն, որ ըստ բնութեանն է քուն խորհրդական ոգոցն, լուսաւորեցաւ երազ, որ այսպէս տրամակայանայր լինէր. ջուրք՝ ի քրտանն հոսմանէ, քաղրթին ծանրութեան՝ ըստ կերակրոյն ծանրութիւն վշտագինս նշանակելով: Այս եւ բազմաց, որք բժշկական արուեստի վարժեալք են, թուի՝ ըստ ախտիցն զանազանութեան եւ երազոցն երեսք վշտացելոցն լինել: Այլք այնոցիկ, որոց ախտնդանքն ախտացեալ են, եւ այլք, որոց չարչարեալ են իսելապատակքն: Եւ այնոցիկ, որք ի ջերման՝ դարձեալ այլ իմն, և այնոցիկ, որ ըստ մաղձոյ, եւ որք *շղչով* [լորձով] չարչարեալք են՝ ոչ նոյնք: Եւ բազմամաղիցն և հաշելոցն՝ դարձեալ այլք» (ՏՄԿ, էջ 108, տող 7-22, էջ 109, տող 1-12):

Նյուսացին, ինչպէս տեսնում ենք, այստեղ բացահայտում է գառանցանքի սիմվոլիկ նշանակությունը՝ կապված հիվանդության ախտանիշների հետ: Չմոռանանք, որ նույնիսկ ժամանակակից բժշկության մեջ առկա են նման գիտական մոտեցումներ, օրինակ՝ ավստրիացի հոգեբույժ Ջիզմունդ Ֆրոյդի հոգեվերլուծության տեսությունը մեծ կարևորություն է տալիս երազների քննությանը (44, p. 516):

Ընդհանուր առմամբ Նյուսացու հետաքրքրության կենտրոնում գտնվում էր մարդու մտավոր կարողությունների բազմակողմանի ուսումնասիրությունը: Նա հատուկ գլուխ է նվիրել զգայարանների գործունեությանը՝ ապացուցելու համար, ինչպէս այդ արել էր ժամանակին Արիստոտելը «Ոգու մասին» գրքում (54), «Ձի ի ձեռն զգայութեանց միտքն ներգործին»: Նա բացահայտում էր, ինչպէս «անտեսանելի մտացն բնութիւնն» տեսանելի, կամ ավելի շուտ լսելի է

դառնում որպես «բան»: Գալենի նման՝ նա կարևորում էր այն օրգանների կառուցվածքի ու աշխատանքի հետազոտումը, որոնք իրենց մասնակցությունն են բերում ձայնի վերարտադրման գործընթացին՝ թոքերին, կոկորդին, ձայնալարերին, բերանի խոռոչին և այլն: Մեծ վարպետությամբ Նյուսացին ներկայացնում է վերոհիշյալ օրգանների ներդաշնակ աշխատանքը, որի արդյունքում ստեղծվում է ձայնը և անտեսանելի աստվածային Միտքը մարմնավորող Բանը:

Նա գրում է. «Եւ որպէս զի ոք, թէ երաժշտական արուեստի հմուտ իցէ, առանձինն յախտէ ոչ ունիցի ձայն, եւ կամեցեալ յայտնի առնել զհանճարն, աւտարաց նուագեսցէ ձայնիւք՝ ի ձեռն փողոց կամ քնարաց հրապարակացոյց առնելով զարուեստն: Այսպէս եւ մարդկային միտք, ամենապատիկ իմաստիցն գտակ եղեալ, այնոցիկ, որոց ոչն կարեն ի ձեռն մարմնական զգայութեանցն լսել մերկ հոգւով, ցուցանեն զմտացն գյարձակմունս: Չոր արինակ յարմարող արուեստագէտ ոք *անշնչից* [շնչաւորից] գործեաց, ընդհարկանելով՝ ի ձեռն սոցայն հնչմանց յայտնի առնէ զծածկեալ իմաստն: Եւ խառն իմն է երաժշտականութիւնն առ ի մարդկան գործին՝ փողոյ եւ քնարի իբրև երգակցութեամբ իմն ըստ նմին նոյնութեանց ընդ միմեանս բարբառեցելոց: Քանզի հագագն ի ձեռն շնչափողոցն ի շնչակալ անաթոցն ի վեր մղելով՝ յորժամ յարձակումն այնր, որ բարբառին առ ձայնն ոլորեալ, ուժգնացուցէ զմասն ներքուստն, ընդ նմա հարեալ բախմամբք, որք բոլորակապէս զփողածես զայս հասեալ, կալան անցս գնացից: Քանզի նմանեցուցանէ իմն, զի ի ձեռն փողոյն եղեալ ձայն, աճառապատ արտուութեանն զանցիւք շուրջ զիրեւ հնչեցեալ: Եւ վերնահարկքն զի ներքուստն բարբառ կայ մնայ ընդունել, որ ըստ նմանէ թափուր երկուորեակ փողովք այնոցիկ, որք յռունգն ձգտեալ հասանեն: Եւ իբրեւ թեփոյ իմն առանցութեամբ, որ մերձ ի *պարանոցն* [մաղն] է խաղճախտղճն, զձայնն *սուարգեշեալ* [ընդ երկու բաժանեալ]՝ գոչաւորագոյն զգոչումն գործէ: Եւ այտք, եւ լեզու, որ զկոկորդին է կազմած, ըստ որում ստտրղն եւ ի վայր կոյս թուլանայ հովտաբար, եւ շեշտ ոլորելով ձգտի: Չայս ամենայն, զայն որ յաղիսն կնտնտոցին շարժումն որոշեալ *երգեսցէ* [0], պայծառապէս եւ բազմարինակաբար ի ժամանակի հանդերձ բազում արագութեամբ շրջեալ՝ յարմարեալ առ ի պէտս գոլորսն: Եւ շրթանց բանալ եւ կափուցանել զնոյն առնէ այնոցիկ, որք ի ձեռն մատանց արգելուն զփողոյն զհագագ *ըստ յարմարութեան* նուագի» (ՏՄԿ, էջ 77, տող 16-21, էջ 78, 79, տող 1-2):

Հետաքրքրական է նշել, որ Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Հյուպատոսի կողմից թարգմանված ու միջնադարում հաճախ Գրիգոր Նյուսացուն վերագրված (14, էջ 53-58; 21, էջ 57-58; 23; 65) Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյն» գրքի «Յաղագս ներտրամադրեցելոյ եւ յառաջ բերեցելոյ բանի» գլխում նույն ոգով, սակայն ավելի համառոտակի քննարկվում է այս հարցը: Նեմեսիոսը գրում է. «Իսկ յառաջ եկեալն բան ի ձայնին եւ ի խօսան ունի

զներգործութիւնն: Եւ են գործարանք ձայնի բազումք. քանզի որք եւ ի միջակողսն ի ներքուստ կուսէ մկունք և ախոնդանքն, եւ թոքք, եւ փողերակքն, եւ խոչափողն, եւ յայսցանէ մանաւանդ նեարդատեսակքն, եւ ընդ կրունկն դարձեալ երակքն, եւ լեզուակք, եւ ամենայն որք շարժեն զայսոսիկ մասնկունք, մկունքն՝ որոյ ի բնութենէն են գործարանք: Իսկ խօսիցն բերանն, քանզի ի սմաստեղծանի եւ ձևանայ, եւ որպէս կերպարանի իմն բառն. լեզուին եւ որկորին՝ զկնտնտոցին օրինակ ունելով, եւ վերնատանն՝ հնչման, իսկ ատամանցն եւ որակի իմն բացման բերանոյն, որպէս ի քնար, զաղեսացն լնով զպէտս, կատարելով իմն եւ շրնգանցն առ ի գեղեցկածայնութիւն ինչ կամ ի շարածայնութիւն, որպէս եւ յայտ է յերգեցողաց» (15, էջ 86-87):

Այս երկու գրեթե նույն միջավայրում և ժամանակաշրջանում ստեղծված երկվորյակ գործերի հոգեհարազատությունը (բացառված չէ նաև, որ Նեմեսիոսը օգտվել է Նյուսացու գրքից) պարզ երևում է լյարդի, սրտի և ուղեղի բնատուրքայանը նվիրված գլուխներում: Անշուշտ, նրանց հիմքում ընկած է եղել Գալենի ֆիզիոլոգիական ուսմունքը (44, 46): Ըստ վերջինիս՝ լյարդում աղիներից ստացված սննդանյութերից գոյանում է այսպես կոչված «հում» արյունը, որը, հազենալով բնական պնևմայով, հոսում է երակներով դեպի մարմնի օրգանները՝ օժտելով դրանք սնվելու և բազմանալու կարողությամբ: Այդ «հում» արյան միայն մի փոքր մասն է հասնում սրտի աջ փորոքը, ապա սրտի միջնորմի անցքերով (որոնք իրականում գոյություն չունեն, այլ լոկ Գալենի երևակայության արդյունք էին), մտնում ձախ փորոք և, հազենալով կենդանական պնևմայով, զարկերակների կամ շնչերակների միջոցով մատակարարում բոլոր օրգանները՝ օժտելով դրանք գործելու կարողությամբ: Չարկերակային արյան այն մասը, որը մատակարարում էր ուղեղը, ըստ Գալենի, այստեղ հազենում էր շնչական պնևմայով և, անցնելով նյարդերի միջով, իրականացնում նյարդային համակարգի բարձրագույն պրոցեսները, որոնք կապված են զգացողության, շարժողության և մտածողության հետ: Ուստի Գալենյան ֆիզիոլոգիական ուսմունքում դեռ գոյություն չունեին ընդհանուր արյան շրջանառության գաղափարը: Ըստ այդմ գոյություն ունեին միայն իրարից անջատ երկու անկախ համակարգ՝ երակայինը, որի կենտրոնը համարվում էր լյարդը, և զարկերակայինը, որի կենտրոնը սիրտն էր: Միայն հազար տարի անց արաբ գիտնական Իբն ալ-Նաֆիսը, ապա՝ նրանից համարյա 300 տարի հետո, իսպանացի Միգել Սերվետը և իտալացի Ռեալդո Կոլումբոն հայտնագործեցին արյան փոքր շրջանառությունը, ապացուցելով, որ երակային արյունը ոչ թե ուղիղ անցնում է աջ սրտից ձախը, այլ կատարում շրջապտույտ թոքերի միջով: Իսկ արյան շրջանառության ամբողջական պատկերը պարզ դարձավ միայն XVII դարում շոտլանդացի գիտնական Վիլյամ Հարվեյի փորձերի (44, p. 211-216):

Հարց է ծագում՝ արդյո՞ք կարող էր Գալենյան ֆիզիոլոգիան, որ անփոփոխ մնաց գիտության մեջ ողջ միջնադարում (չմոռանանք, որ Իբն ալ-Նաֆի-

սի հայտնագործությունը երբեք լայն ճանաչում չստացավ), որևէ առաջընթաց ապրել Նյուսացու կամ Նեմեսիոսի վերոհիշյալ աշխատություններում: Անվանի հայ բժշկապատմաբան Լևոն Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» գրքում նշում է, որ Նեմեսիոսի երկի եվրոպացի հրատարակիչներից մեկը (ցավոք, անունը նա չի հիշատակում) այն կարծիքին է եղել, թե Նեմեսիոսին հայտնի էր արյան շրջանառության գյուտը (65, 66): Նույն ենթադրությունները ժամանակ առ ժամանակ արվում են և Նյուսացու գրքի վերաբերյալ:

Ուստի փորձենք զննել այս տեսանկյունից վերոհիշյալ աշխատությունները՝ սկսելով Նեմեսիոսի գրքի «Յաղագս շնչերակաց» ԻԴ գլխից: Այստեղ ասված է. «Շնչերականն գորութիւն՝ կոչի եւ կենդանական գորութիւն. զսիրտն ունելով սկիզբն եւ մանաւանդ զճախակողմեանն նորա փորուած՝ զշնչականն կոչեցեալ. զբնաւորն եւ զկենդանականն ջերմութիւնն բաշխէ ամենայն մասանց մարմնոյ՝ ի ձեռն շնչերակացն, որպէս եւ լեարդն՝ ի ձեռն երակացն զկերակուրան: Քանզի ջեռեալ սիրտն արտաքոյ բնութեանն՝ անդէն եւ բոլոր կենդանին արտաքոյ բնութեան ջեռնու, եւ ցրտացեալ՝ ցրտանայ. քանզի կենդանականն շունչ ի սմանէ՝ ի ձեռն շնչերակացն ընդ ամենայն մարմինն սփռի: Եւ ի միասին բաժանին՝ որպէս երեւին միմեանց, որպէս երեքս այտոքիկ՝ երակ, շնչերակ, ջիղ, յերիցն սկզբանց՝ որք կարգաւորեն զկենդանին. ի գլխոյն՝ ի սկզբանէն շարժութեան եւ զգայութեան՝ ջիղ, ի լերդէն՝ յիսկզբանէն արեան եւ կերակրանէն՝ քերակ, ի սրտէն՝ ի սկզբանէն (վերականգնուծը մերն է՝ Ս.Վ.) քերականականին՝ շնչերակն, աման շնչոյն: Եւ ի միասին գոլով՝ գառ ի միմեանց օգտութիւն ընդունին. քանզի եւ երակն կերակուր բաշխէ ջղին, եւ շնչերակն հաղորդեցուցանէ զերակն՝ ջերմութեան բնաւորականի եւ շնչոյն կենդանականի: Ուստի ոչ զշնչերակ է գտանել՝ առանց նորք արեան, եւ ոչ զերակ՝ առանց շնչոյ շոգետեսակի: Եւ տարորոշի ուժգնակի եւ ամփոփի շնչերակ՝ ըստ յօդման իմն եւ բանի՝ սկիզբն ունելով շարժութեան ի սրտէն, այլ տարորոշեալ յառընթերցն երակաց քարշէ բռնութեամբ գնուրբն արիւն, որ վերածխեալ՝ կերակուր լինի կենդանականի շնչոյն, իսկ ամփոփեալ՝ զբալատեսակն՝ որ յինքեան՝ թափէ՝ ի ձեռն ամենայն մարմնոյն եւ անյայտիցն վտառից, որպէս ի ձեռն բերանոյն եւ ռնգացն՝ սիրտն զլորձատեսակն ի շնչելն ի բաց մղէ» (15, էջ 103-104):

Ինչպես տեսնում ենք, երեք գլխավոր օրգանների՝ ուղեղի, սրտի եւ լյարդի բնախտությունը Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» գրքում լիովին համապատասխանում է Գալենյան ֆիզիոլոգիական տեսությանը: Ինչ վերաբերվում է «Եւ տարորոշի ուժգնակի և ամփոփի շնչերակ՝ ըստ յօդման իմն և բանի՝ սկիզբն ունելով շարժութեան ի սրտէն» նախադասությանը, ապա այստեղ խոսքը ոչ թե արյան շրջանառության մասին է, այլ լոկ շնչերակագարկի՝ կապված սրտի բարախման հետ, որ, անշուշտ, ծանոթ էր Գալենին:

Նույն պատկերը առկա է նաև Գրիգոր Նյուսացու գործում, սակայն կերտած առավել խորությամբ, նրան բնորոշ ինքնատիպությամբ ու գեղարվեստա-

կան մեծ ուժով ու վարպետությամբ. «Քանզի աղբերք արեանն, որ է լեարդն, գայն որ ի ձեռն կերակրոյ տուրն է, ի ներքոյ եղ: Քանզի այն, որ յետոյն մտանէ միշտ ի ձեռն սորա, զարեանն աղբիւրս բղխել ի լերդէ անտի կազմէ, որպէս ի լերին ձիւն ի ձեռն իւրոյ խոնաւութեանն, որ ընդ լերամբք աղբիւրք են, աճեցուցանէ, խորութեամբն զիւր խոնաւութիւնն ի խոնարհ կոյս յերակսն ձգելով: Իսկ որ ի սրտին շունչն է, ի ձեռն մերձատրին մտանէ աղոյն, որ կոչի թոք: Եւ է օդոյ ընդունիչ ի ձեռն այնր, որ կայ ի մնա շնչաբեր երակն այն, որ ի բերանն կոյս ձգի զարտաքին շունչն, տալով եւ առնլով յինքն ձգեալ, որով ըստ միջոցին զսիրտն ի ներքս պատեալ, ըստ նմանութեան մշտաշարժ հրոյն ներգործութեան, հանապազ եւ սա շարժելով, որպէս ինչ առնեն ի դարբնոցս փուրն: Քանզի ձգէ առ ինքն ի մաւտակայ շնչոյն [թոքոյն], լնլով որոշմամբ մեկնելոյ ի միմեանց զփոթութիւնսն: Եւ հրուտ նորա զովսցուցանելով [բորբոքեցուցանելով] մերձաւոր շնչաբեր երակաւքն շնչէ: Եւ գայս առնելով ոչ դադարէ այն, որ արտաքոյ որոշման զատութեանն է, յիւր ի փոթուածսն ձգելով, իսկ որ առ յիւրմէն է, ի ձեռն ընդ միմեանս հարութեամբք շնչաբեր երակացն ի ներքս մուծանէ: Որ ինձ թուի, եւ ինքնեկի այսր տուրևառիկ շնչոյս պատճառք լինել մեզ: Քանզի բազում անգամ կարատեսալք [միտքն] անպարապ է այլոցն եւ կամ ամենեւին դադարեալ լինի, լուծեալ ի քուն մարմնոյն, իսկ տուրեւառութիւն արդոյս ոչ դադարէ՝ եւ ոչինչ գործակից եղեալ յայս կամատրութեան» (ՏՄԿ, էջ 204, տող 9-20, էջ 205, տող 1-12):

Շեշտելով գլխաւորեղի և ընդհանուր առմամբ նյարդային համակարգի դերը օրգանիզմում, ինչպէս այդ արել էր նրանից առաջ Գալենը, Նյուսացին գրում է. «Եւ է սորա ըստ խելապատակին, եւ որ ի խելսն տեսանի, յորմէ ամենայն յաղիցն խաղալիք եւ ամենայն մկանցն ձգտումն, եւ ամենայն կամաւոր յաւժարական շունչ, յիւրաքանչիւր մասունսն ի վերայ առաքեալ, գործաւոր եւ շարժուն գիողեղէն զմեր զպատկերս, իբրեւ ի մեքենայիցն իմն, ցուցանէ: Քանզի ջերմոյն մաքրագոյնն եւ հրոյն [գիջոյն] նրբագոյնն՝ յերկոցունց զարութենէ ի ձեռն խառնուածոյ իմն եւ ընդ միմեանս հարկանելոյ միաւորեալք, սնուցանէ եւ զոյացուցանէ ի ձեռն յարմարման [զոլոշեացն] զխելսն» (ՏՄԿ, էջ 210, տող 8-16):

Այդուհանդերձ դժվար է պատկերացնել, որ վաղ բյուզանդական շրջանում, երբ ստեղծվեցին Նյուսացու և Նեմեսիոսի աշխատությունները, հնարավոր լիներ զարգացնել Գալենյան ուսմունքը փորձառական ճանապարհով, այն պարագաներում, երբ վաղուց ի վեր խստիվ արգելված էին դիախերձումը և կենդանահատումը: Սակայն չմոռանանք նաև, որ մասամբ այդ գործերի շնորհիվ պահպանվել և կորստից է փրկվել հին հույն բնափիլիսոփաների ու բժիշկների գիտական ժառանգությունը, որը սակայն իսկական զարգացում ապրեց միայն Վերածննդի դարաշրջանում: Ուստի ամբողջությամբ վերցրած՝ վերոհիշյալ հեղինակների աշխարհայացքը կարելի է բնութագրել որպէս դասական հունա-

հռոմեական գիտական մտքի միաձուլում քրիստոնեական մտածելակերպի հետ, մի մտածելակերպ, որ ընդհանուր առմամբ բնորոշ էր միջնադարին (47, *Λυρσε*), իսկ Նյուսացու պարագայում նաև համալրվում էր Աստծո, Բնության, Գեղեցկության ու Արվեստի հանդեպ ունեցած պաշտամունքով:

Ի դեպ անդրադառնալով արվեստի տարբեր ոլորտներին, լինի դա գեղարվեստական խոսք, երգարվեստ, լարային երաժշտություն, ինչպես նաև գեղանկարչություն կամ քանդակագործություն, Նյուսացին իրեն դրսևորել է որպես խորաթափանց արվեստագետ, որին հայտնի էին յուրաքանչյուր ոլորտի գաղտնիքները: «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործը թարգմանելիս Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուպատոսը, անկասկած, զգացել են նրա «քաղցրաբան» լեզվի գեղեցկությունը, ուստի տեղ-տեղ հրաժարվելով հունաբան դպրոցի բառացի թարգմանության սկզբունքից, կարողացել են գրաբարի ընձեռած հարուստ հնարավորություններով վարպետորեն վերարտադրել Նյուսացուն հատուկ պատկերավոր մտածողությունը և նուրբ գեղարվեստական ճաշակն ու ոճը: Այսպես, օրինակ՝ անդրադառնալով արարչագործությունից հետո երկրի հրաշալիքներին, Նյուսացին բանաստեղծի և արվեստագետի ոգեշնչմամբ ստեղծում է հետևյալ սքանչելի պատկերը (PG 44,132A,B), որը հայերեն թագմանության մեջ չի կորցրել իր հմայքը. «Եւ լի էր *լերամբք* [բերիւք] երկիր՝ ի միասին միանգամայն ծաղկաք զպտուղս բուսացեալ: Եւ լի մարգբ եւ բուրաստանք, որ ինչ միանգամ ի նոսա բնութիւն է լինել: Եւ ամենայն ողունք, *ձորք եւ ծործորք, եւ սարք, եւ ամենայն, որ ինչ միանգամ կողմանաւոր է եւ զանիկող, եւ որ ինչ միանգամ ի հովիտս նորափթիթ դալարի:* Եւ բազմապատիկ ծառոցն *ժամանակ* [բերիւք] պսակեալ էր արդի եւս յերկրէ ի վեր բուսեալ եւ անդէն առ կատարեալ գեղեցկութիւնն հասեալ: Եւ խնդայր եւ զուարճացեալ էր ամենայն ինչ ըստ վայելչութեան եւ խայտայր, հրամանով Աստուծոյ կենդանանեալ, արատականք յանդեայս եւ յազգս իւրաքանչիւր՝ ի թփուտ մացառս այսր-անդր ընթանալով: Երաժշտական թռչնոցն երգովք ամենայն վայրք հնչէին, ամենայն, որ ինչ միանգամ թաւ եւ տերեւախիտ էր եւ հովանուտ» (ՏՄԿ, էջ 49, տող 1-14): «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի էջերում, ինչպես և Նյուսացու այլ գործերում, կարծես վերակենդանանում է իր հայրենի Կասպադովկիայի բնության անզուգական գեղեցկությունը:

Ինչ վերաբերվում է Նյուսացու դարաշրջանի մտածելակերպին, ապա այն իր ազդեցությունն է թողել մի շարք կարևոր հարցերի, այդ թվում «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում օգտագործած տերմինաբանության և աղբյուրների վրա: Դասական շրջանի փիլիսոփայական եզրերն այստեղ հաճախ գուգակցվում են նոր՝ աստվածաբանական գաղափարներ արտահայտող եզրերի հետ, իսկ դրանցից շատերը լցվում քրիստոնեական հասկացություններին հատուկ իմաստով, ինչպես հին տիկերը՝ նոր գինով (ըստ ավետարանական խոսքի):

Այսպես, օրինակ՝ ժամանակի գաղափարը Պլատոնի և նորալատոնականների գործերում արտահայտված էր հունարեն *καιρός* (ժամանակ և *χρόνος* (ամանակ) եզրերով, ըստ որում առաջինը օգտագործվում էր պահի, կարճ ժամանակահատվածի, իսկ երկրորդը՝ տևողական շրջանի համար: Համաձայն Բարսեղ Մեծի ժամանակի տեսության, սրանք բնորոշ էին նյութական աշխարհին իր անցյալի, ներկայի և ապառնիի կատեգորիաներով, համալրվելով *αἰών* (դար) եզրով, որը հատուկ էր հրեշտակների դասին և ենթակա որոշ փոփոխության՝ ի տարբերություն Աստծուն հատուկ անփոփոխ հավիտենությանը (41, *Λυρβε*):

Անդրադառնալով անտիկ եզրերի քրիստոնեացման հարցին Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն», Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» և այլ հեղինակների երկերում՝ Մ. Շիրինյանը «Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը» ուսումնասիրության մեջ գրում է. «Արիստոտելի և նրա հետևորդների գրվածքներում բազմիցս քննարկված բնության չորս տարրերը և դրանց «նուրբ», «թանձր» կամ «լայն» հատկանիշները փոխառվել և յուրովի են մեկնաբանվել քրիստոնյա հեղինակների կողմից: Այսպես, հրո և օդի նուրբ բնությունն ու շարժիչ ուժ լինելը վերագրվում է նաև ոգուն և հոգուն: Ըստ որում, օդի և հոգու հարաբերակցումը, համաձայն մեջբերված օրինակների, կարելի է արտահայտել օդ-հողմ-շունչ-ոգի-հոգի բանաձևով» (16, էջ 308):

Այս իրողությունը հաստատվում է նաև «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում օգտագործված աղբյուրներով, ըստ որում եթե մեջբերումները Հին ու Նոր Կտակարաններից, որոնք մեծ մասամբ ազատ և նույնիսկ վերապատմողական բնույթի են, բազմաթիվ են ու շռայլ, ապա ավելի սակավաթիվ են հին հունական և հռոմեական հեղինակների գործերի հիշատակումները, ինչն ընդհանուր առմամբ սովորական երևույթ էր նշված ժամանակաշրջանում: Բացառություններ, անշուշտ, կային. օրինակ, հիշենք Նեմեսիոս Եմեսացուն, որը «Յաղագս բնութեան մարդոյն» երկում չի խուսափել հույն բնափիլիսոփաների անունները վկայակոչելուց (15, 37, 65):

Ինչ վերաբերվում է Նյուսացուն, ապա խոսելով նորալատոնականների ոգիների վերաբնակեցման (*μετεμψύχωσις*) տեսության մասին, որը գալիս էր Պլատոնից, նա գրում է. «Ինձ թուի, թե ոչ արտաքոյ առաջիկայի մեզ իրացս է հարցանել փորձել գայն, որ յերկբայս եւ կեղակարծելի է եկեղեցեաց յաղագս ոգոց եւ մարմնոց: Քանզի ոմանց թուի յառաջ քան զմեզ, որոց եւ «Յաղագս սկզբանց» գործեցաւ բան քննութեան, որպէս դաս իմն ի գատ ի քաղաքի գոզիսն յառաջագոյն գոյանալ ասել, եւ առաջի կալ եւ անդ չարութեան եւ առաքինութեան ցոյցք: Եւ կայ մնայ ի բարոջ ոգին առ ի մարմինն շաղապատելոյ՛ անփորձ: Ապա եթէ ի բաց անկցի ի բարոյն կցորդութենէ, յայս աշխարհ կենաց սողոսկել անկանել եւ այսպէս ի մարմին լինել» (ՏՄԿ, էջ 183, տող 7-16):

Այստեղ Նյուսացին անդրադառնում է Օրիգենեսի «Յաղագս սկզբանց» հայտնի աշխատությանը՝ առանց նշելու հեղինակի անունը: Քննադատելով նրա հայացքները (ինչը վկայում է, որ նա կուրորեն չէր հետևում հեղինակություններին), նա միաժամանակ անընդունելի է համարում ու ծաղրում մեկ այլ հայտնի հին դասական հեղինակի՝ բանաստեղծ, բժիշկ ու բնափիլիսոփա Էմպեդոկլեսի (մ.թ.ա, V դ.) մեզ չհասած «Յաղագս բնութեան» պոեմի հետևյալ տողերը ոգիների վերաբնակեցման մասին. «զոր ասեն, զոմն առ նոցա իմաստնոցն ասել, թէւ այր եղեւ, նոյն եւ կնոջ մարմին զգեցաւ, եւ ընդ հաս թռեաւ, եւ ի թուփս բուսաւ, եւ ջրային եհաս կենաց: Ոչ հեռի ի ճշմարտութենէ, ըստ իմում ընտրութեանս բերեալ լինի, որ յաղագս իւր զայսոսիկ ասէ: Քանզի արդարեւ զորտից ոմանց եւ կամ ճայից կոչման, եւ կամ անբանութեան ձկանց, եւ կամ կաղնեաց անզգայութեան արժան է զայսպիսի գաւրէնս՝ մի հոգին ասել ընդ այսքանս անցանել» (ՏՄԿ, էջ 185, տող 5-12): Ի դեպ, Նյուսացին չի հիշատակում ոչ միայն Օրիգենեսի և Էմպեդոկլեսի, այլ նաև Պլատոնի, Արիստոտելի, Պտղոմեոսի, Հիպոկրատի, Դիոսկորիդեսի և Գալիանոսի անունները, որոնց գրքերը նա վկայակոչում է այս կամ այլ առիթով: Հավանաբար արդեն զգալի էր մոտավորապես Միջնադարի խիստ շունչը...

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատությունը որոշակի ազդեցություն է թողել ոչ միայն աստվածաբանության ու փիլիսոփայության, այլև բնական գիտությունների ու բժշկության զարգացման վրա միջնադարյան Հայաստանում: Նրա ազդեցությունը պարզ զգացվում է Կիլիկյան բժշկական դպրոցի ներկայացուցիչների՝ Աբուսայիդի (XII դ.) «Յաղագս կազմութեան մարդոյ» ու Իշոխի (XIII դ.) «Գիրք ի վերայ բնութեան» երկերում, ինչպես նաև Գրիգոր Տաթևացու (1346-1409) «Գիրք հարցմանց»-ում: Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» երկասիրության հետ միասին այն ուսումնասիրվել ու մեկնաբանվել է Կիլիկիայի, Տաթևի, Երզնկայի կաճառներում և այլուր հայ փիլիսոփաների, բնագետների ու բժիշկների, այդ թվում ԺԳ դարի նշանավոր գիտնական Վահրամ Բաբունու կողմից (21): Այդ հարուստ մեկնողական գրականությունը՝ «Լուծմունք Կազմութեան գրոց» և «Մեկնութիւն Կազմութեան գրոց» վերնագրով պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԳ-ԺԸ դարերի մի շարք գրչագրերում (Հ^մ 55, 59, 621, 626, 1919, 2498 և ուրիշներ): Գեո ավելին. «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկը պարունակող Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի (Հ^մ 469, 470, 620, 2508, 5253) լուսանցքներում և նույնիսկ բուն տեքստում առկա են բազմաթիվ լուծմունքներ:

* * *

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» հայերեն թարգմանության քննական բնագիրը հունարեն սկզբնաղբյուրի (PG 44, 124 D-256 C) հետ համեմատելիս հայտնաբերել ենք ուշադրության արժանի բնագրաբանական հետևյալ երևույթներ՝ 1. հունարեն բնագրի բազմաթիվ բառեր հայերեն թարգմանության մեջ հանդես են գալիս աղավաղված ձևով, 2. հայերեն թարգմանության մեջ հանդիպում են բառեր, որոնք բացակայում են հունարեն սկզբնաղբյուրում 3. հայերեն թարգմանության մեջ առկա են բնագրային բացթողումներ:

Այդ երևույթներից նկատել է նաև Ռ. Թոմսոնը: Համեմատելով Գիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող գործերի հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ (ի դեպ՝ դրանց թարգմանիչները նույն Ստեփանոս Սյունեցին ու Գավիթ Հյուպատոսն էին), «Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite» գրքի առաջաբանում նա գրել է հետևյալը. «Իր թարգմանության մեջ Ստեփանոս Սյունեցին փորձել է հնարավորինս մոտ մնալ հունարեն բնագրին, և այսպիսով հայերեն տարբերակի սխալներից շատերը ուղղակի հետևանք են հունարեն բնագրում առկա ուղղագրական սխալների բառացի վերարտադրման: Իմ անգլերեն թարգմանության նպատակն է առաջին հերթին անդրադառնալ այդ տեքստաբանական պրոբլեմներին» (49, Introduction, p. IX): Մեծ կարևորություն տալով այս հարցին՝ մենք ձգտել ենք ոչ միայն բացատրել առանձին ուղղագրական և այլ քերականական սխալների պատճառները, որոնք հանդիպում են «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հայերեն թարգմանության մեջ, այլ նաև հասկանալ դրանց հետևում թաքնված որոշ օրինաչափություններ:

Առաջին խմբի բնագրային շեղումների վերլուծության արդյունքում պարզվել է, որ դրանք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի: Առաջինը հիմնականում բաղկացած է այնպիսի բառերից, որոնք աղճատվել են դեռևս հունարեն ձեռագրերում: Եվ իրոք, դժվար է պատկերացնել, որ Ստեփանոս Սյունեցին և Գավիթ Հյուպատոսը, որոնց թարգմանությունը ընդհանուր առմամբ բառացի բնույթ է կրում, ինչպես հունաբան դպրոցի այլ գործերի, այդքան հեռանային հունարեն սկզբնօրինակից, կամ էլ նրանց հունարենի իմացությունը անբավարար լիներ:

Այդ խմբի աղճատված բառերին համապատասխանող հունարեն տարբերակները իրենց ձևով հնչակից են հունարեն ճիշտ տարբերակներին, ուստի աղավաղումը տեղի է ունեցել հենց հունարեն ձեռագրում: Բերենք օրինակներ: Հունարեն բնագրում (PG 44, 132A.) ունենք՝ τῶν ὠραίων (բերիք*) բառաձևը, որը սակայն հայերեն թարգմանվել է որպես «վերամբք» (τῶν ὀρώ) (ՏՄԿ, էջ 49, տող 1): Այս երկու բառաձևերը՝ «բերիք» և «վերամբք» հայերենում երբեք չէին կարող շփոթվել, նույնիսկ եթե աղավաղվեին, մինչդեռ հունարենի ὠραίων և ὀρώ -ը այնքան մոտ են ձևական առումով, որ մի փոքր աղավաղման դեպքում

հեշտությամբ կարող էին շփոթվել: Հենց այդ էլ տեղի է ունեցել հունարեն ձեռագրում:

Մեկ այլ օրինակ. հունարեն բնագրի (PG 44, 137C) τὴν ζήτητικὴν (զբննական*) բառածևը, աղավաղված լինելով հունարեն ձեռագրում, շփոթվել է τὴν ζωτικὴν (զկենդանական)-ի հետ և հայերենում դարձել «զկենդանական» (ՏՄԿ, էջ 60, տող 19):

Կամ էլ հունարեն բնագրի (PG 44, 145C.) ὀσείας (եութեանս*) բառածևը, հունարեն ձեռագրերում աղավաղվելով ու շփոթվելով φύσεως (բնութեանս)-ի հետ, հայերեն թարգմանվել է որպես «բնութեանս» (ՏՄԿ, էջ 66, տող 8):

Մեկ այլ օրինակ. հունարեն բնագրում (PG 44, 149A) ունենῆ τὸ στόμα (բերանս*) գոյականը, որը հայերեն տարբերակում (ՏՄԿ, էջ 76, տող 15) հանդես է գալիս որպես «մարմինս» (τὸ σῶμα): Հայերենում այս երկու բառածևերը չէին կարող շփոթվել, մինչդեռ հունարենում τὸ στόμα-ն աղավաղվելով հեշտությամբ կարող էր շփոթվել τὸ σῶμα-ի հետ: Իսկ հունարեն բնագրի (PG 44, 149C) τῶν ἐμψύχων (շնչատրից*) բառածևը աղավաղվել ու շփոթվել է τῶν ἀψύχων (անշնչից)-ի հետ և հայերեն սխալմամբ թարգմանվել՝ «անշնչից» (ՏՄԿ, էջ 78, տող 2):

Մեկ այլ դեպքում հունարեն բնագրի (PG 44, 149D) τὸν ἥθμὸν (ի մաղն*) բառածևը հայերեն թարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 78, տող 16) հանդես է գալիս որպես τὸν ἰσθμὸν (ի պարանոցն): Հայերեն լեզվում «մաղն» և «պարանոցն» հնարավոր չէ շփոթել, մինչդեռ հունարենում τὸν ἥθμὸν-ը հեշտությամբ կարող էր աղավաղվել ու շփոթվել τὸν ἰσθμὸν-ի հետ: Մեկ այլ դեպքում հունարեն բնագրում (PG 44, 157B) ὁ ἥθμός գոյականից կազմված ածականը՝ ἥθμοειδής (մաղածև*) աղավաղվել ու շփոթվել է ἰσθμώδης («պարանոցուտ», պարանոցածև)-ի հետ, որը պատճառ է դարձել հայերեն թարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 89, տող 2) «մաղածև» ճիշտ բառածևի փոխարեն «պարանոցուտ»-ի հանդես գալուն: Նոր հայկազյան բառարանում (ՆՀԲ) վերջինս, ինչպես և «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի մի շարք այլ աղավաղված բառածևեր, ուղղված չեն:

Հունարեն բնագրի (PG 44, 149D) περισχίζουσα (ընդ երկու բաժանեալ*) բառածևը, աղավաղման ենթարկվելով հունարեն ձեռագրում, շփոթվել է περισχουσα (առարգելեալ)-ի հետ (ՏՄԿ, էջ 78, տող 16):

Նմանապես հունարեն ձեռագրում աղավաղվել են մի շարք այլ բառածևեր, օրինակ՝ αἰτιολογία (պատճառագիտութիւն*)-ի աղճատված ձևը շփոթվել է՝ ἀντιλογία-ի հետ (PG 44, 165A) ու թարգմանվել հայերեն որպես «հակառակարանութիւն» (ՏՄԿ, էջ 99, տող 2):

Մեկ այլ դեպքում հունարեն բնագրի (PG 44, 173A) ἡτῆατο (մեղադրէր*) բայի աղճատված ձևը շփոթվել է ἡτέητο (խնդրէր)-ի հետ և հայերեն թարգմանվել որպես «խնդրէր» (ՏՄԿ, էջ 108, տող 13):

Կամ էլ հունարեն ձեռագրերից մեկում (PG 44, 177B) κάδων (տակառաց*) բառածևը, աղավաղվելով և շփոթվելով καιρῶν-ի հետ, հայերեն թարգմանվել է

որպես «ժամանակեայց» (ՏՄԿ, էջ 115, տող 2): Պակաս հավանական է լատինացված ու աղավաղված *cadus* գոյականի շփոթումը լատիներեն *caducum* (ժամանակեայ) ածականի հետ:

Այլ դեպքում սկզբնաղբյուրի (PG 44, 196A) *ἀτέλειαν* (զազատութիւն*) բառաձևը աղավաղվելով ու շփոթվելով *τέλειος* (կատարեալ)-ի հետ, հայերեն քարգմանվել է որպես «կատարեալ» (ՏՄԿ, էջ 137, տող 11): Նույնը տեղի է ունեցել հունարեն բնագրի (PG 44, 197A) *ἀποστήσει* (պահեստէ*) բայի հետ, որը աղավաղվելով և շփոթվելով *ἀπιστήσει* (թերահաւատեսցէ)-ի հետ, սխալմամբ քարգմանվել է որպես «թերահաւատեսցէ» (ՏՄԿ, էջ 140, տող 15):

Նման երևույթ դիտվում է հունարեն բնագրի (PG 44, 220B) *μη. αν ἐπισπεῦσαι* (ոչ փութալ*) արտահայտության դեպքում, որը աղավաղման հետևանքով դարձել է *μη αν πιστεύσαι* (ոչ հաւատալ) և այդպես էլ անցել հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 171, տող 2):

Հունարեն ձեռագրերում բառաձևերի աղավաղման պարզ օրինակներ են նաև հետևյալները. *τῆς λογικῆς* (տրամաբանութեան*)-ի (PG 44, 224C) հանդես գալը որպես «զանասնական» (*ἀλογος*) հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 175, տող 14), ինչպես և սկզբնաղբյուրի (PG 44, 228D) *τροφή* (կերակուրն*) բառաձևի աղճատումը և շփոթումը հունարեն *δեռագրում* *στροφή* (շրջումն)-ի հետ ու հայերենում (ՏՄԿ, էջ 181, տող 9) որպես «շրջումն» քարգմանվելը: Այլ դեպքում՝ հունարեն բնագրի (PG 44, 233A) *τῷ ἀναισθήτῳ* (ի անզգալուցն*) արտահայտությունը ժխտական մասնիկի անկման պատճառով հունարեն կամ հայերեն գրչագրերում դարձել է «ի զգալուցն» (*τῷ αἰσθήτῳ*) (ՏՄԿ, էջ 187, տող 17), իսկ հունարեն բնագրի (PG 44, 244C) *νεύματι* (քարթափ ական*)-ի աղավաղված ձևը հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 202, տող 8) հանդես է գալիս որպես «իմանալույն» (*νοήματι*):

Այդ բնագրային աղճատումները հունարեն ձեռագրում հաճախ այնպիսի չափերի են հասնում, որ բառերից մնում են լոկ բեկորներ, որոնք ավելի մեծ խառնաշփոթություններ են առաջացնում հայերեն քարգմանության մեջ: Բերենք օրինակներ: Հունարեն բնագրի (PG 44, 144A) *τοὺς ὀϊστούς* (զնեսս*) բառաձևը, աղավաղվելով հունարեն ձեռագրում, հայերենում (ՏՄԿ, էջ 68, տող 4) հանդես է գալիս որպես «զայսպիսիսն» (*τοίους*):

Եվս մի օրինակ. հունարեն բնագրի (PG 44, 145A) *κατ' αἴσθησιν* (զըստ զգայութեանն*) բառակապակցությունը, աղճատվելով հունարեն ձեռագրում, դարձել է *κατὰ φύσιν* (զըստ բնութեանն) ու այսպես էլ հանդես է գալիս հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 71, տող 10):

Հունարեն բնագրի (PG 44, 168D, 172D) *ἀπήχημα* (արձագանք*) գոյականը, աղավաղվելով ձեռագրերից մեկում և շփոթվելով *ἀπηγής* (դաժան, ժանտատեսիլ) ածականի հետ հայերեն քարգմանվել է որպես «ժանտատեսիլը» և «զարշատեսիլ» (ՏՄԿ, էջ 103, տող 10):

Կամ էլ հունարեն բնագրի (PG 44,172D, 173B-C) *κατάστασις* (կարգ*) գոյականը հայերեն թարգմանվել է որպես «հիւք» (ՏՄԿ, էջ 108, տող 3, էջ 109, տող 16): Ընդհանուր առմամբ հին հայ մատենագրության մեջ «հիւք»-ը կիրառվել է «նիւք», «տարր խոնաւ», «ոգի», «ծուծ», «փսկութիւն» և «զօրութիւն» իմաստով (ՆՀԲ): «Կարգ» իմաստով այն վկայված չէ «Կեղծ-Գիոնիսիոս Արեոպագացու հայերեն թարգմանության ցանկերում» (Indices to the Armenian Version of Pseudo-Dionysius the Areopagite) (48): Հավանաբար հունարեն ձեռագրում *κατάστασις* (կարգ)-ը աղավաղվել ու շփոթվել է *καταστάζει* (կաթել, ծորել) բայից կազմած *κατάσταξις* գոյականի հետ, որը ապա մեկնաբանվել է որպես «հիւք»:

Ինչ վերաբերվում է «հիւք»-ին, ապա «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում այն սովորաբար համապատասխանում է հունարեն *ἀτμός* (գոլշի) գոյականին, ինչպես և «Կեղծ-Գիոնիսիոս Արեոպագացու հայերեն թարգմանության ցանկերում» (48): Օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 157B) *τῶν ἀτμῶν* (գոլշեաց*) բառաձևը հայերեն թարգմանվել է որպես «հիւք հոտոցն» (ՏՄԿ, էջ 88, տող 18): Այլ դեպքում (PG 44, էջ 253A) նույն *τοῖς ἀτμοῖς* (գոլշիսն*)-ը, աղճատվելով հունարեն ձեռագրում, շփոթվել է *τοῖς χυμοῖς* (համսն)-ի հետ ու թարգմանվել է որպես «համսն» (ՏՄԿ, էջ 213, տող 12): Իսկ սրանից մի քանի տող ներքև հունարեն բնագրի *ἀτμῶν* (գոլշեացն*)-ը հայերեն բնագրում (ՏՄԿ, էջ 213, տող 14) հանդես է գալիս որպես «հիւքից համոցն» (*τῶν χυμῶν*), ըստ որում հունարենում *χυμός*-ը ունի երկու նշանակություն՝ 1. հյութ 2. համ: Հետաքրքրական է, որ Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում միայն առաջին դեպքում, երբ խոսքը «հիւք հոտոցն»-ի մասին է, արժարժվում են հոտոտելիքի բնախոսության հարցերը, մինչդեռ վերջին երկու պարագաներում տրված է մազերի գոյացման տեսությունը:

Մեկ այլ օրինակ. հունարեն բնագրի (PG 44,137D, 152D) *τοῦ νοῦ* (մտացն*) բառաձևի աղավաղման ու նրա շփոթման *τοῦ ἀνθρώπου* (մարդոյն)-ի հետ հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս «մտացն»-ի փոխարեն «մարդոյն»-ը (ՏՄԿ, էջ 61, տող 1):

Հունարեն բնագրի (PG 44, 173B) *ἐν φλέγματι* (լորձով*) բառակապակցությունը, աղավաղման ենթարկվելով հունարեն ձեռագրում, շփոթվել է *ἐν πνεύματι* (շնչով)-ի հետ (ՏՄԿ, էջ 109, տող 10):

Հունարեն բնագրի (PG 44, 236A) *κατὰ τὸ ἀθρόον* (ըստ միանգամայն*) բառակապակցությունը, աղճատվելով հունարեն ձեռագրում, դարձել է *κατὰ ἀνθρώπινον* (ըստ մարդկայինն) (ՏՄԿ, էջ 190, տող 3):

Որոշ դեպքերում հունարեն բնագրի բարդ բառերը, աղավաղվելով ու բաժանվելով երկու առանձին մասի, այսպես էլ թարգմանվել են հայերեն: Օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 241A) *μονοειδῶς* (միաձե*)-ը, աղճատվելով հունարեն ձեռագրում, բաժանվել է *μόνον* (միայն) և *εἰδῶς* (գիտացեալ) բառաձևերի ու հայերեն սխալմամբ թարգմանվել՝ «ոչ միայն գիտացեալ» (ՏՄԿ, էջ 199, տող 2):

Բնագրագիտական վերլուծության ընթացքում պարզվել է նաև, որ մի շարք աղավաղումներ առաջացել են հայերեն բնագրում: Մրանց թիվն անհամեմատ փոքր է, քան առաջին խմբի բառերի: Կանգ առնենք այդ աղճատումների վրա: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 152C) *δοχέα* (ամանք*) գոյականը, աղավաղվելով մի շարք հայերեն գրչագրերում, հանդես է գալիս որպես որոշյալ դերանվան ձևեր՝ «ամենեքին», «ամենեքեան» և «ամենեքեանք» (ՏՄԿ, էջ 82 տող 3): Հունարեն բնագրի (PG 44, 160A) *παρεγγέοντος*՝ (հոսելոյ*) բառաձևը հայերեն ձեռագրերի մեծ մասում դարձել է «հասելոյ» (ՏՄԿ, էջ 90, տող 18):

Հունարեն բնագրում (PG 44, 172A, B, 173 C.) երեք անգամ հանդիպում է *καθ' ὑπαρ* (ի լրջէ*, արթուն) արտահայտությունը, որը սակայն աղավաղվելով հայերեն գրչագրերում (ՏՄԿ, էջ 106, տող 10, էջ 106, տող 20) դարձել է «ի վերջէ» (*καθ' οὐράν*): Պակաս հավանական է *καθ' ὑπαρ* -ի շփոթելը *καθ' οὐράν* -ի հետ հունարեն ձեռագրերում:

Հունարեն բնագրի (PG 44, 193B) *τὴν ἀνδρίαν* (գարիութին*) գոյականը հայերեն գրչագրերի մեծ մասում աղավաղվելով դարձել է «գարութին» (ՏՄԿ, էջ 135, տող 20): Կամ էլ հունարեն բնագրի (PG 44, 213B) *ἀπεργάζεται* (գործել*) բայաձևը հայերեն ձեռագրերում դարձել է «կարծել» (ՏՄԿ, էջ 164, տող 7):

Հաճախ է պատահում, որ բառը ենթարկվում է կրկնակի աղճատման՝ մեկ անգամ հունարեն ձեռագրում, ապա հայերեն գրչագրերում: Օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 204B) *πτερωθείς* (թեալորեալ*) բառաձևը, աղավաղվելով հունարեն ձեռագրում և շփոթվելով *πτερωτός* (թեալուցեալ)-ի հետ, իր հերթին հայերեն գրչագրերում դարձել է «թեթեալուցեալ» (ՏՄԿ, էջ 151, տող 6):

Որոշ դեպքերում հայերեն թարգմանությունը բավականաչափ հեռանում է հունարեն բնագրից ու նրա մեջ հայտնվում են այսպես ասած «ավելորդ» բառեր կամ կրկնողություններ (*pleonazmos*): Մեծ մասամբ այդ տեղի էր ունենում, երբ հունարեն բառը աղավաղվում էր կամ էլ նրա իմաստը հստակ չէր ընկալվում թարգմանիչների կողմից: Պետք է նշել, որ նման դեպքերում հայերեն թարգմանության մեջ հաճախ նկատվում են նախադասության շարահյուսական կարգի խախտումներ, առանձին բառերի տեղափոխություններ և այլն:

Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 220B) *περιπλεκόμενην προκειμένω τῷ πτώματι, ὡς μὴ ἂν ἐπισπεύσαι τῷ νεκρῷ τὴν κηδείαν* (մինչ դեռ առաջի կայր դի, շուրջ գնովա փարեալ, մինչ զի ոչ փութալ մեռելոյն զպատանս թաղմանն*) հատվածը հայերեն թարգմանության մեջ հեռանում է սկզբնաղբյուրից, հանդես գալով հետևյալ ձևով. «շուրջ գնովա հաշելով եւ մաշելով, մինչ դեռ առաջի կայր կործանեալ պատանոյն դի, մինչ զի ոչ հաւատալ մեռելոյն զպատանս թաղմանն» (ՏՄԿ, էջ 170, տող 19, էջ 171, տող 1-2): Այստեղ նախադասության շարահյուսական կարգը խախտված է, իսկ հունարեն ձեռագրում աղճատված որոշ արտահայտություններ սխալ են թարգմանվել, օրինակ՝ *μὴ ἂν*

ἐπισπεῦσαι (ոչ փութալ*) որպես «ոչ հաւատալ» (μὴ ἂν πιστεύσαι), իսկ περιπλεκομένην (փարեալ*) որպես «հաշելով և մաշելով» (τήκομένην): Գրանից բացի թարգմանության մեջ «դի»-ից առաջ հանդես է գալիս «կործանեալ պատանոյն» բառակապակցությունը, որը բացակայում է հունարեն բնագրում:

Կամ էլ հունարեն բնագրի (PG 44, 224D) εἰς ἀτμούς (ի գոլոշիս*) արտահայտությունը հունարեն ձեռագրում աղճատվել ու շփոթվել է εἰς χρεσίμους (ի շայեկան)-ի հետ, ապա հայերեն ազատ թարգմանվել «յոյժ շայեկանութեան մարմնոյն» (ՏՄԿ, էջ 176, տող 4):

Ինչ վերաբերում է վերոհիշյալ աղճատված կամ «ավելորդ» բառերին, ապա դրանք որոշ դեպքերում կարող են մատնանշել բավականին կարևոր փաստ, այն է՝ մեկ այլ հունարեն գրչագրի առկայությունը, որը ընկած է հայերեն թարգմանության հիմքում: Այսպես, օրինակ՝ հունարեն բնագրում (PG 44, 153C), որտեղ խոսքը մտքի անտեսանելի բնույթի մասին է, սխալմամբ հանդես է գալիս τοῦ ἀνθρώπου (մարդոյն) բառաձևը τοῦ νοῦ (մտացն*)-ի փոխարեն, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 85, տող 1), ինչպես նաև անգլերեն տարբերակում (MM, Chap.XI), որոնք ամենայն հավանականությամբ արված են մեկ այլ հունարեն ձեռագրից, առկա է «մտացն-mind» ճիշտ ձևը:

Կամ էլ հունարեն բնագրի (PG 44, 176A) τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ ἀξανομένην (որ կերակրի եւ աճէ) հատվածը հայերեն թարգմանվել է՝ «որ կերակրի եւ զգայ» (ՏՄԿ, էջ 112, տող 7): Նույնը առկա է անգլերեն թարգմանության մեջ՝ «which at once receives nourishment and is capable of perception» (MM, Chap. XIV, 2): Ռուսերեն թարգմանության մեջ, որը հետևում է աքբահայր Ժ. Պ. Մինի հրատարակված հունարեն տարբերակին, սրա փոխարեն ունենք՝ «питательную и растительную» (Лурье, с. 61): Սակայն տվյալ դեպքում հոգու երեք գորություններից, որոնք հատուկ են բույսերին, կենդանիներին և բանական էակին՝ մարդուն, խոսքը երկրորդի մասին է: Ուստի հունարեն բնագրում ևս պետք է լիներ, ինչպես հայերեն ու անգլերեն թարգմանության մեջ, ոչ թե՛ τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ ἀξανομένην (որ կերակրի եւ աճէ), այլ՝ τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αἰσθανομένην* (որ կերակրի եւ զգայ): Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ հայերեն և անգլերեն թարգմանությունները հետևել են հունարեն մեկ այլ գրչագրի, որը պատկանում էր Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին (Forbes): Վերջինս, ինչպես ասվեց, հունարենից բացի պարունակում է նաև լատիներեն տարբերակի ձեռագրեր: Իրոք, լատիներեն թարգմանության մեջ ասված է. «alia et nutriatur, et sentiat» (PG 44, 175A):

Եվս մի օրինակ. հունարեն բնագրում (PG 44, 253C) ասված է. καὶ ἐστι λέων (եւ է առիւծ), մինչդեռ հայերեն թարգմանության մեջ «առիւծ»-ից հետո ավելացրած է «կամ մարդ» (ՏՄԿ, էջ 216, տող 7): Նույնը հանդիպում է անգլերեն թարգմանության մեջ՝ «is a lion, or a man» (MM, Chap. XXX, 30): Ուստի հայերեն և անգլերեն թարգմանությունները պիտի հետևեին այնպիսի հունարեն

գրչագրի, որտեղ առկա էր «ἄνθρωπος» հավելումը: Իսկապես լատիներեն տարբերակում ասված է. «ipse vel leo, vel homo» (PG 44, 253C): Այս ամենը վկայում է, որ հայերեն թարգմանությունն երկրորդ ձեռագրախմբին հատուկ կառուցվածքային առանձնահատկություններից բացի (տես՝ Առաջաբան, էջ 12) ցուցաբերում է նաև բնագրային բնույթի կարևոր տարբերություններ:

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերել ենք նաև բնագրային բացթողումներ, որոնց մեծ մասը հավանաբար առաջացել է հունարեն ձեռագրի աղճատման պատճառով: Այդ բացթողումները լինում են մեկ բառի, բառակապակցության, կամ էլ ամբողջ նախադասության տեսքով: Բերենք օրինակներ. հունարեն բնագրի (PG 44, 137C)՝ φησί (ասէ*) բայը, բաց է թողած հայերեն թարգմանության մեջ (SUԿ, էջ 60, տող 14): Վերոհիշյալ բայածևր բացակայում է նաև հայերեն թարգմանության այլ տեղերում (SUԿ, էջ 85, տող 17):

Հայերեն թարգմանության մեջ (SUԿ, էջ 62, տող 14) բացակայում են «զմարդն*» (ἄνθρωπον) և «կերպարանի*» (εἰκόνα) բառածևրը, որոնք առկա են հունարեն բնագրում (PG 44, 140B): Մեկ այլ տեղ հայերեն թարգմանության մեջ (SUԿ, էջ 92, տող 17) բաց է թողած հունարեն բնագրի «պատահէ*» (συμβαίνει) բայը (PG 44, 161A): Թարգմանիչների ուշադրությունից վրիպել է τῶν ἐπιτηδείων (ի մերձատրաց*) արտահայտությունը (SUԿ, էջ 108, տող 8), որը առկա է հունարեն բնագրում (PG 44, 172D), իսկ մի քանի տող ներքև (SUԿ, էջ 108, տող 19)՝ նաև հունարեն բնագրի (PG 44, 173A) «ախտի*» (ὑπὸ τῆς νόσου)-ը: Հայերեն թարգմանության մեջ (SUԿ, էջ 140, տող 2) բաց է թողած հունարեն բնագրի (PG 44, էջ 196D) «Աստուծոյ*» (τοῦ Θεοῦ) գոյականը: Թարգմանիչների ուշադրությունից է վրիպել (SUԿ, էջ 159, տող 18) հունարեն բնագրի (PG 44, 209C) «խոյս տալով*» (παραδραμόντες), ինչպես և հունարեն բնագրի (PG 44, 225D) «այլայլի*» (ἀλλοιοῦται) բառածևրը (SUԿ, էջ 179, տող 2): Հայերեն թարգմանության մեջ (SUԿ, էջ 214, տող 8) բացակայում է հունարեն բնագրի (PG 44, 253A) «բնութեան*» (φύσει) բառածևրը:

Մի շարք դեպքերում հայերեն թարգմանության մեջ բաց են թողած երկուերեք բառերից կազմած բառակապակցություններ, նախադասությունների առանձին բեկորներ կամ նույնիսկ ամբողջ նախադասություններ: Այսպես օրինակ՝ հունարեն բնագրի (PG 44, 129C) ἐν τῷ βάρει μὴ πεδηθείσης (ոչ կապեալ ի շղթայս ծանրութեան*) հատվածը բացակայում է հայերեն բնագրում (SUԿ, էջ 47, տող 9): Նույնը կարելի է ասել հունարեն բնագրի (PG 44, 221A) ἀποδιδόναι πάλιν τῷ ζῆν (վերստին ի կեանս դարձուցեալ լինի*) հատվածի, որը չկա հայերենում (SUԿ, էջ 172, տող 9-10), կամ նրանից մի քանի տող ներքև գտնվող (PG 44, 221A) ἐκ νόσου χαλεπῆς (դժուար ախտից*) բառակապակցության մասին (SUԿ, էջ 172, տող 12): Թարգմանիչների ուշադրությունից վրիպել են նաև հունարեն բնագրի (PG 44, 224A, D) καὶ κενῆς ἀπάτης (եւ սին պատրանաց*) ու τὸν θεῖον λόγον (ըստ աստուածային բանի*) բառակապակցությունները

(ՏՄԿ, էջ 174, տող 15, էջ 175, տող 19), ինչպես նաև հունարենի (PG 44, 253D) *καὶ ἐν τῷ τελείῳ τέλειον* (եւ կատարեալ՝ ի կատարեալին*) արտահայտությունը (ՏՄԿ, էջ 216, տող 19): Հունարեն բնագրում առկա Պողոս առաքյալի հայտնի խոսքերը *ἀπεκδύσασθαι δεῖν τὸν παλαιὸν ἄνθρωπον, καὶ ἐνδύσασθαι τὸν νέον* (պարտ է ի բաց մերկանալ զհին մարդն և զգեճույ զնորն*) (PG 44, 256C) քարգմանվել է ոչ ճշգրիտ ձևով: Հայերեն քարգմանության մեջ բացակայում են «պարտ է*» (δεῖν) և «զնորն*» (τὸν νέον) բառաձևերը (ՏՄԿ, էջ 218, տող 6-7):

Հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ էջ 55, տող 19) բաց է թողած հունարեն բնագրի *καὶ τῶν πετεινῶν τοῦ οὐρανοῦ, καὶ τῶν κτηνῶν, καὶ πάσης τῆς γῆς* (եւ թռչնոց երկնից, եւ անասնոց, եւ անենայն երկրի*) մասը (PG 44, 133D), ինչպես նաև հունարեն բնագրի (PG 44, 176B) հետևյալ հատվածը՝ *ἐν ἰδίαις περιγραφαῖς θεωρούμενα* (հարաբանչիւրն յիր սահմանս հայեցեալ*) (ՏՄԿ, էջ 112, տող 11-12):

Հունարեն բնագրի (PG 44, 180D) *κατ' εἰκόνα»* *καὶ ἐπὶ τίσι ποιήσωμεν* (ըստ կերպարանի եւ առ ինչ արասցուք*) հատվածը անտեսվել է հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 119, տող 7): Նույնը վերաբերվում է հունարեն բնագրի (PG, 44, 181C) *ὅ τὴν κατὰ τὸ ἄρβεν καὶ θῆλυ διαφορὰν οὐ προσίεται* (զայն որ ըստ արուին եւ ըստ իգին զանազանութիւնն ոչ ընդունի*) նախադասությանը (ՏՄԿ, էջ 120, տող 19-20), ինչպես նաև հունարեն բնագրի (PG 44, էջ 205A) *τὴν τοῦ ἀνξάνεσθαι καὶ πληθύνεσθαι δύναμιν τῷ ἀνθρώπῳ προσέθηκεν, ἀλλ' ὅτε διέκρινε τῆ κατὰ τὸ ἄρβεν καὶ θῆλυ διαφορᾶ, τότε φησίν·* (ես մարդոյն զգաւրութիւն ւճել եւ բազմանալ, այլ յորժամ զզանազանութիւն ըստ արուին եւ իգին էարկ, յայնժամ ասէ*) *ամբողջ հատվածին* (ՏՄԿ, էջ 153, տող 6-8): Կամ էլ հայերեն քարգմանության մեջ (ՏՄԿ, էջ 185, տող 17-18) բացակայում է հունարեն բնագրի հետևյալ հատվածը (PG 44, 232B) *μετὰ τὸ (καθὼς φασιν) ἄπαξ γεύσασθαι τοῦ σωματικῆ βίου, πάλιν* (որպէս ասեն, զկնի միանգամայն ճաշակելոյ զմարմնատր կեանս՝ դարձեալ*):

Դժվար է ասել՝ այս ամենը տեղի է ունեցել քարգմանության ժամանակ կամ էլ հայերեն ձեռագրերի ընդօրինակման ընթացքում, թե հունարեն ձեռագրերում առկա բացթողումների պատճառով: Յավոր սրտի, առ այսօր հրատարակված չէ «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործի հունարեն քննական բնագիրը, որը պետք է կազմեր Նյուսացու երկերի բազմահատորյակի (GNO) IV հատորը Հեդվիգա Հյորնեի խմբագրությամբ (H. Höfner, GNO, IV): Հուսով ենք, որ հետագայում նրա լույս ընծայելուն պես կարելի կլինի հաստատել մեր տեքստաբանական վերլուծության արդյունքները: Սակայն առանց այդ էլ բերած փաստերը վկայում են, որ Ստեփանոս Սյունեցին ու Դավիթ Հյուպատոսը օգտվել են ոչ թե արբահայր Մինի կողմից հրատարակված հունարեն տարբերակից (PG 44, 124 D-256 C), այլ վաղ միջնադարի (V-VIII դդ.) սխալաշատ մի հունարեն գրչագրից, որը մտնում էր Ֆորբսի դասակարգման երկրորդ ձեռագ-

րախմբի մեջ, և, ավաղ, հեռու էր «ի ստոյգ օրինակաց» լինելուց (միջնադարյան գրչի խոսքերով): Ի դեպ՝ Ռ. Թոմսոնը ևս, անդրադառնալով Գիոնիսիոս Արեոպագոսին վերագրվող գործերի հայերեն թարգմանությանը, նշում է, որ վերջինս իր սխալներով չափազանց մոտ է IX դարի սկզբին գրած մի հունարեն ձեռագրին (MS Parisinus 437 M) (50, Introduction, pp. VII-VIII):

Կատարած բնագրագիտական ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել մեզ վերականգնել հայերեն թարգմանության բացթողումները և ուղղել աղավաղված բառերն ու վրիպակները: Բնագրային աղճատումները և բացթողումները վերականգնելիս՝ ձգտել ենք հնարավորին չափով օգտագործել սույն քննական բնագրի այլ տեղերում առկա բառերը՝ պահպանելով Նյուսագու գործի հայերեն թարգմանությանը հատուկ բառապաշարն ու ոճային առանձնահատկությունները:

* * *

«Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի քննական բնագրի կազմության հիմք ընդունել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի Հ^մ 468 (A) ձեռագիրը: Վերջինս համեմատել ենք նույն հավաքածուի 9 գրչագրերի հետ՝ Հ^մ 469 (a), 470 (b), 5253 (c), 51 (d), 1500 (e), 3463 (f), 1649 (g), 2508 (h) 620 (i): Ստորև տալիս ենք օգտագործված ձեռագրերի համառոտ նկարագրությունը.

1. A. Հ^մ 468 (հիմք-ձեռագիր). Ժողովածու, ԺԲ-ԺԳ. դդ., գրիչ՝ Առաքե՞լ, Գրիգոր (անընթեռնելի փակագիր՝ 115բ): 283 թերթ, թուղթ, 17,3.12,5. միասյուն, բոլորգիր (արևելյան), 19 տող: Հիշատակարան գրչության ժամանակի՝ 3ա, 7ա, 48ա, 115բ, 163բ, 170բ, 231բ:

Բվնդ. նաև՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (117ա-283բ):

Բնագիրը՝ 1ա-115բ (ցանկ չունի, § Ա-ԼԲ.՝ առանց գլխահամարների, որ ընթերցումների մեջ չենք արտահայտել, *չունի նաև թարգմանչի հիշատակարանը*): Լուսանցքներում ունի ուղղումներ և սրբագրություններ: «Օ» ձայնավորն ամենուրեք արտահայտված է «ալ»-ով:

2. a. Հ^մ 469. Ժողովածու, 1260 թ., Մեծքար անապատ, գրիչ՝ Ստեփանոս քհյ., կազմող՝ Առաքել Հնազանդենց, ստացող՝ Գրիգոր Բժենցի (Խոր Վիրապ, 1271 թ.): 294 թերթ, թուղթ, 16 x12,5. միասյուն, բոլորգիր, 22 տող: Հիշատակարան գրչի՝ 117ա, 261ա, կազմողի՝ 259բ:

Բվնդ. նաև՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (9ա-117ա), Գրիգորի Նիսացոյ «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (201ա-60բ):

Բնագիրը՝ 117բ-200բ (ցանկ՝ չիք, § Ա-ԼԲ. թերի՝ § Ե., Ջ., ԺԱ., ԺԲ., հիշատակարան թարգմանչի՝ 117ա): Լուսանցքներում առկա են բազմաթիվ լուծմունքներ: «Օ» հնչյունը արտահայտված է «ալ»-ով:

3. Բ. Հ^մ 470. Ժողովածու, ԺԳ. դ., գրիչ՝ Վարդան Կիլիկեցի, ստացող՝ Եսայի (Նչեցի^ո): 290 թերթ, թուղթ, 16-16,5, 11-12. միասյուն, բոլորգիր, 19-25 տող (խառն): Հիշատակարան գրչի՝ 87բ, 116ա (ծածկագիր), 213ա, հետագայի՝ 213բ (1360 թ.), 116ա, 213բ (1675 թ.):

Բվնդ. նաև՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (2ա-115ա), Գրիգոր Նյուսացու «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (216ա-287ա):

Բնագիրը՝ 116բ-213ա (ունի ցանկ, § Ա-ԼԲ.). թերին՝ 167ա-168բ, 195ա-211բ լրացվել է ուշ շրջանի ընդօրինակությամբ: Լուսանցքներում՝ լուծմունքներ, ուղղումներ, սրբագրություններ: «Օ» հնչյունն արտահայտված է «աւ»-ով:

Հիշատակարան թարգմանության 115աբ. «Ի Յերորդի՝ Մերորդի՝ Իերորդի՝ Էերորդի արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ՝ ի չորեքասաներորդի ընդիքտիոնին, իսկ ըստ հայում թվի ՄԻԱ. (772), յառաջին ամի թագաւորութեան Լեւոնի, թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի Նիսեա եպիսկոպոսի, ի ստոյգ արիւնակաց, ի Կո[ս]տան[դն]ուպալիս, ի ձեռն Գաթի Հիւպատոսի, ի թագաւորական սեղանոյն յանգիւնառի [կենառի], ի ձեռն Ստեփանոսի քահանայի եւ քերդոդի, աշակերտի տեառն Մովսէսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»:

4. Բ. Հ^մ 5253. Գրիգոր Նիսացի, Մատենագրութիւնք, ԺԳ. դ.: 211 թերթ, թուղթ, 17,11. միասյուն, բոլորգիր, 26 տող: Հիշատակարան հետագայի՝ 210բ (ԺԳ. դ.):

Բվնդ. նաև՝ Գրիգոր Նյուսացու «Յաղագս երգոյ երգոցս» (65ա-210 ա):

Բնագիրը՝ 1ա-65ա (չունի ցանկ, § Ա-ԼԲ.): Լուսանցքներում՝ լուծմունքներ: ԼԲ. գլխից երկու թերթ պոկված է, որ ձեռագրի թերթակալման ժամանակ չի նկատվել: «Օ» հնչյունը արտահայտված է «օ» տառով:

5. Բ. Հ^մ 51. Ժողովածու, ԺԳ-ԺԳ. դդ.: 296 թերթ, թուղթ, 16,7,12,4. միասյուն բոլորգիր (2ա-263բ), նոտրգիր (265ա-94բ), 23-28 տող:

Բվնդ. նաև՝ Մատենագրութիւնք Գիոնիսիոսի Արիսպագացոյ (4ա-158ա), Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (166ա-236ա):

Բնագիրը՝ 237ա-294բ (ցանկը թերի է, § Ա-ԼԲ.), յիշատակարան թարգմանչի՝ 78ա, 236ա): Բնագիրը թերի է, ընկածների փոխարէն 253ա-256բ, 264ա-294բ թերթերը լրացվել են ԺԷ. դարում: «Օ» հնչյունը արտահայտված է «օ»-ով:

6. Բ. Հ^մ 1500. Ճառքնատիր, 1283 թ., Այրիվանք, գրիչ, ստացող՝ Մխիթար Այրիվանեցի, ծաղկող՝ Սարգիս գրիչ, Ստեփանոս: 1189 թերթ, թուղթ (արևելյան), 35,7,26,5, երկսյուն, բոլորգիր, 52-59 տող: Հիշատակարան գրչության ժամանակի՝ 7բ, 15ա, 40ա, 270բ, 369բ, 763ա, 879ա, 1041ա և այլուր, ծաղկողի՝ 723բ, հետագայի՝ 29բ:

Բվնդ. նաև՝ Գրիգոր Նյուսացու «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (622ա-635բ), Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (576ա-602ա). բազմաբովանդակ է:

Բնագիրը՝ 602ա-622ա (չունի ցանկ, § Ա-ԼԲ): «Օ» ձայնավորն արտահայտված է «ա»-ով:

7. ֆ. Հ^մ 3463. Ժողովածու, ԺԳ., ԺԷ. դդ., գրիչ՝ Կիրիոն (Ա), ստացո՞ղ՝ Մխիթար քհյ. (Ա): 323 թերթ, թուղթ, 12,5,8,3. միասյուն, բոլորգիր, 20 տող: Հիշատակարան գրչի՝ 91ա, 227բ:

Բվնդ. նակ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (1ա-130ա), «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (228ա -320բ):

Բնագիրը՝ 130բ-227բ (ունի ցանկ, § Ա-ԼԲ): «Օ» ձայնավորը գրած է «օ» տառով:

8. ց. Հ^մ 1649 ք., Ժողովածու. բաղկացած է 3 տարբեր ձեռագրերից, մեր բնագիրը՝ ի ձեռագիր Բ. ԺԵ. դ., ստացող՝ Յոհաննէս, 255 թերթ (141-395, 158-60՝ ԺԷ. դ. հավելում), թուղթ, 13,8,10,3. միասյուն, բոլորգիր, 22 տող: Հիշատակարան գրչի՝ 338ա, հետագայի՝ 161ա :

Բվնդ. նակ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (141ա-252բ), Գրիգոր Նյուսացու «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (338բ-394բ):

Բնագիրը՝ 253ա-333բ, 350ա-363բ, 334ա-8ա (չունի ցանկ, § Ա-ԼԲ. ԺԲ. գլուխը սխալմամբ համարակալված է որպէս ԺԳ, ուստի բնագրում կա երկու ԺԳ գլուխ): Պրակնեի հաջորդականության խախտման պատճառով բնագրի վերջին գլուխները ետ ու առաջ են ընկել: «Օ» ձայնավորը գրության մեջ արտահայտվել է «օ» տառով:

9. հ. Հ^մ 2508. Ժողովածու, ԺԵ. դ., գրիչ՝ Ռհաննէս, ստացող՝ Սարգիս սրկ., 308 թերթ, թուղթ, 18,4,13. միասյուն, բոլորգիր, 23 տող

Բվնդ. նակ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (1ա-130ա), Գրիգոր Նյուսացու «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» (233ա-305բ):

Բնագիրը՝ 131ա-232բ (չունի ցանկ, § Ա-ԼԲ): Հիշատակարան թարգմանչի՝ 130ա, գրչի՝ 232բ: «Օ» ձայնավորը արտահայտված է «ա»-ով: Լուսանցքներում՝ լուծմունքներ, ուղղումներ, սրբագրություններ:

10. ի. Հ^մ 620. Ժողովածու, 1494 ք., Կապոսի անապատ, գրիչ՝ Մաղաքիա Բաբերդացի, 298 թերթ, թուղթ, 21,7,15,8, միասյուն, բոլորգիր, 28 տող:

Բվնդ. նակ՝ 3ա-71ա Գրիգոր Նյուսացու «Խօսք յինն երանութիւնսն», 71բ-104ա Գրիգոր Նյուսացու «Յորդորումն մանկանց ի կուսութիւն», 152ա-212ա Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ», 213ա-247բ Բարսեղ Կեսարացու «Մեկնութիւն Վեցարեից»:

Բնագիրը՝ 104բ-150ա (չունի ցանկ: § Ա-ԼԲ): Հիշատակարան թարգմանության՝ 150ա, գրչի՝ 41բ, 71ա, 104ա, 146բ, 298ա: Լուսանցքներում՝ լուծմունքներ: «Օ» ձայնավորը ունի խառը՝ «ա» և «օ» գրություն:

ՀԱՄԵՄԱՏՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

- A. Հ^մ 468. ԺԲ-ԺԳ. դդ., 1ա-115բ.
 a. Հ^մ 469. 1260 թ., Մեծքար անապատ, 117բ-200բ.
 b. Հ^մ 470. ԺԳ. դ., 116բ-213ա.
 c. Հ^մ 5253. ԺԳ. դ., 1ա-65ա.
 d. Հ^մ 51. ԺԳ-ԺԴ. դդ., 237ա-294բ.
 e. Հ^մ 1500. 1283 թ., Այրիվանք, 602ա-622ա.
 f. Հ^մ 3463. ԺԴ., ԺԵ. դդ., 130բ-227բ.
 g. Հ^մ 1649. ԺԵ.. դ., 253ա-333բ, 350ա-363բ, 334ա-8ա.
 h. Հ^մ 2508. ԺԵ. դ. 131ա-232բ.
 i. Հ^մ 620. 1494 թ., Կապոսի անապատ, 104բ-150ա:

* * *

Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի քննական բնագրում աղճատված բառերը նշված են ուղիղ գրով: Ուղղանկյուն փակագծերում բնագրում տրված են բնագրային բացթողումների վերականգնումը և աղճատված բառերի ճիշտ ձևերը, իսկ ավելորդ բառերի դեպքում «Օ» (գրո) նշանը: Կլոր փակագծերում տարընթերցվածների և ծանոթագրությունների բաժնում՝ տրված են բացատրությունները: Աստղանիշով նշված են առաջաբանում և ծանոթագրությունների բաժնում մեր կողմից վերականգնված բնագրային աղավաղումների ճիշտ ձևերը: Տարընթերցվածների թվային համարները ծանոթագրությունների համարներից տարբերելու համար վերջիններս բնագրում տրված են կլոր փակագծերում:

Գրիգոր Նյուսացու ոճին հատուկ երկարաշունչ նախադասություններն ու պարբերությունները թարգմանիչները, ապա նրանց օրինակով և գրիչները հաճախ բաժանել են փոքր հատվածների, սակայն որոշ դեպքերում այդ հանգեցրել է իմաստազրկման: Ուստի նման պարագաներում ստիպված ենք եղել վերադառնալ հունարեն բնագրի բարդ կառուցվածքին և փոխել հայերեն գրչագրերում առկա ավանդական կետադրությունը:

Քննական բնագրում՝ գլխատառով գրված են Աստուած, Քրիստոս, Տէր, Հայր, Որդի, Սուրբ Երրորդութիւն, Սուրբ Գիրք, Աւետարան, Մարգարէ, Առաքեալ և մի քանի նման բառեր:

Ելնելով նրանից, որ հիմք-ձեռագրում (ՄՄ Հ^մ 468) և նրան հարող ԺԲ-ԺԳ. դարերի գրչագրերում (ՄՄ Հ^մ 469, 470, 51, 1500) «օ» հնչյունը արտահայտված է «աւ»-ով՝ այն պահպանել ենք քննական բնագրում և անտեսել «օ»-ով տարբերակները: «Եւ» երկհնչյունը ամենուրեք քննական բնագրում գրած է «եւ»-ով: Որպես տարընթերցվածներ անտեսվել են «ը» գաղտնավանկով տարբերակները, որոնք առկա են հիմք-ձեռագրում:

* * *

Մի քանի խոսք Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հայերեն թարգմանության քննական բնագրի վրա իմ կատարած աշխատանքի մասին: Տարիներ առաջ այն ինձ հանձնարարել էր Մաշտոցի անվան Մատենադարանի երջանկահիշատակ տնօրէն՝ Լևոն Խաչիկյանը: Մեծ եռանդով սկսեցի ուսումնասիրել Մատենադարանում պահվող Նյուսացու ձեռագրերը և կազմել քննական բնագիրը, սակայն անցյալ դարի ութսունական թվականներին այդ գործը ժամանակավորապես դադարեցվեց Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» գրքի ռուսերեն թարգմանության վրա աշխատելու պատճառով, որը տևեց շուրջ մեկ տասնամյակ: Կրկին վերադարձա «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկին միայն 2000 թվականի սկզբին, ներդնելով աշխատանքիս մեջ տարիների փորձս ու գիտելիքները և անանց հիացմունքս Նյուսացու սքանչելի երկասիրության նկատմամբ:

Պարտքս եմ համարում երախտագիտությունս հայտնել գրքիս խմբագիր Մեն Արևշատյանին: Շնորհակալություն եմ հայտնում նաև Օլգա Վարդապարյանին, Գոհար Մուրադյանին և Գէորգ Տէր-Վարդանեանին, որոնք իրենց խորհուրդներով օգնել են ինձ ավարտի հասցնել գործս:

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԵՅԻ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

(ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ)

ԳՐԻԳՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՂԲԱԻՐԵՆ ԲԱՐՍՂԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ⁽¹⁾

Ա. ԳԼՈՒԽ¹, ՅՈՐՈՒՄ Է ԻՄՆ ՄԱՍՆԱԻՈՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ
ԱՇԽԱՐՀԻՍ ԲՆԱԽԱԻՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԻՄՆ ԵՒ
ՊԱՅԾԱՌ⁽²⁾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զի եթէ ընդ այնոսիկ, որ ի ձեռն ստացուածոցն² պարտ է պատուելի³ զայնոսիկ, որ ի ձեռն առաքինութեան զանազանեալ են, «փոքր արդեալք⁴», որպէս ասէն Սողոմոն⁵, «ամենայն աշխարհ ստացուածոց⁶ երեւեալ լինէր առ քո առաքինութիւնդ զուզակչիո» (Լուսկ. Գ. 14-15, Բ. 11, 18, 21): Արդ, վասն զի վեհ եւ լաւ քան զմեծութեան պատիւն պարտեցեալ շնորհն⁷ է քում նազելի պարկեշտութեան⁸, եւ պահանջէ սուրբ Պասքայս⁹ զսովոր սիրոյ սպասաւորութիւն, բերեալ մատուցանեմք քում մեծախորհրդութեանդ ընծայ¹⁰, ո՛վ մարդ Աստուծոյ, փոքրագոյն՝ քան թէ որպէս արժան էր քեզ մատուցանել, բայց սակայն է ըստ զաւրութեանս մերում՝ ոչինչ պակասագոյն¹¹: Իսկ ընծայս¹² բան¹³ է, իբրեւ հանդերձ ինչ գծուծ¹⁴ յաղքատ մտաց մերոց¹⁵, ո՛չ առանց երկոց անկեալ¹⁶: Եւ բանիս հիմն յանդուգն գոլ թերեւս թուեսցի բազմաց, բայց սակայն ոչ արտաքոյ¹⁷ քան զվայելուչն¹⁸ համարեալ եղեւ: Քանզի միայն արժանապէս զարարածս Աստուծոյ իմացաւ տեսանել, որ

¹ abcg գլուխս i գլխոյն
² dc ստացուածոցն
³ e պատուելի
⁴ a արդեալք
⁵ d Սողոմոն
⁶ e ստացուածոց
⁷ Acdefghi շնորհելն
⁸ dh պարկեշտութեանդ
⁹ A անցանակն ch անցանակս փխ Պասքայս
¹⁰ Aabd ընծա e ընդ այս փխ ընծա
¹¹ dh կարաւտագոյն փխ պակասագոյն
¹² b ընծայս
¹³ d բաւ փխ բան
¹⁴ h գծուծ, i գծուծ
¹⁵ d մերոցս
¹⁶ c անգեալ
¹⁷ d արտաքս
¹⁸ a վայելուչն c զվայելուչն

արդարեւն ըստ Աստուծոյն Հաստատեցաւ, եւ ի պատկեր ստեղծ-
 չին հոգևով¹ կերպարանեալ, Բասիլիոս² Հասարակաց³ Հայրն⁴ մեր
 եւ վարդապետ, որ զբարձր⁵ զամենայնիս զարդարանս զիւրաւ
 ըմբռնելի բազմաց ի ձեռն իւրոյ տեսլեանն արար, զայն որ ճշմա-
 րիտ իմաստութեամբն Աստուծոյ գոյացաւ աշխարհ⁶, գիտուն եւ
 ծանաւթ ի ձեռն իւրոյ իմաստութեանն տեսլեամբ⁷ աշակերտացն
 [Օ]⁽³⁾ գործեաց:

Իսկ մեք եւ զարմանալ ընդ նա, որպէս արժան էր, ոչ կարա-
 ցեալք, բայց սակայն զպակասս տեսեցելոցն⁸ մեծին ի վերայ յա-
 ւելուլ⁹ ընդ միտ ածաք՝ ոչ իբրու¹⁰ աւտարացուցանել եւ աղար-
 տել¹¹ խառնելով մերոյս [Օ] զնորա ջանն⁽⁴⁾ կամեցեալ: Քանզի ոչ է¹²
 արժան զբարձրն զայն թշնամանել բերան մերովքս¹³ հիւժեալ⁽⁵⁾ բա-
 նիւք, այլ զի մի թուեսցի¹⁴ անկատար եւ պակաս վարդապետին
 փառք յաշակերտսն իւր լինել: Քանզի եթէ թերւոյն¹⁵ ի վեցաւ-
 ըէին ի մարդն տեսլեան ոչ մի ոք յաշակերտելոցն¹⁶ փոյթ ինչ առ
 թերւոյն լրումն մատոյց¹⁷ առեալ¹⁸, լինէր յիրաւի զմեծէ փառաց
 նորա եպերանաց կռիւ, իբրու թէ ոչ կամեցեալ գիտութիւն ինչ
 Հասական տեսանող ի լսաւղսն գործել: Արդ, այժմ ըստ կարի մե-
 րում իշխեցեալք¹⁹ ի վերայ թերի պատմութեանն, զի եթէ այն-
 պիսի ինչ ի²⁰ մերումս գտցի, իբրու թէ նորա վարդապետու-
 թեանն²¹ իցէ արժանի, ի²² վարդապետն ամենայն իրաւք զակնար-

1 abce հոգով
 2 A Բասիլիոս
 3 i չիք Հասարակաց
 4 i Հայր
 5 i զբարձր մեր
 6 i աշխարհի
 7 f տեսլեամբ իւրոյ
 8 acgi տեսեցելոյն
 9 abcdeghi յաւելուլ c յաւելու
 10 b իբրեւ
 11 h աղարտելի առնելով
 12 A չիք է
 13 A հոգեալ h հոծեալ
 14 c երեւեսցի փխ թուեսցի
 15 bcdefgi թերոյն
 16 abcdeghi աշակերտելոցն
 17 A չիք մատոյց c մատոյցանէր h մատուցանէր
 18 ch չիք առեալ
 19 i իշխեցեալք յաւելուլ
 20 c չիք ի
 21 abcdefghi վարդապետութեանն ինչ
 22 Ae չիք ի

կութիւնն¹ տարցի: Ապա թէ ոչ կարասցէ հասանել ի մեծաբոյս տեսութիւնն բանս մեր², նա արտաքոյ այսր ամբաստանութեան գտցի, յոչն կամելոյ կարծիս տալոյ³ յաշակերտան լինել ինչ աջողակ⁴, ճողոպրեալ ի պարսաւանացն⁵: Բայց մեք յիրաւի պարտապանք գտցուք պարսաւադիտացն, իբրո՞ւ⁶ ոչ կարացեալք տանել ի փոքր բնութեան սրտիս մերում⁷ զպատմաւղ վարդապետին իմաստութիւն: Բայց է⁸ ոչ փոքր առաջիկայս մեզ ի տեսութիւն ուշ նպատակի՝ եւ ոչինչ քան զոք աշխարհիս⁹ սքանչացմանց¹⁰ զերկրորդ տեղի բերելով: Բայց ինձ¹¹ թուի¹² թէ եւ մեծ եւս է քան զիւրաքանչիւր ոք ի ծանուցելոցն, վասն զի ոչինչ¹³ այլ ինչ¹⁴ Աստուծոյ յէիցս նմանեալ է, բայց այն¹⁵ միայն, որ ըստ մարդոյն է ստեղծուած¹⁶: Ապա ուրեմն առ¹⁷ բարեբարոյ¹⁸ լսաւդացն առձեռն¹⁹ պատրաստ է մեզ ի վերայ ասացելոցս²⁰ թողութիւն լինել, զի թէպէտ եւ յոյժ ի վերջ յարժանաւորութեան մնասցէ բանս: Քանզի պարտ է, որպէս կարծեմ, զառ ի մարդն ամենեցուն²¹ այնոցիկ, որ յառաջն լինել հաւատացան, եւ որ յետոյ յառաջ գալ²² ակնկալութիւն տան լինել, եւ այժմս²³ տեսեցելոց, ոչինչ բառնալ թողուլ առանց խուզի եւ հարցման²⁴: Քանզի պակասագոյն խոստմանն փոյթ յանդիմանեալ²⁵ լիցի, զի²⁶ եթէ մարդոյն առաջի-

1 *h* ակնարկութիւնն
 2 *Ae* չիք բանս մեր
 3 *Ae* տալ
 4 *eh* յաջողակ
 5 *h* պարտապան
 6 *e* իբր
 7 *Ae* չիք մերում
 8 *abc* է եւ
 9 *b* յաշխարհի *cdeghi* յաշխարհիս
 10 *e* սքանչանցմանց *i* սքանչմանց
 11 *d* չիք ինձ
 12 *e* թուի
 13 *A* չիք ոչինչ
 14 *h* չիք այլ ինչ
 15 *Aeh* այնր
 16 *e* ստեղծուած
 17 *defh* չիք առ
 18 *A* բարեբարս *fg* բարեբարւոյ
 19 *d* առ ձեռան
 20 *abfghi* ասացելոցն
 21 *dfi* ամենեցունց
 22 *e* գան
 23 *a* յայժմս *gi* յայժմ
 24 *d* հարցմանց *e* հարցան
 25 *d* յանդիման լեալ
 26 *h* չիք զի

կայ ի¹ տեսութիւն թողցի ինչ, որ եկեալ մատուցանիցի² ի հիմնս: Այլ եւ որ³ թուի⁴ ինչ զնովաւ ընդդէմ գոլ վասն ոչ զնոյնս այնոցիկ, որ ի սկզբանէ եղելոցն եւ այժմ ի բնութեանն տեսանել ի ձեռն հարկաւոր իմն կարգի, ի գրոց պատմութենէ եւ ի խորհրդոց՝ զմտաւ ածելոյ գտանելով, ինչ կատարել պարտ է եւ յարմարել, որպէս զի դիպեսցի ամենայն առ ինքեան հիմնն⁵ ընդելուզմամբ եւ դասիւ այնոցիկ, որ ընդդէմն ինչ թուին ունել, առ միեւնոյն կատարած եկեալք միաբանութեամբ: Այսպէս աստուածային⁶ զաւրութեանն յոյս այնոցիկ, որ առաւելն են քան զյոյս, եւ գամս, եւ հնարս, եւ պաճարանս՝ անհնարիցն գտեալ⁷: Բայց յաղագս հաւաստի եւ յայտնի գիտութեան բարւոք⁸ եւ բաւական ունել կարծեցի⁹ ի գլուխս քեզ գոլ¹⁰ դնել զբանն, զի ունիցիս զամենայն իրաց զգործս ի սակաւու գիւրաքանչիւր ձեռնարկելոցն գիտել զզաւրութիւնն¹¹:

¹ bc չիք ի

² Aace մատուցանիցէ

³ abg չիք որ

⁴ e թւի f ինչ թուի

⁵ f հիմնն կարգաւ

⁶ c աստուածային

⁷ acdhi գտանել

⁸ e բարիոք f բարոք

⁹ bh կարծիցի c կարգեցին

¹⁰ a գոլ առաջ ci առաջի

¹¹ e զաւրութիւն

**Բ. [ՅՈՐՈՒՄ Է ԻՄՆ ՄԱՍՆԱԻՈՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐ-
ՀԻՍ ԲՆԱԽԱԻՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԻՄՆ ԵՒ ՊԱՅԾԱՌ-
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ] ՅԱՂԱԳՍ ՆԱԽԵՂԵԼՈՑՆ ՔԱՆ ԶՄԱՐ-
ԴՈՑՆ ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ⁽⁶⁾**

«Այս գիրք լինելութեան երկնի եւ երկրի»,¹ ասէ Գիր¹ (Ծն. Բ. 4), յորժամ եղեալ կատարեցաւ ամենայն երեւելիդ, եւ իւրաքան-
չիւր ոք² յէիցդ առ իւր գիրն հասուցեալ որոշեցաւ: Եւ յորժամ
չուրջ առեալ փակեաց զամենայն ինչ երկնային³ մարմինն, եւ
զմիջինն ամենայնի առեալ ընկալաւ⁴ տեղի ծանունքն եւ վայրա-
բերք⁵ մարմնոցն՝ երկիր եւ ջուր զմիմեանց բուռն հարեալ: Քան-
զի կապ իմն եւ հաստատութիւն եղելոցն աստուածային⁶ արու-
ւեստն եւ զաւրութիւնն ի բնութեան⁷ էիցն եղաւ: Կրկին զաւրու-
թեամբ⁸ գործոց երասանակս⁹ ի ձեռն առեալ՝ վարէ զամենայն,
քանզի կալովն եւ շարժամբ զլինելութիւն այնոցիկ, որ ոչն են,
եւ զկալ մնալ զէիցն հնարեաց: Առ ծանր եւ անփոփոխելի¹⁰ ան-
շարժ¹¹ բնութեանն իբրու¹² առ հաստատուն իմն սայլն զարա-
գաշրջանակին¹³ խաղացմունս շուրջանակի վարելով՝ եւ ի ձեռն
միմեանց երկոցունց¹⁴ շատագովէ զհաստատուն անլուծութեանն:
Շրջաբերական բնութեանն ի ձեռն արագ շարժմանն զխճող եւ
զհոծ երկիրս¹⁵ շուրջանակի պնդելով՝ այն որ կարծր է եւ անտեղի-
տալի ի ձեռն անփոփոխ կառուցեալ հաստատութեանն, միշտ
պրկելով այնոցիկ, որ զնովմբ իսկ հիւ գայցեն շրջանակաւն:
Զոյգ ըստ երկոցունց¹⁶, որ գործովն ի միմեանց քեցեալ են, առա-

¹ ei չիք Գիր
² h չիք ոք
³ ac երկնային
⁴ c ընկալաւ
⁵ e վայրաբեր
⁶ c աստուածային
⁷ h բնութիւն
⁸ e զաւրութեամբ
⁹ c երեսանակս h երեսանակաւ
¹⁰ c անփոփոխ
¹¹ acfi անշարժութեանն փխ անշարժ բնութեանն
¹² i իբրեւ
¹³ i զարագաշրջանակին
¹⁴ c երկոցունց
¹⁵ Ae երկիրս
¹⁶ c երկոցունց

ւելութիւն գործեցաւ ի հաստատուն բնութեանն եւ յանհաստատ շրջաբերութեան: Քանզի ոչ երկիր յիւրմէ կայանէն¹ փոփոխեալ լինի, եւ ոչ երկին երբեք ուժգնութեանն թոյլ տայ եւ արձակէ զշարժումն²: Արդ, այսք եւ նախք ըստ արարողին իմաստութեան, իբրու սկիզբն իմն ամենայն հնարից յառաջագոյն կազմեցաւ էիցն, ցուցանելով, որպէս կարծեմ, մեծին Մովսէսի³ ի ձեռն ի⁴ սկզբանէ գերկինն եւ գերկիր յԱստուծոյ եղեալ ասել, վասն զի շարժման եւ կայանի ծնունդք այնք, որք⁵ յարարածս երեւելիք ամենայն ըստ աստուածային կամացն ի գոյութիւն լինելութեան⁶ ածան: Արդ, երկնի եւ երկրի⁷ յանգիւնագծէն⁸ առ միմեանս⁹ ըստ ընդդիմաւորին արդեամբք¹⁰ ի¹¹ գործոյ միմեանց բաժանելոցն¹², այն որ ի մէջ ընդդիմակացն¹³ արարած, մասամբ առընթեր եղելոցն¹⁴ կցորդութիւն կալեալ, ինքնին միջնորդ լինի ծայրիցն¹⁵, իբրու յայտնագոյն լինել զառ միմեանս ընդդիմակացն¹⁶ ի ձեռն միջակին¹⁷ ի միասինն խառնուածոյ¹⁸: Քանզի մշտախաղացն եւ նուրբն հրային բնութեանն նմանութիւն իմն բերէ աւդ¹⁹ ընդ²⁰ թեթեւ բնութեամբն եւ առ ի շարժումն դիպաւորապէս ունել: Այլ սակայն ոչ այնպիսի է, որպէս թէ առ հաստատունս յազգաւցութենէ աւտարանալ, եւ ոչ յաւէտ անշարժ, եւ ոչ հանապազորդ հոսելով եւ սփռելով, այլ առ երկոսինն ընտանութեամբ²¹, իբրու զի²² միջասահման²³ իմն ներգործութեան²⁴ իւրեանց ընդդիմութեանն

¹ e կապնէն

² Ace զշարժմունս

³ dfggh Մովսէսի

⁴ abfghi չիք ի

⁵ d որ

⁶ b լինելութիւն

⁷ c երկին եւ երկիր

⁸ c ի յանգիւնագծէն e անկիւնագործէն

⁹ cdfi միմեանց

¹⁰ e արդեամբն

¹¹ e չիք ի

¹² acdefghi բաժանեցելոցն

¹³ f ընդդիմակա

¹⁴ A ելոցն

¹⁵ Ae ծայրի

¹⁶ d դիմակացն

¹⁷ d միջակին

¹⁸ e խառնուածոյ

¹⁹ abcghi աւդդ

²⁰ abcghi չիք ընդ

²¹ abcf ընդանութեամբ

²² b չիք զի

²³ b գմիջահասման c միջահասման

²⁴ Ae չիք ներգործութեան

լինի՝ խառնելովն միանգամայն¹ եւ բաժանելով յինքեան² զկայունսն բնութեամբ: Ըստ նմին բանի եւ խոնաւ³ բնութիւնն երկդմի⁽⁷⁾ որակութեամբ⁴ առ երկոսին⁵ ընդդիմակսն յարմարի: Այնու, որով ծանրն եւ⁶ վայրաբերն է, բազում առ երկրայինսն⁷ զազգակցութիւնն ունի: Եւ այնու, որով կցորդութիւնն⁸ ունի հոսանուտ իմն ծորմանց եւ գնայուն⁹ գործոյ, ոչ ամենեւին ի շարժելի բնութենէն ակտարացեալ է: Այլ է իմն եւ ի ձեռն սորա խառնուած¹⁰ ընդդիմակացն եւ ժողով՝ ծանրութեանն՝ ի շարժումն փոփոխելոյ, եւ շարժմանն՝ [ոչ կապեալ ի շղթայս ծանրութեանն]⁽⁸⁾, առ միմեանս միաբանեալ, այն որ ըստ ծայրագունին բնութեամբ է ի միմեանց բաժանեալ, ի ձեռն միջնորդացն ընդ միմեանս միացեալք: Եւ յաւէտ, ըստ հաւաստի եւ ճշմարիտ բանին, եւ ոչ նոյն ինքն հակառակորդացն բնութիւնն առանց խառնելոյ ամէնեւին առ միւս¹¹ զառանձնաւորութիւնսն ունի¹², որպէս կարծեմ¹³, առ միմեանս կողմն¹⁴ հայելով, ըստ աշխարհիս բերեալ: Եւ ի միասին շնչելով⁽⁹⁾ խառնի առ ինքն¹⁵ արարածս՝ ի հակառակացն առանձնաւորութեան գտեալ: Քանզի շարժումն ոչ միայն ըստ տեղական փոփոխման իմացեալ լինի, այլ եւ յեղյեղմամբ¹⁶ եւ այլայլութեամբ տեսանելով: Եվ դարձեալ անշարժ եւ անփոփոխ բնութեանն, զայն որ ըստ այլայլելոյ շարժումնն է, ոչ¹⁷ ընկալեալ¹⁸, փոփոխելով զառանձնաւորութիւնսն, Աստուծոյ իմաստութիւնն¹⁹ այնմ, որ յաւէտաշարժն է՝ զանյեղյեղուկն, իսկ անշարժին՝ զյեղյեղումն²⁰ գոր-

1 f միանգամ
 2 Ae չիք յինքեան b f յինքեանս
 3 Ae նայ փխ խոնաւ
 4 i բնութեամբ փխ որակութեամբ
 5 h երկոսեալ
 6 Aab եւ ի
 7 acgi երկրայինս b երկոսինս փխ երկրայինսն
 8 Aeh կցորդութիւն
 9 A գնաւուն bde գնաուն
 10 e խառնուած
 11 Ae միւս եւսն
 12 abcdghi ունին
 13 abcdghi կարծեմ ամենեւին
 14 abc չիք կողմն
 15 i այսինք փխ առ ինքն
 16 ei յեղյեղմամբ
 17 abcdghi չիք ոչ
 18 c ընդալեալ
 19 cdfi իմաստութեանն
 20 c զյեղյեղումն

ծեաց յառաջախնամութեան¹ իմն գիտութեամբ², ինձ թուի թէ զայսպիսիսս մատակարարեալ, որպէս զի մի գաստուածայից³ [Օ]⁽¹⁰⁾ բնութեանն զառանձնաւորութիւն, որ է անշարժ եւ անփոփոխ, ի վերայ ուրուք, որ ըստ արարածոցս իցէ տեսեալ, Աստուած կարծել զարարածս առնիցէ⁴: Քանզի ոչ եւս այնուհետեւ աստուածութեան կարծիս յինքեան տացէ, որ ինչ շարժման եւ հնանալոյ հասանէ: Վասն այսորիկ երկիր հաստատուն է եւ ոչ առանց յեղլոյ, իսկ երկին ի հակառակէն զյեղյեղուկն յինքեան ոչ ունելով՝ եւ ոչ զհաստատութիւնն ունի, զի կայուն բնութեանն՝ զյեղյեղումնն, իսկ անյեղկին⁵՝ զշարժումն⁶, աստուածայինն ընդ նմա⁷ ելով⁸ զաւրութիւնն: Եւ ընդ նոսա երկոսին փոփոխմամբ առանձնաւորութեանցն առ միմեանս ընտանացուցէ⁹, եւ յայնմանէ, որ աստուածութեանն կարծիս տայ, աւտարացուցէ: Քանզի եւ ոչ մի ինչ այս նոյնիցէ¹⁰, որպէս ասացեալ է¹¹, թէ աստուածային¹² բնութեանէն ոք կարծեսցի՝ ոչ զանկայն զանհաստատն¹³, եւ ոչ¹⁴ զայլայլելին⁽¹¹⁾: Ահա այսուհետեւ ամենայն ինչ առ իւրն կատարած եհաս ժամանեալ: «Քանզի կատարեցաւ», որպէս ասէն Մովսէս, «երկին եւ երկիր» (ԾՆ. Բ 1), եւ որ ի մէջ նոցա ամենայն ինչ: Եւ զոյգ, եւ հարթ, եւ արժանաւոր գեղեցկութեամբ իւրաքանչիւր ոք ի նոցանէն զարդարեցաւ՝ երկին¹⁵ լուսաւորացն ճառագայթիւք եւ ծով, եւ աւղ՝ զուղակաւք¹⁶ եւ աւղային կենդանի թռչնովք¹⁷: Եւ երկիր՝ ամենազան եւ բազմապատիկ տնկոցն¹⁸ եւ արաւտականացն զանազանութեամբ¹⁹, զորս միանգամայն զամենեսին²⁰ աստուածային

¹ c յառաջնախնամութեան

² e գիտութեան

³ e աստուածային

⁴ Ae առնիցեն

⁵ dgi անյեղկին

⁶ Ad զշարժումնն

⁷ c նմայ

⁸ b մնալով փխ ելով e մանելով h լինելով d ելով մասնաւոր

⁹ bcef ընդանացուցէ i ընտանացուցանէ

¹⁰ Ae նոյնէ c նոյնից

¹¹ a է ասացեալ cdgfi չիք է

¹² cdghi յաստուածային

¹³ A զանկայանն անհաստատ

¹⁴ Aabfgzhi զանայլայլելին փխ զայլայլելին e զայլայլին A զայլայլելին անշարժ

¹⁵ i երկին եւ

¹⁶ ah զաւղակաւք bcdfi լաւղակաւք

¹⁷ Ah թռչնաւք

¹⁸ ag տնկոցն

¹⁹ abcdfghi զանազանութեամբք

²⁰ h զամենեսան

կամաւքն զաւրացեալ, ի միասին առհասարակ ծնաւ: Եւ լի էր¹ Լեւրամբք [բերիւք]⁽¹²⁾ երկիր՝ ի միասին միանգամայն ծաղկաւք զպտուղս բուսուցեալ: Եւ լի մարգք² եւ բուրաստանք, որ ինչ միանգամ ի նոսա բնութիւն է լինել: Եւ ամենայն ողունք³, ծորք եւ ծործորք⁴, եւ սարք, եւ ամենայն, որ⁵ ինչ միանգամ կողմանաւոր⁶ է⁷ եւ գառիկող⁽¹³⁾, եւ որ ինչ միանգամ ի հովիտս նորափթիթ դալարի: Եւ բազմապատիկ ծառոցն ժամանակ⁽¹⁴⁾ պսակեալ⁸ էր՝ արդի եւս յերկրէ ի վեր բուսեալ եւ անդէն առ կատարեալ գեղեցկութիւնն հասեալ: Եւ խնդայր եւ զուարճացեալ⁹ էր ամենայն ինչ ըստ վայելչութեան եւ խայտայր, հրամանով¹⁰ Աստուծոյ կենդանածնեալ, արաւտականք յանդեայս¹¹ եւ յազգս իւրաքանչիւր՝ ի թփուտ մացառս այսր-անդր ընթանալով: Երաժշտական թռչնոցն երգովք ամենայն վայրք հնչէին, ամենայն, որ ինչ միանգամ թաւ եւ տերեւախիտ էր եւ հովանուտ: Եւ ծովային դէմքն, որպէս վայել է, այլ այսպիսի իմն, զոր արդ առ ի խաղաղութիւն եւ ի դադարումն ի ժողովս հովտացն արարեալ, յորում նաւահանգիստք եւ¹² նաւակայք¹³ Աստուծոյ կամաւք ի¹⁴ ծովեզերսն ինքնեակք փորեալք, յապա հովացեալ¹⁵, ընտանեցուցանէին¹⁶ ընդ ցամաքի զծովն: Եւ հանդարտագոյն¹⁷ եւ հեզիկ ալեացն շարժմունք ի¹⁸ գեղեցիկ ձմեռանցն [մարգացն]⁽¹⁵⁾ գեղեցկացեալ պայծառանային, ի նուրբ եւ ի մանր-մանր¹⁹ եւ յանվնաս սքոց ըստ արտաքին երեսաց ի վերայ մկանանցն²⁰ պայծառապէս քստմնեալ՝ ծածանէր: Եւ ամենայն, որ

1 i է
 2 efi մարգ
 3 A չիք ողունք
 4 abcdfghi ծոծորք
 5 c որ է
 6 i կողմնաւոր
 7 Ae չիք է
 8 f հասեալ ՚իխ պսակեալ
 9 e զւարճացել
 10 abcdfghi հրամանաւ
 11 bcdgh ի յանդեայս e յանդայս
 12 acdghi եւ արդ
 13 c նաւակայք
 14 c չիք ի
 15 abcgi հովացուցեալ he հովացուցելք hi հովացեալ են
 16 abh ընտանեցուցանեն c ընդանացուցանեն df ընտանացուցանեն e ընդանեցուցանէին i ընդանացուցանէր
 17 adgh հանտարտագոյն
 18 A d չիք ի
 19 e մանր ՚իխ մանր-մանր
 20 c մկանաց

ըստ արարածոցս մեծութիւնն է ըստ երկրի եւ ծովու¹, պատրաստ էր², այլ որ ընդունէրն, չգոյր³:

¹ *c* ըստ ծովու եւ երկրի

² *c* չիք էր

³ *A* չգոյր մարդ

Գ. ԸՆԴԷՐ¹ Ի ՎԵՐՁԷ ՅԵՏ ԱՐԱՐԱԾՈՅՆ² ՄԱՐԴՆ

Քանզի չեւ եւս մեծս այս եւ պատուական ստացուած³ մարդս յաշխարհի մէջ էիցն⁴ վայրի⁵ շրջէր: Քանզի⁶ ոչ էր վայելուչ իշխանին յառաջ քան որոց իշխելոցն⁷ էր երեւել, այլ նախ իշխանութեանն յառաջագոյն պատրաստեցելոյ կարգաւորէր ցուցանել զայն, որ թագաւորելոցն էր: Վասն զի այնպիսի, որպիսի⁸ արքունիս իմն ի բնակութիւն այնմ, որ հանդերձելոցն էր թագաւորել, ամենայնին արարիչն յառաջագոյն կազմեալ պատրաստեաց: Եւ էր այս երկիր⁹ եւ կղզիք, եւ ծովք, եւ երկին ի վերայ սոցա զաւրէն ձեղուան քողարկեալ¹⁰, եւ մեծութիւն ամենապատիկ յարքունիսս¹¹ յայսոսիկ ի ներքս համբարեցաւ¹²: Եւ մեծութիւն ասեմ զամենայն արարածս, որ ինչ միանգամ¹³ ի տունկս¹⁴ եւ ի բոյսս է, եւ որք¹⁵ միանգամ զգայուն¹⁶ եւ շնչաւոր եւ¹⁷ հոգեւոր է: Ապա եթէ պարտ իցէ¹⁸ եւ զնիւթսն ի մեծութեան¹⁹ թիւ համարեալ, որք միանգամ ի ձեռն գեղեցկագունութեան պատուական²⁰ մարդկային²¹ աչացս համարեցան՝ ոսկի եւ արծաթ, եւ քարինքն այն, զորս²² սիրեն մարդիկ²³: Եւ զայսց²⁴ ամենեցուն²⁵ զբազմութիւն ա-

¹ c չիք ընդէր ... մարդն
² abdh արարածոցս f արարածոյն
³ e ստացուածս
⁴ e էիցն ի
⁵ Aceghi վայրի բնակեալ
⁶ i Ձի փխ Քանզի abcdfghi Քանզի եւ
⁷ i իշխեցելոց
⁸ d որպէս
⁹ c երկիրս
¹⁰ acdhi քաղարկեալ
¹¹ i ցարքունիսս
¹² i համարեցաւ
¹³ e միանգամ
¹⁴ abdg տունկս
¹⁵ Ae որքան
¹⁶ e սգաուն
¹⁷ d չիք եւ
¹⁸ A է փխ իցէ
¹⁹ e մեծութիւն
²⁰ e պատուականք
²¹ Acfh մարդկան
²² abefghi որ cd զոր
²³ h մարդիք
²⁴ e զայլոց
²⁵ abdfghi ամենեցունց c ամենեցոց

ուստույթեան զաւրէն իմն¹ արքունական գանձուց յերկրիս² ծոցս³ ծածկեալ թաքոյց⁴: Այսպէս ցուցանէ յաշխարհի զմարդն յայնոսիկ, որ ի սմա սքանչելիքս են, է որոց տեսաւդ եղեալ, եւ է որոց Տէր իբրու ի ձեռն վայելչութեանն⁵ զհանճար իմաստութեան տուաւդին ունել: Իսկ ի ձեռն գեղեցկութեանն եւ մեծութեանն, որք տեսեալն լինէին, զանճառն եւ զի վերն քան զբան, զարարչին զաւրութիւն, ի վեր բերեալ քննելով: Վասն այսորիկ գկնի ածեալ մուծաւ⁶ յետ արարածոցն⁷ մարդն, իբրու⁸ ոչ եթէ խոտան եւ ի բաց ընկեալի⁹ ի վերջէ թողաւ, այլ իբրու անդէն իսկ թագաւորել¹⁰ լինելովն այնց, որք ընդ ձեռամբն էին լինելոց առաւելեալ: Եւ իբրու¹¹ առատ ոք եւ քաջ, որ ի հաց կոչէ¹² ոչ յառաջ քան զպատրաստել զխահսն զայն, զոր¹³ կոչելոցն է, ի տուն ածէ: Այլ պատրաստ գամենայն ինչ արարեալ եւ պայծառացուցեալ վայելչական զարդուքն, զտունն, զժողովետղն, զսեղանն, եւ իբրեւ ահա պատրաստէ խրախութեանն անկք¹⁴ պիտոյից, ի տուն եկեալ¹⁵, ածէ զհացկերոյթն¹⁶: Ըստ¹⁷ նմին աւրինակի մեծն եւ բազմապատիկ բնութեանն¹⁸ հացտու¹⁹ ամենապատիկ գեղեցկութեամբ զարդարեալ²⁰ զբնակութիւնն տանն եւ զմեծս զայս եւ զամենազան ամենախահութիւն խրախճանութեան²¹ պատրաստեալ, այսպէս ապա ի ներքս ածէ զմարդն, զործ տուեալ²² նմա՝ ոչ զարարածս, որ ոչն գոյին, այլ զվայելչութիւն գոյիցն: Վասն այսորիկ²³

1 b չիք իմն

2 ah յերկրիս ի

3 b չիք ծոցս e ծոց

4 f թաքոյց

5 e վայելչութեանն եւ

6 abcdefghi մուծանի

7 abcdefghi արարածոյն

8 abcdefghi իբր

9 i ընկի

10 acd թագաւորեալ

11 e իբրեւ

12 abcdefghi կոչիցէ

13 b որ

14 abcdfhi անկք

15 bcdh ելեալ

16 abcdfghi զհացկերոյթն

17 i ընդ

18 h բնութեանց i չիք բնութեանն

19 i չիք հացտու

20 e զարդարեց

21 d խրախութեան

22 a տուեալ

23 ace այսորիկ եւ

43. Հունարեն բնագրում ասված է (PG 44, 152A). ταῦτα πάντα τὴν ἐν ταῖς νεύραις τοῦ πλήκτρου κίνεσιν ὑποκρίνεται (զայս ամենայն, զայն որ յաղիսն կնտնտոցին շարժումն որոշեալ): Հայերեն թարգմանություն մեջ վերջում ավելացրած է «երգեսցէ» բառաձևը, որը չկա հունարեն բնագրում:

44. Հունարեն բնագրում (PG 44, 152A) ասված է. καὶ τὴν ἀρμοίαν τοῦ μέλους (Եւ զյարմարութիւն* նուագի): Հայերեն թարգմանություն մեջ սրա փոխարեն ունենք՝ «ըստ յարմարութեան նուագի»:

45. Հունարեն բնագրում ասված է (PG 44, 152B). ή μὲν πρὸς ἐργασίαν ἡχῆς (է որ առ գործաւորութիւն հնչման): Սակայն հունարեն ἡχῆς (հնչման*) բառաձևը, աղծատվելով հունարեն ձեռագրում, դարձել է ψυχῆς (շնչոյն) և այսպես էլ թարգմանվել հայերեն: Ավելի պակաս հավանական է նրա աղծատումը հայերեն ձեռագրերում:

46. Հունարեն բնագրում (PG 44, 152C) ասված է. καὶ ποῖα δοχεῖα τῶν ἐντιθεμένων τῇ ἀκοῇ νοεμάτων (եւ ո՞յք իցեն ամանք ի ներքս եղելոցն ի լսելիս իմանալեացն): Սակայն գրիչները մեծ մասամբ աղավաղել են «ամանք*» (δοχεῖα) բառաձևը, ուստի հայերեն թարգմանութեան մեջ հանդես են գալիս «ամենեքին», «ամենեքեան» և «ամենեքեանք» սխալ տարբերակները:

47. Հունարեն բնագրում ասված է (PG 44, 152D). τοιαύτην τινὰ βλέπω καὶ τὴν τοῦ νοῦ πόλιν (այսպիսի իմն տեսանեմ եւ զմտացն քաղաք): Սակայն հունարեն τοῦ νοῦ (զմտացն*) բառաձևը, հավանաբար, աղավաղվելով հունարեն ձեռագրում, չփոթվել է տῷ ἀνθρώπου (զմարդոյն)-ի հետ և հայերեն թարգմանվել որպէս «զմարդոյն» (տե՛ս նաև ծ. 24):

48. Հունարեն բնագրում (PG 44, 152D) ունենք՝ τῆς γνώσεως (գիտութեան*): Վերջինս հունարեն ձեռագրում աղավաղվելով ու չփոթվելով τῆς φύσεως (բարուց, բնութեան)-ի հետ, հայերեն թարգմանվել է «բարուց»:

49. Հունարեն բնագրում (PG 44, 153B) ունենք՝ Διαφόρον (զանազան են): Սակայն հունարեն διάφορος (զանազան*) բառաձևը, աղավաղվելով ու չփոթվելով հունարեն φανερός (յայտ, յայտնի)-ի հետ, այդպես էլ թարգմանվել է հայերեն:

50. Հունարեն բնագրում (PG 44, 153B) ունենք՝ ἀδιάκριτον (անորոշելի*) բառաձևը, որը աղավաղման պատճառով, գրկվելով ժխտական մասնիկից, դարձել է διάκριτον (որոշելի): Հայերեն թարգմանութեան մեջ «որոշելի»-ին կցվել է «տրոհեալ» հոմանիշը:

51. Հունարեն բնագրում (PG 44, 153C) ունենք՝ τὴν γῶσιν ἐντίθησιν (զգիտութիւնն դնէ): Հայերեն թարգմանութեան մեջ «զգիտութիւնն»-ից հետո ավելացրած է «ի մեզ» բառակապակցութիւնը, որ չկա հունարեն բնագրում:

52. Հունարեն բնագրում ասված է (PG 44, 153C). Ὅτι ἀθεώρητος ἡ τοῦ ἀνθρώπου φύσις (Զի անտեսանելի է մարդոյն բնութիւն): Համաձայն այս գլխում շարադրած Նյուսացու պատկերացումների՝ անտեսանելի է ոչ թե մարդու, այլ մտաց բնութիւնը, ուստի սխալն առաջացել է հենց այս նույն հունարեն բնագրում τοῦ νοῦ (մտացն)-ի աղավաղման ու նրա չփոթման տῷ ἀνθρώπου (մարդոյն)-ի հետ (տե՛ս ծ. 24, 47): Հետաքրքրական է նշել, որ հայերեն թարգմանութիւնը, որտեղ ասված է՝ «Զի անտեսանելի է մտացն բնութիւն», ինչպես

նաեւ անզիւրեանը՝ «*That the Nature of Mind is Invisible*» (*MM, Chap. XI*) արված են մեկ այլ ճշգրիտ հունարեն ձեռագրից, մինչդեռ ուսուցիչն թարգմանութեան մեջ (Лурье, с. 40), որը հետևում է սույն հունարեն բնագրին, ասված է. «О том, что природа человеческая несозерцаема»:

53. Հունարեն բնագրում ասված է (*PG 44, 153D*). «Τίς ἔγνω νοῦν Κυρίου;» φησὶν ὁ Ἀπόστολος. (Ո՞ ծանեաւ զմիտս Տեառն,- ասէ Առաքեալն): Հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է «ասէ» բայը:

54. Հունարեն բնագրում (*PG 44, 156C*) ասված է. Ἐξέτασις, ἐν τίνι τὸ ἡγεμονικὸν νομιστέον, ἐν ᾧ καὶ περὶ δακρύων καὶ περὶ γέλωτος φυσιολογία, καὶ θεώρημά τι φυσικὸν περὶ τῆς κατὰ τὴν ὕλην, καὶ τὴν φύσιν, καὶ τὸν νοῦν κοινωνίας (Հարցումն քննութեան, յորում իմիք առաջինն եւ իշխանականն համարելի է, յորում եւ յաղագս արտասուաց եւ ծաղու բնախաւսութիւն եւ տեսութիւն իմն բնական յաղագս այնր, որ ըստ նիւթոյն եւ բնութեանն եւ մտացն է հասարակութիւն): Հայերեն թարգմանութեան մեջ այս վերնագիրը թերի է, սրա երկրորդ մասը՝ «Տեսութիւն իմն բնական յաղագս այնր, որ ըստ նիւթոյն եւ բնութեանն եւ մտացն է հասարակութիւն» (θεώρημά τι φυσικὸν περὶ τῆς κατὰ τὴν ὕλην, καὶ τὴν φύσιν, καὶ τὸν νοῦν κοινωνίας) անջատվել ու դարձել է սույն գլխի երկրորդ մասի վերնագիրը, որը այսպիսով դիտվել է որպես առանձին գլուխ: Նույնը տեղի է ունեցել՝ ըստ Ֆորբսի (*Forbes*) լատիներեն տարբերակում, որին մոտ է Հայերեն թարգմանությունը (*MM, Chap. XII, com. 5*):

55. Հունարեն բնագրում (*PG 44, 157B*) ասված է. Καὶ τῶν ἀτμῶν αἱ ποιότητες διὰ τῆς τῶν ὁσφρήσεων ὀλκῆς ἐν αὐτῷ διακρίνονται (Եւ գոլոշեաց որակութիւնք՝ ի ձեռն հոտոտելեացն ձգելոյ, ի նմա որոշեալ ընտրին): Հայերեն թարգմանութեան մեջ հունարեն բնագրի ἀτμῶν (գոլոշեաց*) բառաձևը թարգմանվել է որպես «հիւթ հոտոցն»: Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող Հայերեն թարգմանութեան ցանկերում» (*Indices to the Armenian Version of Pseudo-Dionysius the Areopagite*) ἀτμός-ի դիմաց նույնպես ունենք «հիւթ» (48): Ռուսերեն թարգմանութեան մեջ ասված է (Лурье, с. 45). «И в той части [оболочки мозга] различаются свойства запахов, которые втягиваются внутрь органами обоняния»: Նմանապես անզիւրեան թարգմանութեան մեջ (*MM, Chap. XII, 2*) ունենք. «while the qualities of scents are discerned in it by being drawn in through the nose»:

56. Հունարեն բնագրում (*PG 45, 157B*) ասված է. ἐπὶ τὸν ἡθμοειδῆ πόρον (ի մաղաձեւ գնացս), սակայն հունարեն ձեռագրում ἡθμοειδῆς (մաղաձեւ*) բառաձևն աղավաղվել ու չփոթվել է ἰσθμώδης (պարանոցուտ, պարանոցաձեւ)-հետ, որի պատճառով Հայերեն թարգմանութեան մեջ հանդես է եկել «մաղաձեւ»-ի փոխարեն «պարանոցուտ» (տե՛ս նաև ծ. 42):

57. Հունարեն բնագրում (PG 44, 157D) ասված է. φρεῖτιν τὸ πάθος καλοῦντες, ἐπειδὴ φρένες τοῖς ἕμέσει τούτοις ἔστι τὸ ὄνομα (մտաբախ գախտս գայս կոչեն, վասն զի միտք պարուտակացս այսոցիկ է անուն): Հունարեն φρεῖτις (մտաբախ) նշանակում է նաև «տենդ»: Ինչ վերաբերվում է հունարեն φρένες-ին, ապա այն նույնպես երկու նշանակություն ունի՝ 1. ստոծանի, 2. միտք: Հիպոկրատը սխալ էր համարում այն կարծիքը, համաձայն որի միտքը կապված է ստոծանու հետ: «Սրբազան հիվանդություն մասին» աշխատության մեջ նա գրել է. «Ես պնդում եմ, որ մտքի վերծանողը ուղեղն է, իսկ ստոծանին իր անունը հավանաբար ստացել է պատահաբար կամ ըստ սովորույթի և ոչ՝ ճշմարտապես կամ ըստ բնություն: Եվ, իրոք, ես չեմ հասկանում, ինչ կապ կարող է լինել ստոծանու և մտքի ու մտածողության միջև» (60):

58. Հունարեն բնագրում (PG 44, 161A) ասված է. ὡσπερ συμβαίνει πολλάκις ἐπὶ τῶν μελωδεῖν μὲν ἐπισταμένων (զոր աւերինակ պատահէ երաժշտին՝ բազում անգամ ի նուագել ինչ մատամբք գիտացելոց): Հայերեն թարգմանություն մեջ «պատահէ» (συμβαίνει) բայաձևը բաց է թողած:

59. Հունարեն բնագրում (PG 44, 161B) ունենք՝ τεχνικὴν (գհմուտ*) բառաձևը, որը սխալմամբ թարգմանվել է «գրեական» (φυσικὴν):

60. Այս վերնագիրը հունարեն բնագրում առանձին գոյություն չունի, ինչպես և ողջ գլուխը, այլ կազմում է նախորդ գլխի շարունակությունը, որը սակայն հայերեն թարգմանություն մեջ դարձել է առանձին գլուխ (տե՛ս ծ. 54):

61. Հունարեն բնագրում (PG 44, 161D) ասված է. οἷόν τι κατόπτρον κάτοπτρον γινομένην (իբրևե հայելի հայելոյ եղեալ): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «հայելի» (κάτοπτρον) բառաձևը:

62. Հունարեն բնագրում (PG 44, 165A) ունենք՝ αἰτιολογία (պատճառագիտություն*), սակայն վերջինս՝ աղավաղվելով, շփոթվել է մեկ այլ հունարեն բառաձևի՝ ἀντιλογία-ի հետ ու սխալմամբ թարգմանվել որպես «հակառակաբանություն»:

63. Հունարեն բնագրում (PG 44, 165B) ունենք՝ ἐν τῷ μέρει μεταλαγχάνουσαν (մասնակից* եղեալ): Վերջինս հայերեն թարգմանություն մեջ մեկնաբանվել է՝ «ի վերջէ հասեալ»: Սխալը հավանաբար առաջացել է μεταλαγχάνουσαν բառաձևի աղավաղման պատճառով ու նրա շփոթման փոխարինումը (ի վախճան հասեալ)-ի հետ:

64. Հունարեն բնագրում (PG 44, 165D) ունենք՝ ἀερώδεις (օդանման*) բառաձևը: Վերջինս հայերեն թարգմանություն մեջ մեկնաբանվել է որպես «անաւսունք եւ նուրբք» (ἀραιός καὶ λεπτός):

65. Հունարեն բնագրում (PG 44, 168A) ասված է. ὅτε ὁ ἀνθερεῶν ἐπὶ τὸ

κάτω τοῖς γαργαρεῶσιν ὑποκοιλαίνεται (յորժամ կողկողիթն ի ստորագոյն կողմն խոչափողիւքն գոգանայ): Միջնադարյան հայկական եզրաբանութեան մեջ «կողկողիթ» եզրը օգտագործվել է ինչպես կզակի, այնպես էլ սոսորդի (քիմքի լեզվակ-սնվա) իմաստով: Տվյալ կոնտեքստում այն հանդես է գալիս որպես «կզակ»: Բազմիմաստ էր նաև «խոչափող» եզրը. կողկողից բացի այն օգտագործվում էր նաև սոսորդի իմաստով, ինչպես տվյալ դեպքում:

66. Հունարեն բնագրում (PG 44, 168B) ասված է. τοῖς τόποις ἀπεμπτὸν τε καὶ ἀδιάνευστον: Հայերեն այն թարգմանվել է՝ «ի տեղիսն խաղճնելի եւ առանց գորշոյ ի դուրս արձակելոյ»: Հետաքրքիր է, որ հունարեն ἀπεμπτὸν (խաղճնելի) բառը, ուսեբեն թարգմանութեան մեջ մեկնաբանվել է որպես "непродоных" (Лурье, с. 54), մինչդեռ անգլերեն թարգմանութեան մեջ արտահայտված է նրա ճշգրիտ «undigested» իմաստը (MM, Chap. XIII, 4): «Խաղճնելի» բառը հազվագյուտ է հանդիպում միջնադարյան աղբյուրներում, ՆՀԲ-ում որպես նմուշ բերված է հենց այս օրինակը Նյուսայցու աշխատութեան հայերեն թարգմանութունից:

67. Հունարեն բնագրում (PG 44, 168B) ասված է. ὅτι τῆς φύσεως ἔχεται, συνεστῶσης μὲν καὶ ἐγρηγορίας (զի գընութենէն բուռն հարեալ, ունի միաբանեցելոյ եւ զարթնոյ), սակայն հայկական ձեռագրերի մեծ մասում սխալմամբ ավելացրած է «եւ քնոյ», որը այլ իմաստ է դնում այստեղ, այն է՝ «միաբանեցելոյ քնոյ եւ զարթնոյ», մինչդեռ հունարեն բնագրում խոսքը բնութեան միասնական վիճակի մասին է, որ բնորոշ է արթնութեանը:

68. Հունարեն բնագրում (PG 44, 168C) ունենք՝ τῷ ἀλογωτέρῳ (անբանաւորագունի*), սակայն հունարեն ձեռագրում ժխտական մասնիկի անկման պատճառով այն շփոթվել է օրոգաբանական (բանաւորագունի) բառաձևի հետ և հայերեն թարգմանվել որպես «բանաւորագունի»:

69. Հունարեն բնագրում (PG 44, 168D) ասված է. εἶδωλά τινα, καὶ ἀπηχήματα (երեւելիք իմն եւ արձագանք*), սակայն հունարեն ἀπηχήματα-ն հայերեն թարգմանութեան մեջ մեկնաբանվել է որպես «ժանտատեսիլք»: Սխալը հավանաբար առաջացել է հունարեն ձեռագրում ἀπήχημα-գոյականի աղավաղման պատճառով ու նրա շփոթման ἀπηγής (դաժան, ժանտատեսիլ) ածականի հետ:

70. Հունարեն բնագրում (PG 44, 169A) ասված է. τῶν κατ' αὐτὴν δυνάμεων διὰ τῆς ἐνεργείας (ըստ ի նմայն զաւրութեանց ի ձեռն գործաւորութեան): Հայերեն թարգմանութեան մեջ աղավաղված հունարեն δυνάμεων (զաւրութեանց*) բառաձևը սխալմամբ մեկնաբանվել է «մասանց», հավանաբար շփոթվելով նույն պարբերութեան մեջ առկա μερῶν բառի հետ:

71. Հունարեն բնագրում (PG 44, 169B) ասված է. καὶ κρατοῦντος τοῦ ἀλογωτέρου (եւ ըմբռնելոյ անբանաւորագունի): Սակայն հայերեն թարգմանու-

թյան մեջ «անբանաւորագունի*»-ն մեկնաբանվել է որպես «կշռագոյն համեմատելւոյն»:

72. Հունարեն բնագրում (PG 44, 169B) ունենք՝ ἐνέργεια (գործաւորութիւն*), որը հայերեն թարգմանութեան մեջ սխալմամբ մեկնաբանվել է «պէտքն» (χρεία):

73. Հունարեն բնագրում (PG 44, 169C) ունենք՝ προάγει τὸ μέλος (ածէ գնուագն*): Հայերեն թարգմանութեան մեջ հունարեն μέλος բառաձևի աղավաղման պատճառով այն շփոթվել է δάκτυλος-ի հետ ու թարգմանվել «զմատն»:

74. Հունարեն բնագրում (PG 44, 172A) ունենք՝ ὡς (իբրև թէ*) բառաձևը, սակայն հունարեն ձեռագրում այն աղավաղվել ու շփոթվել է ἔως-ի հետ և թարգմանվել «մինչ»:

75, 76. Հունարեն բնագրում (PG 44, 172 A, B) երկու անգամ հանդիպում է καθ' ἕνα (ի լրջէ*, արթուն) բառակապակցութիւնը, որը սակայն հայերեն թարգմանվել է որպես «ի վերջէ»: Նշեալում «ի լրջէ»-ի վերաբերյալ ենթադրութիւն է արվել, որ «վրիպակաւ արդեօք գրի եւ ի վերջէ»: Ավելի պակաս հավանական է ἕνα-ի շփոթելը οὐρά (վերջ) բառի հետ հունարեն ձեռագրերում:

77. Հունարեն բնագրում (PG 44, 172B) ասված է. διὰ τῶν ὀνείρων τῆς ἐμφανείας (ի ձեռն երազոցն յայտնութեան): Հայերեն թարգմանութեան մեջ բաց է թողած «յայտնութեան» բառը:

78. Հունարեն բնագրում (PG 44, 172D) ասված է. τῶ μνημονικῶ τῆς ψυχῆς τῶν μεθμερινῶν ἐπιτηδεμάτων τὰ ἀπηχίματα (յիշատակարանի ոգւոցն տուրնջեւնային գործոյն արձագանքն): Հայերեն թարգմանութեան մեջ հունարեն τὰ ἀπηχίματα (արձագանքն*) բառաձևը մեկնաբանվել է որպես «գարշատեսիլ ժիժմակքն»: Հետաքրքրական է նշել, որ այլ տեղում ἀπηχίματα-ն թարգմանվել է որպես «ժանտատեսիլք» (տես ծ. 69): Երկու դեպքում էլ ակնհայտ է կապը աղավաղված հունարեն ἀπηχίς (ժանտատեսիլ) բառի հետ:

79. Հունարեն բնագրում (PG 44, 172D) ունենք՝ κατάστασις (կարգ*) բառաձևը, որը հայերեն թարգմանութեան մեջ մեկնաբանվել է որպես «հիւթք»: Ա ձեռագրի լուսանցքում վերջինս ուղղված է՝ «կարգ»: Սխալը հավանաբար առաջացել է հունարեն ձեռագրում κατάστασις (կարգ)-ի աղավաղման ու նրա շփոթման κατάσταξις (կաթեղը, ծորելը)-ի հետ, որը սպա մեկնաբանվել է որպես «հիւթ»:

80. Հունարեն բնագրում (PG 44, 172D) ասված է. θεραπέων τινὰ τῶν ἐπιτηδείων ἑαλωκότα φρενίτιδι (բժշկելով գոմն ի մերձաւորաց ի մտաբախութենէ բմբունեցելոյ): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է τῶν

ἐπιτηδείων (ի մերձաւորաց) բառակապակցութիւնը, իսկ φρενίτιδι (ի մտաբախութենէ*)-ն մեկնաբանվել է որպէս «ի պատճառաց»:

81. Հունարեն բնագրում (PG 44, 173A) ունենք ἡτιᾶτο (մեղադրէր*) բախածուրդ, սակայն հունարեն ձեռագրում վերջինս աղավաղվելով չփոթվել է ἡτέιτο (խնդրէր)-ի հետ և հայերեն թարգմանվել որպէս «խնդրէր»:

82. Հունարեն բնագրում (PG 44, 173A) ասված է. ἀμβλυνοθείσης ὑπὸ τῆς νόσου τῆς νήψεως (բթեալ էր ախտիւ ի լրջութենէ): Հայերեն թարգմանութեան մեջ բաց է թողած «ախտիւ» (ὑπὸ τῆς νόσου) բառաձևը:

83. Հունարեն բնագրում (PG 44, 173B) ասված է. καὶ τῶν ἐν φλέγματι κακουμένων (եւ որք լորձով չարչարեալք են): Սակայն հունարեն ձեռագրում ἐν φλέγματι (լորձով*) բառակապակցութեան աղավաղման պատճառով այն չփոթվել է ἐν πνεύματι (չնչով)-ի հետ և հայերեն թարգմանվել որպէս «չնչով»:

84. Հունարեն բնագրում (PG 44, 173B-C) ասված է. Ἐτι δὲ καὶ πρὸς τὰς τῶν ἡθῶν καταστάσεις τυποῦται πολλοῖς τὰ ἐνύπνια (եւ առ բարուցն եւս կարգ սպաւորին բազմաց երազքն): Հայերեն թարգմանութեան մեջ καταστάσεις (կարգ*) բառաձևը սխալմամբ մեկնաբանվել է՝ «հիւթ» (տես ծ. 79):

85. Հունարեն բնագրում (PG 44, 173C) ունենք՝ καθ' ὕπαρ (ի լրջէ*) արտահայտութիւնը, որը հայերեն թարգմանութեան մեջ հանդես է գալիս վրիպակի ձևով՝ «ի վերջէ» (տես նաև ծ. 75, 76):

86. Հունարեն բնագրում (PG 44, 176A) ասված է. τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αὐξανομένην (որ կերակրի եւ աճէ): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ «որ աճէ» (αὐξανομένην)-ի փոխարեն ունենք՝ «որ զգայ» (αἰσθανομένην): Հաշվի առնելով, որ այստեղ խոսքը գնում է երեք կենսական գորութիւններից (1. բուսական, որ կերակրի առանց զգայութեան 2. կենդանական, որ կերակրի և զգայ 3. բանական, որ հատուկ է մարդուն) երկրորդի մասին, ուստի հունարեն բնագրում նույնպէս պետք է եղած լիներ τὴν δὲ τρεφομένην μὲν καὶ αἰσθανομένην (որ կերակրի եւ զգայ): Հետաքրքրական է, որ անգլերեն թարգմանութեան մեջ (MM, Chap. XIV, 2) հայերենի նման ասված է. «which at once receives nourishment and is capable of perception»: Իսկ ուսեբենում, որի հիմքում ընկած է արբահայր Ժ. Պ. Մինի կողմից հրատարակված հունարեն բնագիրը, ունենք՝ «питательную и растительную» (Лурье, с. 61): Կարելի է ենթադրել, որ հայերեն և անգլերեն թարգմանութիւնների հիմքում ընկած է եղել հունարեն բնագրի մեկ այլ տարբերակ, որը հարում էր լատիներեն ձեռագրախմբին: Իրոք, լատիներեն թարգմանութեան մեջ ասված է. «alia et nutriatur, et sentiat» (PG 44, 175B):

87. Հունարեն բնագրում (PG 44, 176B) ասված է. μηδεις δια τούτων υπο-
νοείτω τρεις συγκεκριοθησαι ψυχας εν τῷ ἀνθρωπίνῳ συγκρίματι εν ιδίαις περι-
γραφαῖς θεωρουμένας (Արդ, մի ոք սոքաւք կարծեսցէ երիս ոգիս ի միասին գոյա-
նալ ի մարդկային ժողովին՝ իւրաքանչիւրն յիւր սահմանս հայեցեալ): Սակայն
հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է նախադասութեան վերջին մասը
«իւրաքանչիւրն յիւր սահմանս հայեցեալ» (են իճիւս քերտրափայս թեօրոյմայս):

88. Հունարեն բնագրում (PG 44, 176C) ունենք՝ τὸ δὲ μή δια πάντων ὄν
ἐκείνο, ὃ κατωνόμασται (իսկ որ ոչ յամենեսինն է այն, որ անուանեալն է): Սա-
կայն հունարեն ἐκείνο (այն*) բառաձևը աղավաղվել ու շփոթվել է ἐκείνη
(անդ)-ի հետ և հայերեն թարգմանվել «անդ, ուր»:

89. Հունարեն բնագրում (PG 44, 176D) ունենք՝ παρὰ τοῦτο (վասն սո-
րա*) բառակապակցութիւնը: Հայերեն թարգմանութեան մեջ այն սխալմամբ
մեկնաբանվել է «այլ ինչ արտաքոյ սորա»:

90. Հունարեն բնագրում (PG 44, 177A) ունենք՝ τῆς δὲ αἰσθήσεως (այլ*
զգայութեանն): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ հունարեն δὲ (այլ)
բառաձևի աղավաղման պատճառով այն շփոթվել է διά-ի հետ ու թարգմանվել
«ի ձեռն»:

91. Հունարեն բնագրում (PG 44, 177B) ասված է. Ταῦτα γὰρ ἐπι κάδων ἢ
ἄλλων τινῶν σωματίων (Բանզի այսոքիկ տակառաց կամ այլոց ոմանց մարմնոց):
Սակայն հունարեն δեռագրում կածων (տակառաց*) բառաձևը աղծատվել ու
շփոթվել է καιρῶν (ժամանակեայց)-ի հետ և այսպես էլ թարգմանվել հայերեն:
Այլ տեղում «ժամանակեայ»-ածականը օգտագործվել է ἐπίκτητος-ի դիմաց (PG
44, 177D):

92. Հունարեն բնագրում (PG 44, 177B) ունենք՝ ἀλλήλοις (միմեանց*)
բառաձևը: Վերջինս աղավաղվելով շփոթվել է ἄλλοις-ի հետ ու հայերեն
թարգմանվել «այլազգ»:

93. Հունարեն բնագրում (PG 44, 177D.) ասված է. Ἄλλ' ἐπαναλάβωμεν
πάλιν (Այլ առցուք վերստին դարձեալ): Սակայն որոշ ձեռագրերում հայ գրիչ-
ները՝ ավելորդ համարելով «դարձեալ» հոմանիչը, այն բաց են թողել:

94. Հունարեն բնագրում (PG 44, 180D) ասված է. Μετὰ τὸ εἰπεῖν ὅτι
"Ποιήσωμεν, ἄνθρωπον κατ'εἰκόνα" καὶ ἐπὶ τίσι ποιήσωμεν (Յետ ասացելոյն թէ «ա-
րասցուք մարդ ըստ կերպարանի» եւ առ ինչ արասցուք): Հայերեն թարգմա-
նութեան մեջ բացակայում է «ըստ կերպարանի եւ առ ինչ արասցուք» (κατ'
εἰκόνα» καὶ ἐπὶ τίσι ποιήσωμεν) հատվածը:

95. Խոսքը Աննոմյան աղանդի մասին է (տես ծ. 25):

96. Հունարեն բնագրում (PG 44, 181C) ասված է. τοῦ μὲν Θείου τὸ λογικόν τε καὶ διανοητικόν, ὃ τὴν κατὰ τὸ ἄρβεν καὶ θῆλυ διαφορὰν οὐ προσίεται (զատուածայնոյն՝ զբանականն եւ զխոհականն, զայն որ ըստ արուին եւ ըստ իգին զանազանութիւնն ոչ ընդունի): Սակայն Հայերեն թարգմանութեան մեջ բաց է թողած «զայն որ ըստ արուին եւ ըստ իգին զանազանութիւնն ոչ ընդունի» հատվածը:

97. Հունարեն բնագրում (PG 44, 184A) ասված է. τὸ μὲν τι δοῦς ἐκ τῶν προσόντων αὐτῷ, τοῦ δὲ φθονήσας τῆς μετουσίᾳς (է ինչ, որ ետ, որ յիւր գոյր, եւ է ինչ, ընդ որոյ նախանձեցաւ ընդ կցորդութիւն): Հայերեն թարգմանութեան մեջ «նախանձեցաւ*»-ից առաջ սխալմամբ ավելացրած է «ոչ» ժխտական մասնիկը, որը բացակայում է բնագրում:

98. Հունարեն բնագրում (PG 44, 185A) ունենք՝ φαντασθέντες (երեւակայելով*): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ այն սխալմամբ թարգմանվել է՝ «մեկնելով»:

99. Հունարեն բնագրում (PG 44, 185B) ասված է. Οὐ γὰρ συνωνομάσθη τῷ κτίσµατι νῦν ὁ Ἀδάμ (Ոչ բաղանուանեցաւ ըստ հաստուածոյ այժմ Ադամ): Սակայն հունարեն տῷ κτίσµατι (ըստ հաստուածոյ*) աղավաղվելով՝ թարգմանվել է որպես «տῷ κτίσῃ» (ըստ հաստչին):

100. Հունարեն բնագրում (PG 44, 188A) ունենք՝ ὀρμὴν (զյարձակումն): Սակայն Հայերեն թարգմանութեան մեջ «զյարձակումն*» բառաձևի փոխարեն հանդես է գալիս՝ «յառաջ» (πρό): Վերջինս շփոթութեան արդյունք է, քանզի հունարեն բնագրում նույն նախադասութեան մեջ հանդիպում է πρό, որը թարգմանվել է «յառաջ»:

101. Հունարեն բնագրում (PG 44, 188C) ասված է. Ἡ δὲ τῆς ἀναστάσεως χάρις οὐδὲν ἕτερον ἡμῖν ἐπαγγέλλεται (Իսկ յարութեանն շնորհ ոչ այլ ինչ մեզ խոստանայ): Հայերեն թարգմանութեան մեջ «մեզ*» (ἡμῖν) դարձել է «մեծ»:

102. Հունարեն բնագրում (PG 44, 188C) ունենք՝ ἀποκατάστασιν (վերականգնում*): Հայերեն թարգմանութեան մեջ այն մեկնաբանվել է որպես «հաստատութիւնն»: Հետաքրքրական է, որ Գրիգոր Նյուսացին՝ խոսելով այստեղ մեղավորների հարութեան մասին, չի անդադրաւում այն հարցին, թե այն պիտի համընդհանուր բնույթ կրի, թե ոչ, այսինքն՝ պիտի փրկվի նաև Սատանան, թե ոչ: Այլ աշխատութիւններում նա դրական պատասխան է տվել այդ հարցին՝ կիսելով Օրիգենեսի տեսակետը (Λυρβε, с.193):

103. Հունարեն բնագրում (PG 44, 189A) ասված է. οὗτος ἂν καὶ ἐπὶ τῶν βραχύ τι παρ' ἀγγέλους ἠλαττωμένων ἐνήργησεν (Նմանապէս եւ յայնոսիկ, որ դոյզն

ինչ քան զհրեշտակս նուազեալ են, գործեաց): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «նմանապէս» բառը:

104. Հունարեն բնագրում (PG 44, 189D) ասված է. ὁ τὴν ῥωδὴν ταύτην γένεσιν (որ վաղանցուկ* գայս ծննդեան): Հայերեն թարգմանություն մեջ այն մեկնաբանվել է հետևյալ ձևով՝ «որք զանասնեղէն զաւրինակս գայս ծննդեան»: Հավանաբար, այս դեպքում հունարեն բնագրում ῥωδῆς բառաձևը շփոթվել է ζωθδόν (կենդանիների օրինակով)-ի հետ:

105. Հունարեն բնագրում (PG 44, 192A) ունենք՝ σύνδεσθέντα (տուեալ*) բառաձևը, որը աղավաղվել ու շփոթվել է σύνδεσθέντα (կապեալ)-ի հետ: Հայերեն թարգմանություն մեջ «կապեալ»-ին սկզբից ավելացել է «ընդ մեզ» բառակապակցությունը, որը չկա հունարեն բնագրում:

106. Հունարեն բնագրում (PG 44, 192B) ասված է. τὸ κατὰ τὴν γένεσιν λέγω (զրատ ծննդեան ասեմ): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «ասեմ» բայը:

107. Հունարեն բնագրում (PG 44, 192C) ունենք՝ τὰς διαγλύφους μορφὰς (գերկղրաւշեալն* կերպարանս): Սակայն Forbes-ի հրատարակության որոշ ձեռագրերում հանդիպում է մեկ այլ տարբերակ՝ τὰς διαγλύφους μορφὰς (զղրաւշեալն կերպարանս), որը հանդես է գալիս ինչպես անգլերեն (MM, Chap. XVIII, 3, com. 5), այնպես էլ հայերեն թարգմանություն մեջ:

108. Հունարեն բնագրում (PG 44, 192D) ունենք՝ οἰκειότητα (ազգակցութիւնս*) բառաձևը, որը աղավաղվելով ու շփոթվելով ὁμοιότητα-ի հետ, հայերեն թարգմանվել է «նմանութիւնս»:

109. Հունարեն բնագրում (PG 44, 193B) ասված է. τὸ μῖσος δὲ τὴν τῆς κακίας ἀποστροφὴν (ատելութիւնն՝ ի չարութենէն ի բաց դառնալ): Սակայն հայերեն թարգմանություն մեջ «ի» նախդիրը հունարենի հոգի հայցական հորովի ազդեցությամբ՝ ընդունելով սկզբից «զ» նախդիրը, դարձել է «զի»: Այս երևույթը հաճախ է հանդիպում Նյուսացու սույն գործի հայերեն թարգմանություն մեջ:

110. Հունարեն բնագրում (PG 44, 193C) ունենք՝ ἕτερον (այլ*) բառաձևը, որը, աղավաղվելով ու շփոթվելով ἔργον (գործն)-ի հետ, հայերեն թարգմանվել է «գործն»:

111. Հունարեն բնագրում (PG 44, 193C) ասված է. μάλλον γὰρ τῷ βάρει τῆς ἀλόγου φύσεως συγκατασπᾶται τὸ ἡγεμονικὸν τῆς ψυχῆς, ἢ περ τῷ ὕψει τῆς διανοίας τὸ βαρὺ τε καὶ χοικὸν ἀνυψοῦται (քանզի առաւել ծանրութեամբ անասնային բնութեանն ի խոնարհ կոյս ձգի առաջնորդ իշխանական ոգւոցն, քան բարձրութեամբ մտացն ծանր եւ հողեղէնն յարուցեալ լինի): Սակայն հայերեն

Թարգմանության մեջ հունարենի ἥπερ (քան*) բառաձևը սխալմամբ մեկնաբանվել է՝ ἥπερ «որով», իսկ «հողեղէնն»-ից հետո ավելացվել «իրբեւ նգաւ» համեմատությունը, որը չկա հունարեն բնագրում:

112. Հունարեն բնագրում (PG 44, 193C) ասված է. Διὰ τοῦτο πολλάκις ἀγνοεῖσθαι ποιεῖ τὸ θεῖον δῶρον ἢ περιήμας ἀθλιότης, οἷον προσωπίον εἰδεχθῆς τῷ κατὰ τὴν εἰκόνα κάλλι τὰ πάθη τῆς σαρκὸς ἐπιπλάσσουσα (Վասն այսորիկ բազում անգամ դէպ լինի՝ ոչ տալ գիտել զաստուածութեանն պարգեւն, որ զմեւքն թշուառութիւն, իբրև թէ՛ դէմք ժանտատեսիլք, զախտս մարմնոյն ի վերայ կերպարանին գեղեցիկութեան ծածկելով): Հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի δῶρον (պարգեւ*) բառաձևը սխալմամբ մեկնաբանվել է որպես «իրս», նմանապես և ἐπιπλάσσουσα (ծածկելով*)-ն դարձել՝ «ստեղծանելով»:

113. Հունարեն բնագրում (PG 44, 196A) ասված է. 'Αλλ' ἐλπίζετω τῆς λειτουργίας ταύτης ἀτέλειαν δοθήσεσθαι τῇ φύσει ποτὲ κατὰ τὴν προσδοκωμένην ζώην (Այլ յուսացի սպասաւորութեանս այսմիկ զազատութիւն տալ բնութեանս երբեմն ըստ ակնկալութեանն կենաց): Սակայն հունարեն ձեռագրում ἀτέλειαν (զազատութիւն*) բառաձևը աղավաղվել ու շփոթվել է τέλειος (կատարեալ)-ի հետ և հայերեն թարգմանվել որպես «կատարեալ»:

114. Հունարեն բնագրում (PG 44, 196B) ասված է. διὰ τὸ ἔξ ἀρχῆς ἐν τῷ παραδείσῳ γεγράφθαι διὰ τούτων τὸν ἄνθρωπον ζῆν (վասն ի սկզբանէ ի դրախտին գրեալ է ի ձեռն սոցա մարդոյն կեալ): Սակայն հունարեն ձեռագրում γεγράφθαι (գրեալ է*) բայաձևը հավանաբար աղավաղվել ու շփոթվել է γίγνομαι (գոլ)-ի հետ և հայերեն թարգմանվել որպես «գոլ»:

115. Հունարեն բնագրում (PG 44, 196C) ունենք՝ φησὶν (ասէ), որը սակայն բաց է թողած հայերեն թարգմանության մեջ:

116. Հունարեն բնագրում (PG 44, 196D) ասված է. οὐκοῦν τῆς τοῦ Θεοῦ φυτείας (իսկ ապա Աստուծոյ տնկոյն): Հայերեն թարգմանության մեջ բաց է թողած «Աստուծոյ» (տօ՛ւ Θεου)-ն:

117. Հունարեն բնագրում (PG 44, 196D) ունենք՝ τὴν παροδικὴν (զանցաւոր, զժամանակեայ*), որը հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս որպես «զընդունելութիւնս»: Բացառված չէ, որ սխալն առաջացել է τὴν παροδικὴν բառաձևի աղավաղման պատճառով ու նրա շփոթման τὴν παραδοχὴν (զընդունելի)-ի հետ: Մյուս կողմից բնագրի խաթարման պարագայում հնարավոր է, որ 2-3 տող ներքև գտնվող τὴν μετουσίαν (զընդունելութիւն) բառը դառնար շփոթության իրական պատճառը, ինչպես այդ հանգիստում է հայերեն թարգմանության այլ տեղերում:

118. *Հունարեն բնագրում (PG 44, 196D) ասված է.* τὸ ξύλον ἐκείνο, τὸ ἐν τῷ παραδείσῳ (զփայտն զայն, որ ի դրախտին է): *Հայերեն թարգմանության մեջ բաց է թողած «որ ի դրախտին է» (τὸ ἐν τῷ παραδείσῳ) հատվածը:*

119. *Հունարեն բնագրում (PG 44, 197A) ունենք՝* τὴν μετουσίαν ὁ λόγος (զընդունելութիւն բանն): *Հայերեն թարգմանության մեջ «բանն» բառաձևից առաջ ավելացրած է «կերակրոյ»-ն, որը չկա հունարեն բնագրում:*

120. *Հունարեն բնագրում (PG 44, 197A) ասված է.* Τίς δέ με τῆς συμμυγούς τε καὶ ἐπαμφοτερίζουσης τοῦ ξύλου γεύσεως ἀποστήσει (Ո՞ր ի խառնէն եւ որ յերկուս կողմանս ակնարկութիւն տայ ի փայտին ճաշակոյ պահեսցէ): *Սակայն՝ հունարեն բնագրի* ἀποστήσει (պահեսցէ*) *բայաձևը, աղավաղվելով և չփոթվելով* ἀπιστήσσει (թերահավատեսցէ)-ի *հետ, հայերեն թարգմանվել է որպես «թերահավատեսցէ»:* *Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 81) ասված է.* «Но кто отвратит меня от примесного и двойственного вкуса другого дерева?»: *Նմանապես անգլերեն թարգմանության մեջ (MM, Chap. XIX, 3) հետևյալն ենք կարդում.* «Who will keep me back from that tasting of the tree which is of mixed and doubtful kind?»:

121. *Հունարեն բնագրում (PG 44, 197A) ասված է.* Πάντως γὰρ οὐκ ἄδηλον τοῖς διορατικωτέροις, τί τὸ πᾶν ἐκείνο, οὗ καρπὸς ἡ ζωὴ, καὶ πάλιν, τί τὸ ἐπίμικτον τοῦτο, οὗ πέρας ὁ θάνατος (Քանզի ամենայն իրաւք ոչ անհայտ է, որ յայտնագոյն տեսանեն, զամենայն զայն, որոյ պտուղն է կեանք, եւ դարձեալ խառնակս այս, որոյ վախճանն է մահ): *Հայերեն թարգմանության մեջ բացակայում են հունարեն բնագրի* καρπὸς (պտուղն է) *և* οὗ πέρας ὁ θάνατος (որոյ վախճանն է մահ) *հատվածները, հունարենի* οὗ (որոյ*)-ն *չփոթվել է* οὐ (ոչ) *ժխտական մասնիկի հետ, իսկ նրանից առաջ ավելացրած են «քանզի», իսկ նրանից հետո՝ «ամենեցուն» բառերը, որոնք չկան հունարեն բնագրում:* *Հավանաբար այս բացթողումները և աղավաղումը առկա էին հենց հունարեն ձեռագրում:* *Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 81) ասված է.* "Ведь, несомненно, более пронизательным понятно, что такое-то Всякое, плод чего - жизнь, и что такое- примесное это, конец чего - смерть": *Նմանապես անգլերեն թարգմանության մեջ (MM, Chap. XIX, 3) կարդում ենք.* «Surely it is clear to all who are at all keen-sighted what that "every" tree is whose fruit is life, and what again that mixed tree is whose end is death»:

122. *Հունարեն բնագրում (PG 44, 197B) ասված է.* Κατατρώφησον τοῦ Κυρίου (Խրա՛խ լեր Տերամբ): *Աստվածաշնչում հանդիպում է՝ «Ժտե՛ա ի Տեառնէ» (Ս՝Պ՝. 1,9, 4) տարբերակը:* *Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 81, 166) ասված է.* «Насладися Господем» (Пс. 36, 4), *անգլերենում (MM., Chap. XIX, 4)՝ «Delight thou in the Lord»:*

123. Հունարեն բնագրում (PG 44, 197B) ունենք՝ οὐ κωλύει (որոյ արգելում): Հայերեն թարգմանութեան մեջ «որոյ»-ն բաց է թողած:

124. Հունարեն բնագրում (PG 44, 197B) ասված է. καὶ τὴν δρεξιν πρὸς τὴν γεῦσιν ὑπερεθείσειεν (եւ ցանկութեամբ առ ի ճաշակումն շարժեսցէ): Սակայն Հայերեն թարգմանութեան մեջ Հունարեն ὑπερεθείζω (գրգռել, շարժել*) բառաձևն աղավաղվել ու շփոթվել է ἔθειζω (սովորեցուցանել)-ի հետ և ազատ թարգմանվել «գանցուցէ զբոս սովորութեամբ»:

125. Հունարեն բնագրում (PG 44, 197C) ունենք՝ Τί οὖν (Արդ, զի՞նչ*) բառակապակցութիւնը, որը Հայերեն թարգմանութեան մեջ սխալմամբ մեկնաբանվել է՝ «եւ եթէ»:

126. Հունարեն բնագրում (PG 44, 197C) ասված է. Οἶμαι γὰρ οὐκ ἐπιστήμην ἐνταῦθα παρὰ τῆς Γραφῆς νοεῖσθαι τὴν γνῶσιν, ἀλλὰ τινα διαφορὰν ἐκ τῆς γραφικῆς συνηθείας εὐρίσκω, γνώσεώς τε καὶ διακρίσεως. (Քանզի կարծեմ, զոր ոչն է գիտութիւն աստ, ըստ Գրոց, այլ զգանազանութիւն ի Գրոց սովորութենէն գտանեմ ի գիտութեան եւ յընտրութեան): Սակայն թարգմանիչները, հավանաբար, չգտնելով Հունարեն ἐπιστήμην-ի համար համարժեք Հայերեն եզր, այն բաց են թողել, թեպետ ուրիշ տեղերում վերջինս թարգմանվել է որպէս «բարւոյ և չարի գիտութիւն» կամ «Հանճար» և նույնիսկ «գիտնական միտք»: Ի դեպ հիշենք, որ ἐπιστήμη-ի և γνῶσις-ի միջև Նյուսացին դնում է թեորիա-ն (տեսիլ, տեսութիւն, ուսումնասիրութիւն)՝ իբրև միջին օղակ մարդկային գիտութիւնից առ Աստվածայինը: Այդ նույն նախադասութեան մեջ բաց են թողած παρὰ τῆς Γραφῆς (ըստ Գրոց) և ἀλλὰ τινα διαφορὰν (այլ զգանազանութիւն) բառակապակցութիւնները: Բացառված չէ, որ բացթողումները առկա էին նաև Հունարեն ձեռագրում: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 82) ասված է. "Поэтому что я думаю, что Писание понимает "ведение" (γνῶσιν) не тождественно "познанию" (ἐπιστήμην), но в словоупотреблении Писания я нахожу некоторое различие между ведением и различием (διακρίσεως)": Անգլերեն թարգմանութեան մեջ կարդում ենք. "It is not, I think, "science" which the Scripture here means, by "knowledge" but I find a certain distinction according to Scriptural use, between "knowledge" and "discernment" (MM, Chap. XX, 1):

127. Հունարեն բնագրում (PG 44, 200A) ասված է. ὅτι οὐ γυμνὸν πρόκειται τὸ κακὸν (զի ոչ մերկ կայ չարն): Հայերեն թարգմանութեան մեջ բաց է թողած «չարն» (τὸ κακὸν) բառաձևը:

128. Հունարեն բնագրում (PG 44, 200B) ունենք՝ κρίνουσι (կարծեն*), որը Հունարեն ձեռագրում, աղավաղվելով և շփոթվելով կινέουσι (շարժեն) բայաձևի հետ, հենց այդպես էլ թարգմանվել է Հայերեն:

129. Հունարեն բնագրում (PG 44, 200B) ասված է. *οὐ τὴν γεῦσιν εἰς θάνατον ἄγειν (որոյ զճաշակն, ասաց, ի մահ ածել): Հայերեն թարգմանութեան մեջ «որոյ*» (οὐ) հարաբերական դերանունը հանդես է գալիս հոգնակի թվով՝ «որոյ»:*

130. Հունարեն բնագրում (PG 44, 200C) ունենք՝ *οὐ τὴν γνῶσιν (ոչ գիտութիւնն), սակայն ըստ իմաստի այստեղ պետք է լիներ՝ οὐ τὴν γνῶσιν (որոյ* գիտութիւնն): Հայերեն թարգմանութեան մեջ «ոչ»-ը կամ ավելի ճիշտ՝ «որոյ»-ն բաց է թողած: Իսկ անգլերեն թարգմանութեան մեջ հանդիպում է «որոյ» տարբերակը. «the knowledge of which» (MM, Chap. XX, 3).*

131. Հունարեն բնագրում (PG 44, 201B) ասված է. *Τὸ γὰρ ἀεὶ πάντως κινούμενον, εἰ μὲν πρὸς τὸ καλὸν ἔχει τὴν πρόοδον, διὰ τὸ ἀόριστον τοῦ διεξοδευομένου πράγματος οὐδέποτε λήξει τῆς ἐπὶ τὰ πρόσω φορᾶς (Քանզի որ միշտն ամենայն իրաւք շարժեալ լինի, զի եթէ առ բարին ունի գելն, վասն անցանելի բանին անսահմանութեանն ոչ երբեք կասեցնէ յանկեալ յառաջ կոյս բերելոյ): Սակայն Հայերեն թարգմանութեան մեջ հունարեն բնագրի միջոցով ընդհատում է ընդհատումը միջոցով (վասն անցանելի բանին անսահմանութեանն) հատվածը բաց է թողած, իսկ նրա փոխարեն որոշ ձևազերծում հանդես է գալիս՝ «վասն լաւին որ արտաքս դայ շունչն» կամ ուղղակի «վասն լաւին» բառակապակցութեամբ: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 86) այս հատվածը այլ ձևով է մեկնաբանվել. "Ведь всегда непременно движимое, даже если и будет порываться к добру, из-за самой ничности непрерывного движения не перестанет нестись дальше". Իսկ անգլերեն թարգմանութեան մեջ (MM, Chap. XXI, 2) կարդում ենք. «Now that which is always in motion, if its progress be to good, will never cease moving onwards to what lies before it, by reason of the infinity of the course to be traversed»:*

132. Հունարեն բնագրում (PG 44, 201B) ունենք՝ *οὐ δραξάμενον (որոյ* բռնուն հարեալ): Հայերեն թարգմանութեան մեջ հունարենի ոὐ (որոյ) հարաբերական դերանվան աղավաղման պատճառով ու նրա շփոթման ոὐ (ոչ) ժխտական մասնիկի հետ հանդես է գալիս սխալ «ոչ»:*

133. Հունարեն բնագրում (PG 44, 201C) ունենք *πάλιν ἐναλῶναι (դարձեալ գերեվարեալ): Հայերեն թարգմանութեան մեջ բաց է թողած «գերեվարեալ» (ἐναλῶναι) բառաձևը:*

134. Հունարեն բնագրում (PG 44, 201C) ունենք *λέγουσι (ասեն*): Վերջինս աղավաղվելով հայկական գրչագրերում դարձել է «ասեմ»:*

135. Այս հատվածը հետաքրքրական է նաև այն առումով, որ այստեղ Նյուսացին՝ իր աստվածաբանական և բարոյագիտական հայացքներն ապացուցելու համար, դիմում է ճշգրիտ գիտությունների տվյալներին: Խոսելով չարի

ու բարու պայքարի միջև վերջինիս անխուսափելի հաղթանակի մասին, նա անդրադառնում է արևի խավարման անտիկ տեսությունը:

136. Հունարեն բնագրում (PG 44, 204A) սսված է. καὶ ἡ τῆς ἀρχῆς ἀξία (եւ իշխանութեանն արժանաւորութիւնն*): Սակայն հայերեն թարգմանություն մեջ այն մեկնաբանվել է որպես «եւ իշխանութեանն արժանի սիրտ»:

137. Հունարեն բնագրում (PG 44, 204A) սսված է. Οὐ μοι δοκεῖ τούτων οὐδέν, ὅσα νῦν πρὸς τὴν τοῦ βίου χρείαν παρὰ τοῦ θεοῦ τοῖς ἀνθρώποις ὑπέζευκται· ἀλλ' ἑτέρας τινὸς βασιλείας ἐστὶν ἡ ἐλπίς, ἧς ὁ λόγος ἐν ἀπορρήτοις μένει (Ոչ ինձ թուի ի սոցանէ, որ ինչ միանգամ առ կենաց շնորհ յԱստուծոյ ընդ մարդկան լծեցաւ, այլ այլոյ իմն արքայութեան է յոյսն՝ բանս յանճառս կայ մնայ): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած Οὐ μοι (Ոչ ինձ) բառակապակցութունը, և սրանով իսկ որոշ չափով աղավաղվել է նախադասության միտքը: Ռուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 87) կարդում ենք. "Начальства, как мне кажется, ни над чем-либо из того, что для житейских потребностей Бог подчинил людям ныне, но надежде иного некоего царства, слово о котором пребывает в неизреченном": *Իսկ անգլերեն թարգմանություն մեջ ավելի հստակ սսված է (MM, Chap. XXI, 4). "It does not seem to me that our hope is one for those things which are now subjected by God to man for the necessary uses of life, but one for another kingdom, of a description that belongs to unspeakable mysteries":*

138. Հունարեն բնագրում (PG 44, 204B) ունենք πτερωθείς (թեւաւորեալ*) բառաձևը, սակայն հայերեն թարգմանություն մեջ այն սխալմամբ մեկնաբանվել է որպես «թեթեւացուցեալ»: Միայն առաջացել է հավանաբար հունարեն ձեւագրում πτερωθείς (թեւաւորեալ)-ի աղավաղման ու πτερωτός (թեւացուցեալ)-ի հետ շփոթման պատճառով: Վերջինս հայերեն գրչագրերում իր հերթին աղճատվելով՝ դարձել է «թեթեւացուցեալ»: Ռուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 87) ունենք «окрылив», իսկ անգլերենում (MM, Chap. XXII, 1)՝ «giving wings»:

139. Նյունացին «Աղամ» անվան ծագումը կապում է եբրայերեն «adama» (հող, հողագործություն) և ոչ թե «մարդ» բառի հետ: Թեպետ այս երկու բառերում էլ առկա է «dm» արմատը, սակայն բացառված չէ, որ այստեղ գործ ունենք պարզապես համանունություն հետ:

140. Հունարեն բնագրում (PG 44, 205A) սսված է. Οὐ γὰρ ὅτε τὸ κατ' εἰκόνα ἐποίησε, τότε τὴν τοῦ αὐξάνεσθαι καὶ πληθύνεσθαι δύναμιν τῷ ἀνθρώπῳ προσέθηκεν, ἀλλ' ὅτε διέκρινε τῇ κατὰ τὸ ἄρβεν καὶ θῆλυ διαφορᾷ, τότε φησίν· (Քանզի յորժամ ըստ կերպարանին արար, ոչ յայնժամ ետ մարդոյն զզաւրութիւն աճել եւ բազմանալ, այլ յորժամ զզանազանութիւն ըստ արուին եւ իգին էարկ,

յայնժամ ասէ.): Հայերեն թարգմանություն մեջ առկա է միայն նախադասություն սկիզբը՝ «Քանզի յորժամ ըստ կերպարանի արար, ոչ յայնժամ» (Οὐ γὰρ ὅτε τὸ κατ' εἰκόνα ἐποίησε):

141. Հունարեն բնագրում (PG 44, 205B) ունենք՝ το αὐξάνεσθαι (աճել*) բայաձևը, որը հայերեն սխալմամբ թարգմանվել է «աճեցէ՛ք»:

142. Հունարեն բնագրում (PG 44, 205C) ունենք՝ τῆς γενήσεως εἶδος (տեսիլ ծննդեան): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «ծննդեան» (τῆς γενήσεως) բառը:

143. Հունարեն բնագրում (PG 44, 205D) ասված է. Πάντες μὲν οὐ κοιμηθησόμεθα, πάντες δὲ ἀλλαγησόμεθα, ἐν ἀτόμῳ, ἐν ῥιπῇ ὀφθαλμοῦ, ἐν τῇ ἐσχάτῃ σάλπιγγι (Ամենեքեան ոչ* ննջեսցուք, այլ ամենեքեան փոփոխեսցուք՝ յանհատին, ի թարթափել ական, ի վերջին փողն): Սակայն հայերեն թարգմանություն մեջ «ոչ» ժխտական մասնիկը դրվել է ոչ թե «ննջեսցուք»-ից առաջ, ինչպես հունարեն բնագրում, այլ «ամենեքեան»-ից առաջ՝ այսպիսով աղավաղելով նախադասության միտքը: Թուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 90) ասված է. "Еси бо не уснем, вси же изменимся вскоре во мгновении ока, в последней трубе", իսկ անգլերենում (MM, Chap. XXII, 6)՝ «We shall not all sleep, but we shall be changed, in a moment, in the twinkling of an eye, at the last trump»:

144. Գրիգոր Նյուսացու հայացքները ժամանակի մասին արտացոլում են անտիկ փրիլսոփայություն, և առաջին հերթին Պլատոնի ու նորապլատոնականների պատկերացումները ժամանակի կատեգորիայի վերաբերյալ: Անշուշտ, նրանցում արտացոլված է նաև որոշ չափով Օրիգենեսի աստվածաբանական տեսակետը, համաձայն որի ժամանակը հանդես է գալիս միայն մեղսագործությունից հետո: Սակայն ավելի ցայտուն ձևով այստեղ դրսևորվել է Մեծն Բարսեղի ժամանակի դասակարգման տեսությունը, համաձայն որի գոյություն ունի՝ 1. «բուն ժամանակ» անցյալի, ներկայի և ապառնի կատեգորիաներով, որը բնորոշ է նյութական աշխարհին, 2. «դար», որը հատուկ է հրեշտակների դասին և ենթակա է միայն որոշ փոփոխության, և վերջապես միայն Աստծուն հատուկ անփոփոխ «հավիտենություն» (41):

145. Հունարեն բնագրում (PG 44, 208B) ասված է. "ἵνα μὴ, φησὶ, χωρὶς ἡμῶν τελειωθῶσιν («Զի մի,- ասէ,- առանց մեր կատարեսցին»): Հայերեն թարգմանություն մեջ բացահայտում է «ասէ» (φησι) բայաձևը:

146. Հունարեն բնագրում (PG 44, 208B) ունենք՝ μαρτυρεῖ (վկայէ*) բայաձևը, որը հայերեն սխալմամբ թարգմանվել է «ասէ» (φησι)

147. «Աստվածային տուփական կրքի» (τό ἐροτικόν τοῦτο πάθος) *Թեմային Գրիգոր Նյուսացին ավելի հանգամանորեն անդրադարձել է «Յաղագս Երգոյ Երգոց» մեկնության մեջ (տե՛ս 14, էջ 136-177; 22; Лурье, сс. 91, 169):*

148. *Հունարեն բնագրում (PG 44, 208C) ունենք՝ 'Αλλ' ὁμως ἠνείχεται τῆς ἀναβολῆς (Այլ սակայն կայր մնայր յապաղմանն): Հայերեն թարգմանության մեջ այն սխալմամբ մեկնաբանվել է՝ «Այլ սակայն կայր մնայր փոփոխմանն»: Սխալը հավանաբար գալիս է հունարեն ձեռագրից, որտեղ աղավաղված τῆς ἀναβολῆς (յապաղմանն*) բառաձևը հեշտությամբ կարող էր շփոթվել τῆς μεταβολῆς (փոփոխմանն) հետ:*

149. *Հունարեն բնագրում (PG 44, 208D) ասված է. ὅτι κατὰ τὸν καιρὸν τοῦ θέρους ἢ τῶν καρπῶν γενήσεται συλλογή (եթէ ըստ ժամանակիս այսմիկ ամարանույ արմտեաց լինի ժողովումն): Սակայն ձեռագրերի մեծ մասում հունարենն θέρους (ամարանույ*) բառը թարգմանվել է «ամբարայնոյ», հավանաբար, էլնելով θέρους (ամառ) բառի «հունձք» երկրորդ իմաստից: Նույնը տեսնում ենք ուսուցիչների թարգմանության մեջ (Лурье, с. 92). "что во время жатвы будет сбор плодов": Իսկ անգլերեն թարգմանության մեջ, որ ավելի մոտ է հայերենին, ասված է (MM, Chap. XXII, 8). "the gathering of the crops will take place in the season of summer":*

150. *Հունարեն բնագրում (PG 44, 209A) ասված է. 'Ο μὲν γὰρ καιρὸς καὶ βουλομένου, καὶ μὴ, πάντως κατὰ τὸν τεταγμένον ἐπιστήσεται χρόνον (Քանզի ժամանակն կամեցողի եւ ոչ՝ ամենայն իրաւք ըստ կարգելումն հասցէ ի վերայ ամանակն): Հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի πάντως (ամենայն իրաւք*) սխալմամբ մեկնաբանվել է որպէս «ամենեցուն»: Հետաքրքրական է նշել, որ այստեղ հունարենն καιρὸς և χρόνος բառերի միջև եղած տարբերությունը հայերենում արտահայտվել է «ժամանակ» ու «ամանակ» եզրերի միջոցով, որոնցից առաջինն օգտագործվել է ավելի կարճ ժամանակահատվածի կամ պահի, իսկ «ամանակը»՝ երկարատև շրջանի կամ «դարի» համար:*

151. *Հունարեն բնագրում (PG 44, 209B) ասված է. 'Ο γὰρ ἀρχὴν τῆ κινήσει διδοῦς, οὐκ ἀμφιβάλλει πάντως καὶ περὶ τέλους (Քանզի որ զսկիզբն շարժման տայ, ոչ երկբայի ամենայն իրաւք եւ յաղագս կատարածին): Սակայն հայերեն թարգմանության մեջ բացակայում է «շարժման տայ» (τῆ κινήσει διδοῦς), իսկ հունարենն οὐκ ἀμφιβάλλει (ոչ երկբայի*) բառակապակցությունը, աղավաղվելով, սխալմամբ մեկնաբանվել է «ոչ խոստովանէ» (οὐκ ὁμολογεῖ կամ οὐκ ὁμολουεῖ): Իսկուհիների թարգմանության մեջ (Лурье, с. 93) ասված է. "Ведь тот кто придает движению начало, обязательно не сомневается и о конце", իսկ անգլերենում (MM, Chap. XXIII,1) կարդում ենք. "for he who admits a beginning of motion surely does not doubt as to its also having an end":*

152. Հունարեն բնագրում (PG 44, 209B) ունենք՝ νοοῦμεν (կարծեմք) բաժաճևը, որը բաց է թողած հայերեն թարգմանություն մեջ:

153. Հունարեն բնագրում (PG 44, 209C) ասված է. Καὶ γὰρ κἀκεῖ πίστει κατηρτίσθαι τὸ βλεπόμενον ἐκ τῶν μηδέπω φαινομένων κατεδεξάμεθα, παραδραμόντες τῶν ἀνεφίκτων τὴν ζήτησιν (Քանզի եւ անդ հաւատով զկատարել զտեսեալն ի չեւ եւս երեւելոցն ընկալաք, խոյս տալով զանհասիցն զխնդիր): Հայերեն թարգմանություն մեջ բացակայում է «խոյս տալով» (παραδραμόντες) բառակապակցությունը: Թուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 93) ասված է. "Ведь и тут мы верою приняли, что надлежит совершиться видимому из пока еще не явленного, но избегали исследования неоткрытого": Իսկ անգլերեն թարգմանություն մեջ (MM, Chap. XXIII, 2) կարգում ենք. "for even in the case mentioned it was by faith that we admitted that the thing seen was framed from things not yet apparent, omitting the search into things beyond our reach":

154. Հունարեն բնագրում (PG 44, 209D) ունենք՝ πρὸς τὸ δόγμα (առ ուսմունս*) բառակապակցությունը, որը հայերեն թարգմանություն մեջ սխալմամբ մեկնաբանվել է՝ «առ կամսն իւրեանց»:

155. Հունարեն բնագրում (PG 44, 209D) ունենք՝ ἄπιος (անորակ*) բառաձևը, որը հայերեն թարգմանություն մեջ սխալմամբ մեկնաբանվել է որպես «անբանակ»:

156. Այստեղ Գրիգոր Նյուսացին անդրադառնում է անտիկ շրջանի բնափիլիսոփաների զարգացրած նյութապաշտական տեսություններին մատերիայի հավերժություն և Աստծո արարչագործությունից անկախ լինելու մասին:

157. Քննադատելով նյութապաշտական տեսությունները՝ Նյուսացին այն միտքն է հայտնում, որ դրանք հիմք են ծառայել մանիքեականների գաղափարախոսության համար, համաձայն որի նյութական աշխարհը ստեղծվել է ոչ թե աստվածային Բարու, այլ սատանայական Չարի կողմից:

158. Հունարեն բնագրում (PG 44, 212D) ունենք ἡ ἀντίρρησις (առարկություն*) բառաձևը, որը հայերեն թարգմանություն մեջ սխալմամբ մեկնաբանվել է որպես «թերաբանութիւն» (ή ἀτέλεια):

159. Խոսքը «Տիզիկայում» արտահայտված մատերիայի «ստորակայություն» Արիստոտելի թեզի մասին է, համաձայն որի վերջինս «որակությունների» միջոցով կառավարվում է աստվածային Լոգոսի կողմից: Շարունակելով այս միտքը՝ Նյուսացին այն հանգեցնում է իր տրամաբանական ավարտին, այն է՝ «աննյութականի» նկատմամբ «նյութականի» ստորագաս լինելու աստվածաբանական գաղափարին (55):

160. Հունարեն բնագրում (PG 44, 213B) ասված է. τὴν σωματικὴν ὑπόστασιν ἀπεργάζεται (գնիւթական բնութիւնն գործել): Սակայն հունարեն ἀπεργάζεται (գործել*) բայաձևը, աղծատվելով հայերեն գրչագրերում, դարձել է «կարծել»: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 97) ասված է. "образует вещественную природу", անգլերենում (MM, Chap. XXIV, 2) կարգում ենք. «to produce the material nature»:

161. Հունարեն բնագրում (PG 44, 216A) ունենք՝ λέγων (ասելով) բառաձևը, որը բաց է թողած հայերեն թարգմանության մեջ:

162. Հունարեն բնագրում (PG 44, 216C) ունենք՝ διεσπάρησαν (սփռեցան*) բայաձևը, որը հունարեն ձեռագրում աղավաղվել ու շփոթվել է ճափարասան (քաջքայեցան)-ի հետ և այսպես էլ թարգմանվել հայերեն:

163. Հունարեն բնագրում (PG 44, 216C) ունենք τὰ βασιλεία (արքունիք*), որը հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս որպես «արքունեան տաճարն»:

164. Հունարեն բնագրում (PG 44, 217C) ունենք՝ τῆς ψυχῆς (ոգևոյն*) բառաձևը, սակայն հայերեն թարգմանության մեջ այն օգտագործվել է հոգևակի թվով՝ «ոգևոցն»:

165. Հունարեն բնագրում (PG 44, 220B) ասված է. περιπλεκομένην προκειμένῳ τῷ πτώματι, ὡς μὴ ἂν ἐπισπεῦσαι τῷ νεκρῷ τὴν κηδείαν (մինչ դեռ առաջի կայր դի, չուրջ զնովաւ փարեալ, մինչ զի ոչ փութալ մեռելոյն զպատանս թաղմանն): Այս հատվածը հայերեն թարգմանության մեջ բավականին հեռանում է սկզբնաղբյուրից, որոշ բառեր հետ ու առաջ են տարվել, իսկ առանձին դեպքերում սխալ մեկնաբանվել, օրինակ՝ μὴ ἂν ἐπισπεῦσαι (ոչ փութալ*) թարգմանվել է որպէս «ոչ հաւատալ» (μὴ ἂν πιστεῦσαι), իսկ περιπλεκομένην (փարեալ*)՝ որպես «հաշիւով եւ մաշելով» (տրհոմեղն): Սխալները առաջացել են, ամենայն հավանականությամբ, հունարեն բնագրում վերոհիշյալ բառերի աղավաղումից ու շփոթումից: Դրանից բացի «դի»-ից առաջ հանդես է գալիս «կործանեալ պատանոյն» բառակապակցությունը, որը չկա սկզբնաղբյուրում: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 103) ասված է. «обнимаемая лежащий труп, и не спешила она с погребением мертвеца»: Անգլերեն թարգմանության մեջ (MM, Chap. XXV, 10) կարգում ենք. «embracing the corpse as it lay before her, so as not to hasten the funeral of the dead»:

166. Հունարեն բնագրում (PG 44, 220D) ունենք՝ μετὰ τὸ πάθος (յետ դիպաց*), որը հայերեն թարգմանության մեջ մեկնաբանվել է որպես «յետ մահուանն»: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 104) նույնպես ասված է. «после смерти», մինչդեռ անգլերենում ունենք. «since the event» (MM, Chap. XXV, 11).

167. Հունարեն բնագրում (PG 44, 221A) սսված է. Φευκτόν ἦν τὸ πρᾶγμα, βιαζομένης τῆς φύσεως τὸ διαλυθὲν εἰς δυσωδίαν ἀποδιδόναι πάλιν τῷ ζῆν (Փախչելի էին իրքն բռնադատեցելոյ բնութեանն լուծեալն ի ժահահոտութիւն, վերստին ի կեանս դարձուցեալ լինի): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է հունարեն բնագրի վերջին հատվածը ἀποδιδόναι πάλιν τῷ ζῆν (վերստին ի կեանս դարձուցեալ լինի): Անգլերեն թարգմանութեան մեջ այն նույնպես բաց է թողած: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 104) սսված է. «Небываемым делом и насилуем над природой было бы вновь возвратить к жизни разложившееся и зловонное»: Կարևոր է նշել, որ Forbes – ի հրատարակութեան մեջ այս հատվածը բացակայում է մի շարք ձեռագրերում, ինչպես նաև Դիոնիսիոսի թարգմանութեան մեջ (MM, Chap. XXV, 11, com. 2):

168. Հունարեն բնագրում (PG 44, 221A) ունենք՝ δι' ἐναργεστέρου (ի ձեռն ակնյայտնագոյն*): Վերջինս աղավաղվելով հունարեն ձեռագրում՝ կարգացվել է δι' ἐνεργεστέρου (ի ձեռն ներգործագոյն) և այդպես էլ թարգմանվել է հայերեն:

169. Հունարեն բնագրում (PG 44, 221A) սսված է. Οὐδὲ γὰρ ἐκ νόσου τις ἀνίσταται χαλεπῆς (Քանզի ոչ դժուար ախտից ոք յառնէ): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է հունարեն բնագրի ἐκ νόσου χαλεπῆς (դժուար ախտից), իսկ «ոք»-ից առաջ ավելացրած է «մեռեալ» բառը, որը աղավաղում է բնագրի իմաստը: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 104) սսված է. «Ведь тут не от тяжелой болезни кто-либо восстанавливается», իսկ անգլերենում (MM, Chap. XXV, 11) կարդում ենք. «For one is not raised from severe sickness»:

170. Հունարեն բնագրում (PG 44, 224A) կարդում ենք՝ Οὐκ, Ἐρρώσθε (Ոչ, ամբացէ՛ք*), որը աղավաղվելով դարձել է Οὐκ, Ἄρρώσθε (Ոչ, ապակահնցէ՛ք) և հայերեն սխալմամբ մեկնաբանվել «Ոչ ապակահնել»:

171. Հունարեն բնագրում (PG 44, 224A) սսված է. τοῖς διὰ τῆς φιλοσοφίας καὶ κενῆς ἀπάτης (այնք, որ ի ձեռն իմաստասիրութեան եւ սին պատրանաց): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ բացակայում է «եւ սին պատրանաց» (καὶ κενῆς ἀπάτης): Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 106) սսված է. «тем, кто философиию и лживою лестию», իսկ անգլերենում՝ «who by philosophy and vain deceit» (MM, Chap. XXV, 13):

172. Հունարեն բնագրում (PG 44, 224C) սսված է. Ἄλλ ἡμεῖς ἐν ὀλίγω τὰς μακρὰς αὐτῶν τῆς λογικῆς ματαιότητος περιδρομὰς ὑποτεμνόμεθα (Այլ մեք սակաւուք գերկայնսն նոցա տրամաբանութեան ընդունայնութեանն յարձակմունս ի բաց հատեալ՝ ընկեսցուք): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ հունարեն բնագրի τῆς λογικῆς (տրամաբանութեան*) բառաձևը մեկնաբանվել է

որպես «զանաօնական»: Միսարը, հավանաբար, առաջացել է հունարեն *δέκω*-ըրում *τῆς λογικῆς* -ի աղավաղման պատճառով և նրա շփոթման *ἄλογος* (զանաօնական)-ի հետ: Ռուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 107) ասված է. «Мы же давайте пресечем кратким словом долгие блуждания по кругу, свойственные этим людям с тщетной их логикой», *իսկ անգլերենում* (MM, Chap. XXVI, 2) կարգում ենք. «But we briefly cut short their long circuit of logical folly»:

173. Հունարեն բնագրում (PG 44, 224D) ասված է. *καὶ οὐ μόνον τὴν γῆν κατὰ τὸν θεῖον λόγον εἰς τὴν γῆν ἀναλύεσθαι* (եւ ոչ միայն գերկիր ըստ աստուածային բանին յերկիր լուծանել): Հայերեն թարգմանություն մեջ բացակայում է «*ըստ աստուածային բանին*»:

174. Հունարեն բնագրում (PG 44, 224D) ասված է. *κἄν ὑπὸ τὸν ὀδόντα τῶν ἰχθύων ἔλθῃ, κἄν εἰς ἀτμοὺς καὶ κόνιν μεταβλήθῃ τῷ πυρὶ* (եւ թէ ընդ ատամք ձկանց անկցի, եւ եթէ ի գոլոշիս եւ ի մղեղ փոխեսցէ հրով): Սակայն հայերեն թարգմանություն մեջ հունարեն բնագրի *ἰχθύων* (ձկանց*) բառաձևը մեկնաբանվել է որպես «գազանաց» (Պերիան), *իսկ* *εἰς ἀτμοὺς* (ի գոլոշիս*)՝ որպես «յոյժ շայեկանութեան մարմնոյն»: Միսարը, հավանաբար, առաջացել է հունարեն *δέκω*-ըրում *ἰχθύων* (ձկանց) բառաձևի աղավաղման և նրա շփոթման Պերիան (գազանաց)-ի հետ, *ինչպես նաև* *εἰς ἀτμοὺς* (ի գոլոշիս)-ի աղավաղումից ու հետագա շփոթումից *εἰς* *χρήσιμους* (ի շայեկան)-ի հետ, որին կցվել է *αὐτῶν* ընդ «մարմնոյն» բառը: *ἴνչ վերաբերվում է «յոյժ» բառաձևին, ապա այն, հավանաբար, առաջացել է հունարեն բնագրում աղավաղված κἄν* (եթէ)-ից, որը շփոթվել է *λίαν* (յոյժ)-ի հետ: Անգլերեն թարգմանություն մեջ (MM, Chap. XXVI, 2) ասված է. «and although it pass beneath the teeth of fish, and although it be changed by fire into vapour and dust»:

175. Հունարեն բնագրում (PG 44, 225A) ունենք. *δύσκολον οἶει* (մտածես դժուար է): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «մտածես» (օ՛ւււ) բառը:

176. Հունարեն բնագրում (PG 44, 225D) ասված է. *Ἀλλοιοῦται μὲν γὰρ δι' αὐξήσεώς τε καὶ μειώσεώς τὸ σῶμα* (Քանզի ի ձեռն աճեցման եւ նուազութեան այլայլի մարմին): Սակայն հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած *հունարեն բնագրի* *Ἀλλοιοῦται* (այլայլի) բայաձևը: Ռուսերեն թարգմանություն մեջ (Лурье, с. 109) ասված է. «Ведь тело изменяется возрастанием и уменьшением», *իսկ անգլերենում կարգում ենք*. «for the body is on the one hand altered by way of growth and diminution» (MM, Chap. XXVII, 3):

177. Հունարեն բնագրում (PG 44, 225D) ասված է. «Ἔστηκε δὲ διὰ πάσης τροπῆς ἀμετάβλητον ἐφ' ἑαυτοῦ τὸ εἶδος, τῶν ἅπαξ ἐπιβληθέντων αὐτῷ παρὰ τῆς φύσεως σημεῖων οὐκ ἔξισταμένον» (Եկաց մնաց ընդ ամենայն շրջումն անփոփոխ ինքն

ընդ յինքեան գտեսիլն, որ միանգամ ի նմայն արկան ի բնութենէ նշանիցն, ոչ ի բացեկաց աւտարացեալ): Հայերեն թարգմանության մեջ ἐπιβληθέντων (որ արկան*) բառաձևը սխալմամբ մեկնաբանվել է՝ «որ գործեցաւ», իսկ τροφῆς (շրջումն*)-ը՝ որպէս «անցեալ յեղյեղուկ հասակն» (բացառված չէ, որ «հասակ»-ի այստեղ հանդես գալը կապված է խաթարված հունարեն բնագրում մի սող վերև գտնվող ἡλικίας (հասակաց)-ի հետ):

178. Այստեղ «Ավետարան» է կոչվում Հին Կտակարանը:

179. Հունարեն բնագրում (PG 44, 228A) ունենք՝ θεωριδῆ (աստուածատեսիլն): Հայերեն թարգմանության մեջ սրանից առաջ հանդես է գալիս «առ» նախդիրը, որը չկա հունարեն բնագրում:

180. Հունարեն բնագրում (PG 44, 228C) ունենք՝ ἐπανακίρνασθαι (միաւորեալ*) բառը, որը աղավաղման պատճառով սխալմամբ մեկնաբանվել է որպէս «որոշեալ մեկնել» (ἀποκεκρίσθαι), ըստ որում վերջինս հունարենում «որոշեալ»-ից բացի ունի նաև երկրորդ՝ «միաւորեալ» նշանակութիւնը:

181. Հունարեն բնագրում (PG 44, 228D) ասված է՝ Ἀπραγματεύτως γὰρ κατὰ τὸ αὐτόματον ἢ κατὰλληλος τροφή (Քանզի անաշխատ ինքնին գոյգ եւ կշիռ կերակուրն): Սակայն հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի՝ Ἀπραγματεύτως (անաշխատ*) բառաձևը աղավաղման պատճառով սխալմամբ մեկնաբանվել է «նախ առաջին» (πρώτως): Իսկ τροφή (կերակուրն*), աղավաղվելով հունարեն ձեռագրում, շփոթվել է στροφή կամ τροπή (շրջումն) բառաձևերի հետ:

182. Հունարեն բնագրում (PG 44, 229A) ասված է. ὅτι τὸ βραχὺ τε καὶ ἀντ' οὐδενὸς ἐκείνου τοῦ τοσοῦτου πραγματός ἐστιν ἀρχή (զի գոյզն եւ փոխանակ ոչ միոյ ուրուք նորա, որ այսպիսեաց իրացն է սկիզբն): Սակայն հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի τοῦ τοσοῦτου (այսպիսեաց*) բառաձևը հանդես է գալիս աղճատված համառոտագրությամբ («սա քո»): Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, 112) կարդում ենք. «что столь малое и само по себе незначительное оказывается началом такого (великого дела)», անգլերենում (MM, Chap. XXVII, 9) ասված է. «that that small thing of no account is the beginning of a thing so great»:

183. Հունարեն բնագրում (PG 44, 229B) ունենք՝ τὸ ἔμπαλιν (ընդդէմ), որից առաջ հայերեն թարգմանության մեջ ավելացրած է «անդրէն» բառաձևը, որը չկա հունարեն բնագրում:

184. Այստեղ Նյուսացին աստվածաբանության դիրքերից քննադատում է «Տիմեոս»-ում զարգացրած Պլատոնի տեսութիւնը մարմնի նկատմամբ հոգու նախազոյացության և նրա վերաբնակեցման կամ վերամարմնավորման (հուն. μετεμψύχωσις) մասին: Միաժամանակ նա մերժում է որոշ քրիստոնյա

աստվածաբանների և մասնավորապես Կղեմես Ալեքսանդրացու գաղափարը մարմնի նախագոյացության մասին (19, 34, 68, Лурье с. 172):

185. Խոսքը Օրիգենեսի «Յաղագս սկզբանց» աշխատության մասին է, որտեղ վերջինս շարադրել է իր հայացքները հոգու նախագոյացության մասին (40, 67):

186. Նյուսացին մեջբերում է կատարում հռչակավոր հույն բնափրկիչուփա էմպեդոկլեսի (մ.թ.ա. V դ.) մեզ չհասած պոեմից, որը պահպանվել է Դիոգենես Լաերտացու «Հռչակավոր փիլիսոփաների կյանքի, ուսմունքների և ասույթների մասին» գրքում (61): Աստվածաբանության դիրքերից Նյուսացին քննադատում և նույնիսկ ծաղրում է նորպլատոնականների միջավայրում լայն տարածում գտած հոգիների վերաբնակեցման տեսությունը:

187. Հունարեն բնագրում (PG 44, 232B) ասված է. *Εἰ γὰρ διὰ τινος κακίας ἀποσπασθεῖσα τῆς ὑψηλοτέρας ἢ ψυχῆ πολιτείας, μετὰ τὸ (καθὼς φασιν) ἄπαξ γεύσασθαι τοῦ σωματικοῦ βίου, πάλιν ἄνθρωπος γίνεται* (Քանզի եթէ ի ձեռն իրիք չարութեան կորզեալ, հանեալ ի բարձրագոյն վարուցն ոգին, որպէս ասեն, զկնի միանգամայն ճաշակելոյ զմարմնաւոր կեանս՝ դարձեալ մարդ լինի): Սակայն հայերեն թարգմանության մեջ բացակայում է «որպէս ասեն, զկնի միանգամայն ճաշակելոյ զմարմնաւոր կեանս՝ դարձեալ» (μετὰ τὸ (καθὼς φασιν) ἄπαξ γεύσασθαι τοῦ σωματικοῦ βίου, πάλιν) հատվածը: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 114) ասված է. «Если же, как говорят они, из-за какого-нибудь порока душа отпадет от высшего жительствова (государства), то, уже после того, как вкусила один раз телесной жизни, она вновь становится человеком», իսկ անգլերենում (MM, Chap. XXVIII, 4) կարդում ենք՝ «For if the soul, being severed from the more exalted state by some wickedness after having once, as they say, tasted corporeal life, again becomes a man»:

188. Հունարեն բնագրում (PG 44, 233A) ունենք՝ τῷ ἀναισθητῷ (ի անզգալուջն*): Սակայն հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս «ի գգալուջն» (τῷ αἰσθητῷ) սխալ բառաձևը, որը, հավանաբար, առաջացել է հայերեն կամ հունարեն ձեռագրում «ան» (ἀν) ժխտական մասնիկի անկման պատճառով:

189. Այս ամբողջ հատվածը՝ «Եւ մի՛ դարձեալ իբրու թէ կաւեղէն պատկեր յառաջագոյն ստեղծեալ բանիւ զմարդն, յաղագս սորա զոգիսն լինել ասել: Քանզի եթէ անարգագոյն քան զկաւեղէն ստեղծուածն զիմանալի բնութիւնն ցուցեալ լինիցի» հունարեն բնագրում գտնվում է նախորդ գլխի վերջում (PG 44, 233C) (μηδ' αὖ πάλιν οἰοεῖ πῆλινον ἀνδριάντα προδιαπλασθέντα τῷ λόγῳ τὸν ἀνθρώπου, τοῦτου ἕνεκα τὴν ψυχὴν γίνεσθαι λέγειν .ᾗ γὰρ ἂν ἀτιμότερα τοῦ πηλίνου πλάσματος ἢ νοερά φύσις ἀποδειχθείη), իսկ հայերեն թարգմանության մեջ տե-

դափոխվել է սուլյն գլխի սկիզբը, ինչպես և անգլերեն թարգմանության մեջ և Ֆորբսի դասակարգման երկրորդ խմբագրության լատիներեն ձեռագրերում (MM, Chap. XXIX, com. 2):

190. Հունարեն բնագրում (PG 44, 236A) ասված է. οὐ τῶ παντὶ κατὰ τὸ ἀθρόον ἐξαρκούσα (ոչ ամենայնիւ ըստ միանգամայն բաւական եղեալ): Սակայն Հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի աղավաղված կատարումը (ըստ միանգամայն*) բառակապակցութիւնը սխալմամբ մեկնաբանվել է որպէս «ըստ մարդկային» (κατὰ ἀνθρώπινον):

191. Հունարեն բնագրում (PG 44, 236A) ունենք՝ τὸ κατὰ τὸν στάχυν (ըստ Հասկին*), սակայն Հայերեն թարգմանության մեջ Հանդես է գալիս «ըստ Հասակին» սխալ ձևը, «Հասկ» և «Հասակ» բառաձևերի շփոթման պատճառով:

192. Հունարեն բնագրում (PG 44, 236B) ասված է. οὐ μὴν ἑτέραν ἐπεισκρίνεσθαι φύσιν (սակայն ոչ այլ ի սմա ի ներքս թափանցել բնութիւն): Սակայն Հայերեն թարգմանության մեջ «ի ներքս թափանցել*» (ἐπεισκρίνεσθαι)-ի փոխարեն ունենք՝ «սերմանել» (σπείρω), որը, հավանաբար, առաջացել է հունարեն ձեռագրում առաջինի աղավաղումից և երկրորդի հետ շփոթումից: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, 117) ասված է. «а не примешивается другая природа»: Իսկ անգլերեն թարգմանության մեջ (MM, Chap, XXIX, 3) կարդում ենք. «not by any means that another nature is infused into it»:

193. Հունարեն բնագրում (PG 44, 236C) ասված է. Καὶ γὰρ καὶ εἶδος τοῦ μέλλοντος συνίστασθαι ἀνθρώπου ἐν ἐκείνῳ ἐστὶ τῇ δυνάμει (եւ քանզի եւ տեսիլն Հանդերձելոյն գոյանալ մարդոյն ի նմանէ գաւրութեամբ): Հայերեն թարգմանության մեջ որոշ գրիչներ «ի նմանէ»-ի կողքին տալիս են «ի սերման» լուծմունքը: Ի դեպ նշենք, որ Նյուսացու սուլյն աշխատության բազմաթիվ գրչագրերում առկա են այսպիսի մեկնողական բնութիւն նշումներ:

194. Հունարեն բնագրում (PG 44, 237A) ունենք՝ ἐναργέστερον (յայտնագոյն*), որը աղավաղման ենթարկվելով հունարեն ձեռագրում շփոթվել է ἐνεργέστερον (գործաւորագոյն)-ի հետ ու այդպէս էլ թարգմանվել Հայերեն:

195. Հունարեն բնագրում (PG 44, 237A) ունենք՝ δι' ἄλλων σημείων, δι' ὧν (ի ձեռն յայլոց նշանացն, ի ձեռն որոց): Հայերեն թարգմանության մեջ բացառկայում է «ի ձեռն յայլոց նշանացն» (δι' ἄλλων σημείων) հատվածը:

196. Հունարեն բնագրում (PG 44, 237C) ունենք՝ διαλάμπειν (ընծուիլ*, արձակել լոյս) բայաձևը, որը Հայերեն թարգմանության մեջ մեկնաբանվել է որպէս «ընծիւղել» (արձակել ճիւղս): Նշե՛ում ասված է. «Վրիպակաւ ընծուիլն շփոթի ընդ ընծիւղիլ»: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с. 120) ունենք՝ «просвечивать», իսկ անգլերեն (MM, Chap. XXIX, 8)՝ «to shine forth»:

197. Հունարեն բնագրում (PG 44, 237D) ունենք՝ ἐναργέστερον (յայտնագոյն*) բառաձևը: Վերջինս՝ աղավաղվելով հունարեն ձեռագրում, չփոթվել է ἐνεργέστερον (ներգործագոյն)-ի հետ ու այդպես էլ թարգմանվել հայերեն: Հետաքրքրական է նշել, որ այլ դեպքում այն հայերեն թարգմանվել է որպես «գործաւորագոյն» (տե՛ս ծ. 194):

198. Հունարեն բնագրում (PG 44, 240C) ունենք՝ θέσις (դիր*), որը հայերեն թարգմանութեան մեջ մեկնաբանվել է որպես «տեսութիւնն» (θεωρία), հավանաբար, հունարեն ձեռագրում առաջինի աղավաղման և վերջինիս հետ չփոթման պատճառով:

199. Այստեղ Գրիգոր Նյուսացին կարևորում է դիահերձման դերը անատոմիական ուսումնասիրութիւններում. մի եղանակ, որը վերելք ապրեց անտիկ շրջանում, հատկապես Ալեքսանդրիայի դպրոցի բժիշկների, իսկ հետագայում Գալենի գործերում (21, էջ 54-57: 51, p. 47-49):

200. Խոսքը Ալեքսանդրիայի դպրոցի անատոմների՝ Հերոֆիլոսի և Էրաստրատոսի մասին է, որոնց աշխատութիւնները մեզ չեն հասել, սակայն պահպանվել են պատառիկների և մեջբերումների տեսքով Գալենի «Մարդու մարմնի մասերի նշանակութեան մասին» (De usu partium corporis humani) հուշակալոր գրքում (Galenus; 58):

201. Նյուսացին անդրադառնում է անտիկ բժշկութեան մեջ մեծ հեղինակութիւն վայելող Պլատոնի և Արիստոտելի հայացքներին բնական (φυσική), կենդանական (ζωτική) և շնչական (ψυχική) հոգու մասին, որոնք հիմք հանդիսացան Գալենի ֆիզիոլոգիական ուսմունքի համար: Համաձայն այդ ուսմունքի մարդու մարմնի երեք կարևորագույն օրգանների՝ լյարդի, սրտի և ուղեղի գործունեութիւնը պայմանավորված է վերոհիշյալ երեք հոգիների առկայութեամբ (44, 46):

202. Հունարեն բնագրում (PG 44, 241A) ասված է. Τὰ γὰρ τοιαῦτα τὴν ζῶην μὲν οὐ συνίστησιν, ἐπεὶ καὶ λιπόντων τινῶν πολλακίς (Քանզի այսպիսիքս զկեալն ոչ գոյացուցանեն, վասն զի եւ պակասելոց ոմանց բազում անգամ դէպ եղեւ): Հայերեն թարգմանութեան մեջ «ոչ գոյացուցանեն» (οὐ συνίστησιν)-ից առաջ ավելացրած է «մեզ» բառաձևը, իսկ նրանից հետո՝ «սպա եթէ ոչ եւ գոյացուցեալ էր» հատվածը, որոնք չկան հունարեն բնագրում:

203. Հունարեն բնագրում (PG 44, 241A.) ունենք՝ μονοειδῶς (միաձեւ*), սակայն հայերեն թարգմանութեան մեջ սրա փոխարեն հանդես է գալիս «միայն գիտացեալ» բառակապակցութիւնը, որը հունարեն ձեռագրում μονοειδῶς բառաձևի երկու մասի բաժանման արդյունք է՝ μόνον (միայն) և εἶδῶς (գիտացեալ):

204. Հունարեն բնագրում (PG 44, 241B) ասված է. τοῦ παντὸς σώματος ὕλη κοινὴ (ամենեցունն մարմնոյ նիւթն հասարակ): Հայերեն թարգմանութեան մեջ բաց են թողած «մարմնոյ» (σώματος) և «հասարակ» (κοινὴ) բառաձևերը:

205. Այստեղ Նյուսացին անդրադառնում է Գալենի տեսութեանը շնչական կամ բանական հոգու (պնևմայի) մասին, որը ուղեղից անցնում է ողնաշար, ապա նյարդերի միջոցով հաղորդում մկաններին շարժողութեան ունակութիւն: Հետաքրքրական է, որ Նյուսացին, հետևելով Գալենին, հակադրվում է Արիստոտելին, որը շարժողութեան, ինչպես նաև զգացողութեան կենտրոն համարում էր սիրտը՝ և ոչ թե ուղեղը (58):

206. Հունարեն բնագրում (PG 44, 244C) ասված է. καὶ ἡ τῶν βλεφάρων διαστολὴ ἄμα νεύματι γινομένη (եւ կոփոցն որոշութիւն միանգամայն ընդ թարթափ ական եղեալ): Սակայն Հայերեն թարգմանութեան մեջ Հունարեն νεύματι (թարթափ ական*) բառը մեկնաբանվել է որպես «իմանալոյն» (νοήματι) հունարեն ձեռագրում վերոհիշյալ բառաձևի աղավաղման և շփոթման պատճառով: Հետաքրքրական է նշել, որ անգլերեն թարգմանութեան մեջ (MM, Chap. XXX, 9) կրկնվում է այդ նույն սխալը՝ «with a thought»: Վերջինս ամենայն հավանականութեամբ գալիս է Հայերեն ու անգլերեն թարգմանութեան հիմքում ընկած ձեռագրից:

207. Նման փորձեր ժամանակին կատարել էր ինքը՝ Գալենը, ապացուցելով գլխուղեղի կարևոր դերը օրգանիզմում (58):

208. Հունարեն բնագրում (PG 44, 245A) ասված՝ Οὐ γὰρ ἐπιλειποτός ἡ νεκρότης (Քանզի որոյ ի թողացելոյն մեռելութիւնն): Հայերեն թարգմանութեան մեջ «մեռելութիւնն» (ἡ νεκρότης)-ից առաջ ավելացրած է «ի ջերմ» բառակապակցութիւնը, որը բացակայում է հունարեն բնագրում: Վերջինս հավանաբար առաջացել է հունարեն բնագրի նախորդ նախադասութեան մեջ առկա ἐν τῷ θερμῷ (ի ջերմոջն) բառակապակցութիւնից՝ որպէս շփոթութեան արդյունք:

209. Այստեղ Նյուսացին անդրադառնում է միջնադարյան բժշկութեան մեջ ընդունված գալենյան տեսութեանը, ըստ որի սիրտը համարվում էր ջերմութեան և կենսական պնևմայի աղբյուր, և զարկերակների միջոցով այն հաղորդում բոլոր օրգաններին ու խթանում նրանց գործունեությունը: Ինչ վերաբերվում է մարմնի մյուս կարևորագույն գործարանին (ուղեղից ու սրտից հետո)՝ լյարդին, ապա Նյուսացին, հետևելով Գալենին, այն դիտում է որպէս արյան աղբյուր և բնական պնևմայի կենտրոն, որը, ստեղծելով սննդանյութերից «հում» երակային արյունը, նրանով սնում է մարմնի բոլոր մասերը (Galenus; 44, 46):

210. Հունարեն բնագրում (PG 44, 245C) ասված է. ἐκ τοῦ παρακειμένου

πνεύματος (ի մաւտակայ թոքոյն), սակայն հայերեն թարգմանութեան մեջ «թոքոյն*» (πνεύματος)-ի փոխարեն ունենք՝ «չնչոյն» (πνεύματος): Հետաքրքրական է, որ անգլերեն թարգմանութեան մեջ առկա է նույն սխալը (MM, Chap. XXX, 15)՝ «from the adjacent air», մինչ դեռ պետք է լիներ՝ «from the adjacent lung»: Միայն Հավանաբար ծագել է հայերեն ու անգլերեն թարգմանութեան հիմքում ընկած նույն հունարեն ձեռագրից:

211. Հունարեն բնագրում (PG 44, 245C) ասված է. καὶ τὸ πυρῶδες ἑαυτῆς ἐκκριπίζουσα (եւ գհրուտ նորա բորբոքեցուցանելով*): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ հակառակն է ասված՝ «եւ գհրուտ նորա զովացուցանելով»: Այսպիսի սխալ մեկնաբանություն հունարեն ἐκκριπίζω (փչելով բորբոքել) բայածէր Հավանաբար ստացել է, վերջինիս աղավաղման ու σκιάζω (զովացուցանել)-ի հետ շփոթման պատճառով:

212. Հունարեն բնագրում (PG 44, 245D) ասված է. Πολλάκις γὰρ ὁ μὲν νοῦς ἀσχολὸς ἐστὶ (Քանզի բազում անգամ միտքն անպարպ է): Հայերեն թարգմանութեան մեջ «միտքն*» (νοῦς) մեկնաբանվել է որպէս «կարատեակք»: Բացառված չէ, որ սխալը առաջացել է հունարեն ձեռագրում μὲν νοῦς բառակապակցութեան աղճատման ու նրա շփոթման ἐνδεῆς (կարատեակ)-ի հետ:

213. Հունարեն բնագրում (PG 44, 248A) ունենք՝ ἀδυναμία (անկարողութիւն*), որը հայերեն թարգմանվել է «անկարատեակեան»: Միայն առաջացել է հայերեն ձեռագրերում «ղ» և «տ» տառերի շփոթման պատճառով:

214. Նույն միտքը, համաձայն որի թոքերը, որպէս հով բնութիւն ունեցող օրգան, շնչելով, մեղմացնում են սրտի կրակը, բազմիցս հանդիպում է միջնաղարջան հայկական բժշկարաններում: Օրինակ՝ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» գրքում (1) կարգում ենք. «Եւ արար Աստուած զթոքն որպէս մրուհար ամենայն անձին, որ հանապազ հովհարու սրտին... որ կրակն սրտին յանկահի»:

215. Հունարեն բնագրում (PG 44, 248C) ասված է. Διὰ τοῦτο κατόπιν μὲν ὑποβάσα τὸν πνεύμονα, διὰ τῆς διηνεκοῦς κινήσεως, κατέλκουσά τε πρὸς ἑαυτὴν τὸ σπλάγχχνον (Վասն այտորիկ յետոյ անցեալ կայ թոքն՝ ի ձեռն հանապազորդ շարժման ձգելով առ ինքն գաղին): Հետաքրքրական է, որ այստեղ «գաղին (τὸ σπλάγχχνον) ասելով, Նյուսացին հասկանում է հենց նույն թոքը (τὸν πνεύμονα): Համաձայն Գալենյան տեսութեան, սիրտը, գտնվելով թոքերից ներքև և անդադար շարժվելով, դեպի իրեն է ձգում թոքերը ու նպաստում շնչառութեանը: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 130) ասված է. «Поэтому задняя сторона (сердца), находящаяся ниже легкого, благодаря своему постоянному движению опускает к себе этот орган»:

216. Հունարեն բնագրում (PG 44, 248D) ասված է. Μέση γὰρ τῆς ἐκατέρων ἕδρας ἡ καρδία παρεμπεσοῦσα (*Քանզի ի մէջ երկոցունց ուռոց սիրան մաւտ ի ներքս անկեալ դնի*): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ «ուռոց»-ից հետո ավելացրած է «բերանոցն», որ չկա հունարեն բնագրում, և իմաստով էլ սխալ է, քանի որ խոսքը գնում է կերակրափողի և շնչափողի նստավայրի և ոչ թէ նրանց «բերանոց»-ի մասին :

217. Հունարեն բնագրում (PG 44, 249A) ունենք՝ τὰ συνεστῶτα (*ի մի գոյացեալ*): Հայերեն թարգմանութեան մեջ «մի»-ից հետո ավելացրած է «բնութիւնն», որը չկա հունարեն բնագրում:

218. Հունարեն բնագրում (PG 44, 249A) ունենք ὑποστάθμην (*գնատուած**), որը աղավաղվել ու շփոթվել է σταθμίον բառաձևի հետ և հայերեն սխալմամբ թարգմանվել «ի կշռոյ»:

219. Հունարեն բնագրում (PG 44, 249A) ասված է. ὡς ἂν μὴ δι' εὐθύτητα τοῦ πόρου ῥαδίως ἀποβαλόμενον, εὐθὺς ἀνακινοίη τὸ ζῶον πρὸς ὄρεξιον (*իբրու զի ոչ է մարթ՝ ընդ ուղղորդութեան անցից գնացիցն դիւրաւ ի բաց հանել, անդէն վաղվաղակի շարժեսցէ զկենդանին առ գեղձումն ցանկութեան*): Սակայն հայերեն թարգմանութեան մեջ հունարեն բնագրի εὐθύτητα (*ուղղորդութեան**) բառաձևը, աղավաղվելով շփոթվել է εὐθὺς (*վաղվաղակի անդէն*)-ի հետ, որը հանգեցրել է վերջինիս կրկնութեանը: Ռուսերեն թարգմանութեան մեջ (Лурье, с. 131) ասված է. «Иначе, если бы проход был прямым, пища бы легко извергалась, и живое существо быстро бы подвигалось на голод»: *Իսկ անգլերեն թարգմանութեան մեջ (MM, Chap. XXX, 21) կարգում ենք. «lest if it were easily got rid of by a straight passage, it might at once exite the animal again to appetite»:*

220. Նյուսացին այստեղ, ավարտելով մարսողութեան գործընթացի նկարագրությունը, անցնում է Գալենի ֆիզիոլոգիական ուսմունքի այլ հիմնադրությունների շարադրմանը (58, с.166-218):

221. Հունարեն բնագրում (PG 44, 249B) ունենք՝ τῆς θερμαντικῆς οὐσίας (*Չերմական էությունն**) բառակապակցությունը, որը հունարեն բնագրում աղավաղվել ու շփոթվել է τῆς θερμαντικῆς φύσεως (*Չերմական բնութեանն*) հետ և այսպես էլ թարգմանվել հայերեն:

222. Հունարեն բնագրում (PG 44, 249B) ասված է. τῆ πυροειδεί χρώα τοῦ αἵματος εἶδος καταφονίξας (*հրաձեւ ի գունոյ զարեան տեսակն շառագունեցուցեալ*): Հայերեն թարգմանութեան մեջ τὸ τοῦ αἵματος εἶδος (*զարեան տեսակն**) մեկնաբանվել է որպես «արիւնուտային» (αἵματώδης): Սխալը առաջացել է հունարեն ձեռագրում αἵματος εἶδος բառակապակցության աղճատման և շփոթման αἵματώδης (*արիւնուտային*)- ի հետ:

223. Հունարեն բնագրում (PG 44, 249C) ունենք՝ *κουφιζόμενον* (թեթեացուցեալ*) բառաձևը, որը հայերեն մեկնաբանվել է «փոքրոգի վերացուցեալ»:

224. Հունարեն բնագրում (PG 44, 249C) ասված է. *εις μυρίας ὀχετῶν ἀρχάς τε καὶ διαφύσεις* (ի բազում սկզբունս անցից գնացից եւ ուղէչս): Հայերեն թարգմանություն մեջ բաց է թողած «անցից գնացից» (*ὀχετῶν*)-ը, իսկ «ուղէչս» (διαφύσεις)-ից հետո ավելացրած է «բնութեանն» բառաձևը, որը հավանաբար առաջացել է հունարեն ձեռագրում διαφύσεις-ի աղավաղման ու փյուսել (բնութեանն)-ի հետ շփոթման պատճառով:

225. Հունարեն բնագրում (PG 44, 249D) ասված է. Τοῦ τε γὰρ θερμοῦ τὸ καθαρῶτατον, καὶ τοῦ ὑγροῦ τὸ λεπτότατον παρ' ἑκατέρας δυνάμεως διὰ τινος μίξεώς τε καὶ ἀνακράσεως ἐνωθέντα, τρέφει τε καὶ συνίστησι διὰ τῶν ἀτμῶν τὸν ἐγκέφαλον (*Քանզի ջերմոյն մաքրագոյնն եւ գիջոյն նրբագոյնն յերկոցունց զաւրութեանց ի ձեռն խառնուածոյ իմն եւ ընդ միմեանս հարկանելոյ միաւորեալք՝ սնուցանէ եւ գոյացուցանէ ի ձեռն գոլոշեացն զխելսն*): Սակայն հայերեն թարգմանություն մեջ տույն (*գիջոյն**) մեկնաբանվել է որպես «հրոյն» (տու պրօս), իսկ տան ատման (*գոլոշեաց**), որպես տան արմոնիւն «յարմարման»: Սխալը, ամենայն հավանականութեամբ, առաջացել է հունարեն ձեռագրում տույն և տան ատման բառաձևերի աղավաղման ու նրանց շփոթման տույն և տան արմոնիւն - ի հետ:

226. Հունարեն բնագրում (PG 44, 249D) ունենք՝ *καθεξῆς* (կարգալ*), որը հայերեն թարգմանություն մեջ մեկնաբանվել է՝ «ըստ նմանէն»:

227. Հունարեն բնագրում (PG 44, 252A) ունենք՝ *καὶ κατὰ* (քանզի եւ) բառակապակցությունը: Հայերեն թարգմանություն մեջ «եւ» շաղկապը բացառված է:

228. Հունարեն բնագրում (PG 44, 252B) ունենք՝ *τῶν ἀκαυθῶν* (փչոց*), սակայն հայերեն թարգմանություն մեջ այն մեկնաբանվել է որպես «գաւազանաց» (τῶν ῥάβδων):

229. Հունարեն բնագրում (PG 44, 252B) ունենք՝ *ταῖς ὠμοπλάταις* (*լատ. scapula*), որը հայերեն թարգմանվել է որպես «թիկանցն»: Ժամանակակից բժշկական եզրաբանություն մեջ այդ իմաստով օգտագործվում է միայն «թիակ» եզրը:

230. Այստեղ Նյուսացին հանդես է գալիս ոչ միայն որպես նյութական աշխարհի գեղեցկությունը հիացած արվեստագետ ու փիլիսոփա, այլ նաև բուսաբանություն և բուսաբուժության հարցերին քաջածանոթ բնագետ և բժիշկ: Նրա նկարագրած մի շարք բույսեր՝ ապրսամը - *Commiphora opobalsamum* Engl., քրքումը - *Crocus sativus* L., սքինոսը - *Schinus* L., գափինին - *Laurus*

nobilis L., օշինդրը - *Artemisia L.*, կապուտակը կամ հակինթը - *Hyacinthus L.*, վարդը, շուշանը, մանուշակը հնուց կիրառվում էին բուսաբուժության ոլորտում, իսկ մրգերից՝ խաղողը, խնձորը, տանձը, թուզը ու նրանց հյութերը պիտանի էին համարվում սննդաբուժման համար: Վերոհիշյալ դեղաբույսերը և սննդաբույսերը հիշատակված են դասական շրջանի հույնական դեղագիտությանում՝ Դիոսկորիդեսի «*Materia medica*» գրքում, ինչպես նաև հնագույն հայկական «Գազիկ-Հեթումեան բժշկարանում» ու Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու աշխատություններում (42, 43; 21, էջ 101-114, 148-151):

231. Հունարեն բնագրում (PG 44, 252D) ունենք՝ σάρκες (մարմինք): «Մարմին» բառը միջնադարյան հայկական աղբյուրներում նշանակում էր՝ 1. մարմին σῶμα 2. միս σάρξ, σάρκος 3. մարդ (άνθρωπος): Սույն թարգմանության մեջ այն օգտագործվել է «միս» իմաստով:

232. Հունարեն բնագրում (PG 44, 252D) ունենք՝ ῥῖπερ (ուր որ*) բառաձևը, որը աղավաղվել է շփոթվել է ῥῶπερ (որպէս, գիարդ)-ի հետ ու այդպես էլ թարգմանվել հայերեն:

233. Հունարեն բնագրում (PG 44, 253A) ասված է. τῆ ἀκουστικῆ καταμίγνυται φύσει (ի լսական բնութեանն խառնեսցի): Սակայն հայերեն թարգմանության մեջ բաց է թողած «բնութեանն» (φύσει) բառաձևը:

234. Հունարեն բնագրում (PG 44, 253A) ասված է. καὶ εἰς τριχῶν γένεσιν λεπτοποιεῖται τοῖς καταλήλοις ἀτμοῖς (եւ ի հերաց ծնունդ մանրագործեալ լինի զոյգ գորշխն): Սակայն հայերեն թարգմանության մեջ ἀτμοῖς (գորշխն*) մեկնաբանվել է որպես «զհամադամ համսն» (εὐχύμοις χυμοῖς): Միայն, ամենայն հավանականությամբ, առաջացել է հունարեն ձեռագրում ἀτμοῖς բառաձևի աղճատման ու նրա շփոթման χυμοῖς-ի հետ:

235. Հունարեն բնագրում (PG 44, 253A) ունենք՝ τῶν ἀτμῶν (գորշեացն*), որը հայերեն թարգմանության մեջ սխալ մեկնաբանվել է որպես «հիւթից համոցն» (τῶν χυμῶν): Բացատրությունը տես՝ նախորդ ծանոթագրությունում:

236. Հունարեն բնագրում (PG 44, 253B) ունենք՝ ἀπογεινᾶσθαι ζῶον (ծնանել էակ): Հայերեն թարգմանության մեջ բացակայում է «էակ» (ζῶον) բառաձևը:

237. Հունարեն բնագրում (PG 44, 253C) ասված է. καὶ ἔστι λέων (եւ է առիւծ), սակայն հայերեն թարգմանության մեջ «առիւծ»-ից հետո ավելացրած է «կամ մարդ», որը բացակայում է հունարեն բնագրում: Հետաքրքրական է, որ այս հավելվածը անգլերեն թարգմանության մեջ (MM, Chap. XXX, 30) նույնպես առկա է. «*is a lion, or a man*»: Հավանաբար հայերեն և անգլերեն թարգ-

մանուկներին հիմքում ընկած է հունարեն գրչագրերից մեկը, որը պատկանում է *Forbes* – ի դասակարգման երկրորդ ձեռագրախմբին: Վերջինս ընդգրկում է նաև մի շարք լատիներեն ձեռագրեր: Իրոք, լատիներեն թարգմանություն մեջ ասված է. «*ipse vel leo, vel homo*» (PG 45, 253C):

238. Հունարեն բնագրում (PG 44, 253D) ասված է. καὶ ἐν τῷ τελείῳ τέλειον (եւ կատարեալ՝ ի կատարեալին): Այս ամբողջ հատվածը բացակայում է հայերեն թարգմանության մեջ: Ռուսերեն թարգմանության մեջ (Лурье, с.136) ասված է «в завершенном- совершенном», անգլերենում (MM, Chap. XXX, 30) ունենք՝ «perfect in that which is perfect»:

239. Հունարեն բնագրում (PG 44, 256B) ունենք՝ δυναμὶς τις ψυχικὴ (զաւրութիւն իմն հոգեկան): Հայերեն թարգմանության մեջ «հոգեկան» (ψυχικὴ) բառաձևը բաց է թողած:

240. Հունարեն բնագրում (PG 44, 256B) ունենք. ἐν καταχρήσει τιμῆς συνηθείας (պիտակաբար իմն սովորութեամբ): Հայերեն թարգմանության մեջ «իմն»-ից հետո ավելացրած է «ի վար արկանելով», որ չկա հունարեն բնագրում:

241. Հունարեն բնագրում (PG 44, 256C) ունենք՝ βουλομένοις (կամէին*): Սակայն բոլոր հայերեն գրչագրերում առկա է աղավաղված «կարէին» բառաձևը:

242. Հունարեն բնագրում (PG 44, 256C) ասված է. ἀπεκδύσασθαι δεῖν τὸν παλαιὸν ἄνθρωπον, καὶ ἐνδύσασθαι τὸν νέον (պարտ է ի բաց մերկանալ զհին մարդն եւ զգեհուլ զնորն): Հայերեն թարգմանության մեջ բաց են թողած «պարտ է» (δεῖν) և «զնորն» (τὸν νέον) բառաձևերը:

243. Հունարեն բնագրում (PG 44, 256C) ունենք ᾧ ἢ δόξα καὶ τὸ κράτος (որում փառք եւ գաւրութիւն): Հայերեն թարգմանության մեջ բացակայում է «եւ գաւրութիւն» (καὶ τὸ κράτος):

ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արուսյիդ**, Յաղագս կազմութեան մարդոյ, աշխ. Ա. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 133, 197
2. **Յ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա-Ե, Երևան, 1942-1962, հ. Դ, 1948, էջ 603-605
3. **Ա. Ա. Արևշատյան**, Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը- «Պատմա-բանասիրական հանդես», 1973, Հ^տ 1, էջ 23-37
4. **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կիմ Մուրադյանի, Երևան, 1984
5. **Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփյան**, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 55
6. **Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան**, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա-Բ, Երևան, 1965, 1970
7. **Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1984
8. **Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Ա. Քեօշկերեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երևան, 2004
9. **Գ. Զարպիհանայան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 362-374
10. Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի և Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնք. Արիստոտէլի իմաստասիրի Յաղագս աշխարհի, Վենետիկ, 1833, էջ 603-628
11. **Վ. Հակոբյան**, Արիստոտէլին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության հայերեն թարգմանության ընդարձակ տեքստը և այդ աշխատության հայկական մեկնաբանությունները, Երևան, 1947, թեկնածուական դիսերտացիա
12. **Ա. Ծեմճեմյան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ-Ը, Վենետիկ, Ս. Ղազար, 1993-1998
13. **Կ. Մուրադյան**, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983
14. **Կ. Մուրադյան**, Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1993
15. Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889
16. **Մ. Շիրինյան**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, Երևան, 2005, էջ 308
17. **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 555

18. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135
19. Պղատոնի Իմաստասիրի Տրամախօսութիւնք, Վենետիկ, 1877
20. **Ն.Պողարյան**, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, հ. Ա-ԺԱ, Երուսաղէմ, 1966-1991
21. **Ս. Վարդանյան**, Հայաստանի բժշկութեան պատմություն, Երևան, 2000, էջ 57-59
22. **Օ. Վարդազարյան**, «Թուղթ առ Ողոմպիար» որպէս մեկնողական ծրագիր և նրա հայերէն թարգմանությունը «Հայ մեկնողական դպրոցները» գիտաժողովի զեկուցումների նյութերում, սեպտեմբերի 22-24 2004 թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, էջ 19
23. **Յ. Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Ա-Զ, Վիեննա, 1895, էջ 7-10
24. **Ավ. Տեր-Պողոսյան**, Բիւղոզիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 199-207
25. **B. Altaner**, *Précis de Patrologie*, Paris, 1961, p. 435-444.
26. **M. Altenburger, F. Mann**, *Bibliographie zu Gregor von Nyssa, Editionen, Übersetzungen-Literatur*, Leiden etc, E, J. Brill, 1988
27. **O. Bardenhewer**, *Geschichte der altkirchlichen Literatur*, III B., Darmstadt, 1962, S.188-220
28. **J. F. Callahan**, *Greek Philosophy and Cappadocian Cosmology*, DOP, 12 (1958), p.29-57
29. **M. Cappuyns**, *Le "De imagine" de Gregoire de Nysse traduit par Jean Scot Erigene*, *Recherches de theologie ancienne et medievale*, 32 (1965), p. 205-262
30. **E. Cavalcanti**, *Studi Eunomiani*, Roma, 1976 (*Orientalia Christiana Analecta*, N 202)
31. **E. Corsini**, *La polemica contro Eunomio e la formazione della dottrina sulla creazione in Gregorio di Nissa, Arche e Telos. L'Antropologia di Origene e di Gregorio di Nissa. Analisi storico religiosa. Atti del colloquio, Milano, 17-19 maggio 1979. Pubblicati a cura di U. Bianchi con la cooperazione di H. Crouzel. Milano, 1981, p. 197-212, Discussione, p. 213-216 (Studia patristica mediolanensia, 12)*
32. **H. Hayd a. J. Fisch**, *Ausgewählte Schriften des hl. Gregorius, Bischofs von Nysse*, 12 Band in *Bibliothek der Kirchenväter*, Kempton, 1874, 1880
33. *Histoire de la Sioumie par Stephannos Orbelian, traduite de l'Arménien par M. Brosset*, St. Petersbourg, 1864, pp.82-83
34. **H. Karpp**, *Probleme altchristlicher Antropologie. Biblische Antropologie und philosophische Psychologie bei den Kirchenfätern des dritten Jahrhunderts*, Gutersloh, 1950
35. **J. Laplace**, *Grégoire de Nysse, La Création de l'Homme*, in *Sources Chrétiennes*, 6, Paris, 5418-5565, 1943
36. **P. Levine**, *Two Early Latin Versions of St. Gregory of Nysse's περί κατασκευής ἀνθρώπου*, *Harvard Studies in Classical Philology*, 63, (1958), p.473-492; *PL*, 67, 345-408

37. **Nemesius**, *De la nature de l'homme, traduite par J.B.Tribault, Paris, 1844*
38. **C. F. Neumann**, *Versuch einer Geschichte der armeniaschen Literatur. Leipzig, 1836*
39. **F. Oehler**, *Bibliothek der Kirchenväter, Gregor von Nyssa, (4 Bd), Leipzig, 1859 (ed. Graeco-germanica)*
40. **Origenes Werke, Bd. V, De Principiis, hrgb. P.Koetschau, Leipzig, 1913, S. 65-68**
41. **B. Otis**, *Gregory of Nyssa and the Cappadocian conception of time, Studia Patristica, Berlin, 14 (1976), p.327-357*
42. **Pedanii Dioscoridis Anazarbei, De Materia medica, ed. Max Welmann, v. I, II, III, Berlini 1906-1914**
43. **Des Pedanios Dioskurides aus Anazarbos Arzneimittellehre in fünf Büchern, übersetzt und mit Erklärungen versehen von Prof. Dr. J. Berendes. Stuttgart, 1902**
44. **R. Porter**, *The Greatest Benefit to Mankind. A Medical History of Humanity, New York, London, 1998*
45. **D. T. Runia**, *A Note on Philo and Christian Heresy. A Collection of Papers. Supplement to Vigiliae Christianae. Leiden-New York-Köln, 1995, pp. 141-151.*
46. **Ch. Singer and A. Underwood**. *A short History of Medicine, Oxford, 1962*
47. **O. Temkin**, *Byzantine Medicine. Tradition and Empiricism, DOP, 16 (1962), p. 95-115*
48. **R. W. Thomson**, *Indices to the Armenian Version of Pseudo-Dionysius the Areopagite, Amsterdam-Atlanta, GA, 1997*
49. **R. W. Thomson**, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite, CSCO, 488 (Armenian text), Scriptorum Armeniaci 17, Louvain, 1987*
50. **R. W. Thomson**, *Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite, CSCO, 489 (English translation), Scriptorum Armeniaci 18*
51. **S. A. Vardanian**, *Histoire de la médecine en Arménie, Paris, 1999, p. 50-52*
52. **S. A. Vardanyan**, *The ancient Armenian Version of "On the Making of Man" by Gregory of Nyssa. Proceedings of the 21 st International Congress of Byzantine Studies, London 21-26 August 2006, v. III, p.197*
53. **С. С. Аревицатян**, *Формирование философской науки в древней Армении, Ереван, 1973*
54. **Аристотель**, *Соч. в 4-х томах, т.1, О душе, Москва, 1976, с. 371-448*
55. **Аристотель**, *там же, т. 3, Физика, Москва, 1981, сс. 61-262*
56. **Аристотель**, *там же, т. 3, О небе, сс. 265-363*
57. **Օ. Տ. Վարձազարյան**, *Փիլոն Ալեքսանդրիական և արմանկոյն սրճ-նճճճճճճ, Երճճ, 2006*
58. **Գալեն**, *Օ նառնառնառն ճճճճ ճճճճ ճճճճ, Մոսկճ, 1971*
59. **Գիպոկրատ**, *Օ ճճճճ (ո ճճճճ), ճճ. ճ ճճճ. Մ. Մ. Մճճճ, Մոսկճ, 1936, ճ. 261-273*
60. **Գիպոկրատ**, *там же, Օ ճճճճ ճճճճ, ճ. 511*

61. *Диоген Лаэртский, О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1979, с. 354*
62. *С. Ковнер, Очерки истории медицины, Гиппократ, вып. 2, Киев, 1883, с. 265-267*
63. *Хр. Кучук-Иоаннесов, Григорий Нисский (331-394 гг.), Известия Таврической ученой архивной комиссии, Симферополь, 1916, 53, с.73-80*
64. *А. Мартынов, Учение св. Григория Нисского о природе человека (Опыт исследования в области христианской философии IV века, М., 1886*
65. *Немесий, еп. Емесский, О природе человека, пер.. Ф. С. Владимирского, Почаев, 1905*
66. *Л. А. Оганесян, История медицины в Армении в 5 томах, т. 1, Ереван, 1946, с. 152-158*
67. *Ориген, Творения, т. 1. О началах, Казань, 1898*
68. *Платон, Сочинения в трех томах, Тимей, т. 3, ч. 1, Москва, 1971, с. 457-540*
69. *А. Рудаков, Очерки византийской культуры по данным греческой агиографии, Москва, 1917, с. 97-101*
70. *Филон Александрийский, Толкования Ветхого Завета. Москва, 2000*

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՆՀԲ** - Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, աշխ. Գ. Ավետիքեանի, Խ. Սյուրմեկեանի, Մ. Ավգերեանի. Հ. Ա, Բ, Վեներիկ, 1836-37
- ՏՄԿ** - Գրիգորի Նիւսացոյ եղբարն Բարսղի Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, քննական բնագիր առաջաբանով ու ծանոթագրութիւններով Ստեղծա Վարդանյանի (սույն հրատարակութիւն)
- Forbes** - *Τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου ἐπισκόπου Νύσσης (ἀδελφοῦ τοῦ μεγάλου Βασιλείου) τὰ εὕρισκόμενα πάντα. Sancti patris nostri Gregorii Nysseni Basilii Magni fratris quae supersunt omnia. In unum corpus collegit, ad fidem codd. [mss.] recensuit, Latinis versionibus quam accuratissimis instruxit et genuina a supposititiis discrevit Georgius H. Forbesius. Tomus primus. Burntisland, e typographeo de Pitsligo. Fasc. I, 1855. Fasc. II, 1861*
- CSCO** - *Corpus Scriptorum Christianorum Orientalium*
- DOP** - *"Dumbarton Oaks Papers" (Washington)*
- Galenus** - *Claudii Galeni Opera Omnia. T. I-XX, Lipsiae, 1821-1833 (Medicorum Graecorum Opera quae extant. Ed. C.G. Kuhn. Vol. I-XX)*
- GNO** - *Gregorii Nysseni Opera. Leiden, 1959- 1987. Vol. I, II, III (pars 1, 2), V, VI, VII (pars 1, 2), VIII (pars 1, 2), IX (pars 1) Supplement.*
- MM** - *Gregory of Nyssa. On the Making of Man, translated by W. Moore and H. Wilson, in The Select Library of Nicene and Post-Nicene Fathers, Ser II, 5, New York, 1893*
- PG** - *Patrologiae Cursus Completus. Accurante J.P. Migne. Series graeca.. Patrisiis.*
- Лурье** — Григорий Нисский. Об устройении человека, пер., послесл. и примеч. В. М. Лурье, СПб, 2000

**ANCIENT ARMENIAN TRANSLATION
“ON THE MAKING OF MAN”
BY St. GREGORY OF NYSSA**

Summary

One of the most significant later translations of the Hellenizing School in Armenia is the book “*On the Making of Man*” by the fourth century outstanding Byzantine theologian and philosopher St. Gregory of Nyssa (335-394).

In the Middle Ages this masterpiece of St. Gregory of Nyssa was first translated into Latin by Dionysius Exiguus (6th c.) and Johannes Scotus Eriugena (9th c.), then into Armenian, Syriac and Georgian, and in modern times, into French, German, English, Italian, Spanish, Polish and Russian.

The Armenian translation, made in 717 in Constantinople, was a result of joint efforts of the noted Armenian scholar Step‘anos Siwnec‘i and Davit Hiwpatos. This collaboration brought into existence two more translations – “*On the Human Nature*” by *Nemesius of Emesa (717)* and the works of Pseudo-Dionysius Areopagite (712).

“*On the Making of Man*” deals with a wide range of problems pertaining to anthropology, from theological and philosophical ones up to merely medical. In accordance with the program of the three Cappadocians – St. Basil the Great, St. Gregory Nazianzene and St. Gregory of Nyssa – the treatise “*On the Making of Man*” was a synthesis of Classical and Hellenistic traditions and the Christian culture. It discusses not only scientific, but also artistic problems (literature, music, painting, sculpture).

“*On the Making of Man*” was very popular in Medieval Armenia. Only at the Mashtots Matenadaran, thirty copies of this work are kept. There are also some 11 copies in the collections of the Armenian Congregation of Mekhitarists in Venice and in the library of the St. James Monastery in Jerusalem. The editio princeps of St. Gregory’s treatise dates to 1512, and many other editions followed. The Armenian version, which is one of the most ancient translation of the work of St. Gregory of Nyssa, has not been published yet. The present publication is the critical text of “*On the Making of Man*”, with introduction and commentaries, based on MS M468 (12th-13th centuries.) and a series of select Matenadaran manuscripts: MSS

M51, M469, M470, M620, M1500, M1649, M2508, M3463, M 5253 (12th-17th centuries).

The study of the structure of the book, as well as textological and terminological data witness that the Armenian translation is based on one of the 6-8th cc. Greek manuscripts and according to the classification of George Forbes, belongs to the second recension of “On the Making of Man”, which includes Latin manuscripts too.

I have also revealed that some corrupted terms in the Armenian version had first been distorted in the Greek original. Nevertheless, a certain number of terms was corrupted by Armenian scribes. On the basis of these findings I have restored the correct forms of erroneous and omitted terms in the critical text of the Armenian translation.

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД КНИГИ СВ. ГРИГОРИЯ НИССКОГО "ОБ УСТРОЕНИИ ЧЕЛОВЕКА"

Резюме

Армянский перевод книги известного византийского богослова и философа IV века св. Григория Нисского "Об устройении человека" относится к завершающему периоду деятельности грекофильской школы в Армении.

В средние века этот шедевр св. Григория Нисского был переведен на многие языки: сначала на латинский Дионисием Малым (VI в.) и Иоанном Скотом Эриугеной (IX в.), а также на армянский, сирийский и грузинский, а в новейшее время - на французский, немецкий, английский, итальянский, испанский, польский и русский языки.

Армянский перевод книги является плодом совместной работы видного средневекового армянского ученого VIII века Степаноса Сюнеци и Давида Ипата, в результате которой в 717 году в Константинополе были переведены на древнеармянский язык книги Григория Нисского "Об устройении человека" и Немесия Эмесского "О природе человека", а несколько ранее - труды Псевдо-Дионисия Ареопагита (712).

В книге "Об устройении человека" исследуются все аспекты антропологии, начиная с богословского и философского, вплоть до естественно-научного и сугубо медицинского. Труд этот является великолепным образцом синтеза античной, эллинистической и раннехристианской культур, т.е. в каком-то смысле программным с позиции трех великих Каппадокийцев - св. Василия Великого, св. Григория Назианзина и самого св. Григория Нисского. Анализ этого выдающегося произведения показал, что в нем кроме христианской культуры подняты глубокие пласты античных наук, таких как философия, астрономия, биология и медицина вместе с необыкновенно тонким проникновением в суть изящных искусств - художественной литературы, музыки, живописи и ваяния.

Книга "Об устройении человека" пользовалась огромной популяр-

ностью в средневековой армянской книжности, только в Матенадаране им. Маштоца хранится 30 рукописных ее списков и 11-в рукописных собраниях Армянской Конгрегации Мхитаристов Венеции и армянского монастыря Св. Якова в Иерусалиме. Публикация этого выдающегося памятника византийской культуры началась в Европе с 1512 года и продолжается до настоящего времени. Однако текст армянского перевода, который относится к числу наиболее ранних по времени, до сих пор не был опубликован. Издаваемый ныне текст древнеармянского перевода "Об устройении человека" вкупе с исследованием и комментариями подготовлен на основе рукописи No 468 (XII-XIII вв.) Матенадарана им. Маштоца и 9 рукописных списков XII-XVII вв. того же собрания (рук. No 51, 469, 470, 620, 1500, 1649, 2508, 3463, 5253).

На основании данных текстологического и терминологического анализа, а также изучения структуры самой книги нам удалось показать, что в основе армянского перевода лежала греческая рукопись VI-VIII веков, относящаяся к второй редакции трактата "Об устройении человека" согласно классификации Дж. Форбса, в которую входят также латинские рукописи.

Проведенный нами текстологический и терминологический анализ армянского перевода выявил, что содержащиеся в нем искажения многих слов имели место первоначально в греческом оригинале, хотя нередки случаи искажения и в армянских списках. На основании этого нам удалось восстановить правильные формы искаженных слов и пропуски в сравнительно-критическом тексте публикуемого ныне армянского перевода.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ (Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ) ----- 5

ԳՐԻԳՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՂԲԱԻՐՆ ԲԱՐՍԴԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

| | |
|--|----|
| Ա. ԳԼՈՒԽ, ՅՈՐՈՒՄ Է ԻՄՆ ՄԱՍՆԱԲՈՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻՍ ԲՆԱԽԱԲՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԻՄՆ ԵՒ ՊԱՅԾԱՌ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ----- | 41 |
| Բ. [ՅՈՐՈՒՄ Է ԻՄՆ ՄԱՍՆԱԲՈՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻՍ ԲՆԱ- ԽԱԲՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԻՄՆ ԵՒ ՊԱՅԾԱՌ ՊԱՏՄՈՒ- ԹԻՒՆ] ՅԱՂԱԳՍ ՆԱԽԵՂԵԼՈՑՆ ՔԱՆ ԶՄԱՐԴՈՅՆ ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ ----- | 45 |
| Գ. ԸՆԴԷՐ Ի ՎԵՐՋԷ ՅԵՏ ԱՐԱՐԱԾՈՑՆ ՄԱՐԴՆ ----- | 51 |
| Դ. ԶԻ ՊԱՏՈՒԿԱՆԱԳՈՅՆ Է ՔԱՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԵՐԵԻԵԼԻ ԱՐԱՐԱԾՍ ՄԱՐԴՈՅՆ ԲՆՈՒԹԻՒՆ ----- | 55 |
| Ե. ԶԻ Ի ԶԵՌՆ ԱՄԵՆԱՅՆԻ ՆՇԱՆԱԿԷ ԶՍԿԶԲՆԱԿԱՆ [ԶԱՐՔԱՅԱԿԱՆ] ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄԱԾ ----- | 57 |
| Զ. ԶԻ ՆՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆՆ Է ՄԱՐԴՆ ----- | 59 |
| Է. ՀԱՐՑՈՒՄՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅՆ [ՄՏԱՑՆ] ԱՌ ԲՆՈՒԹԻՒՆՆ ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆՆ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՅԱՅՆՑԱՆԷ ԱՆՆՄԱՆԻՑՆ ՅԱՆԴԻՄԱՆԻՆ ԱՂԱՆԴՔ ----- | 61 |
| Ը. ԸՆԴԷՐ ՄԵՐԿ Ի ԲՆՈՒԹԵՆԷՆ ԶԻՆՈՒՑ ԵՒ ՅԱՐՏԱՔԻՆ ԾԱԾԿՈՒԹԻՑՆ Է ՄԱՐԴՆ ----- | 65 |
| Թ. ԸՆԴԷՐ ՈՒՂՂՈՐԴ Է ՄԱՐԴՈՅՆ ԶԵԲՆ, ԵՒ ՎԱՍՆ ԲԱՆԻ ԵՆ ԶԵՆՔՆ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՅԱՂԱԳՍ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՈԳՒՑ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ Է ----- | 69 |
| Ժ. ԶԻ ԳՈՐԾԵԼԱԿԱՆ ԿԱԶՄԵՑԱՒ ՄԱՐԴՈՅՆ ԶԵՒ ԱՌ Ի ԲԱՆԻՆ ՊԷՏՍ ----- | 77 |
| ԺԱ. ԶԻ Ի ԶԵՌՆ ԶԳԱՅՈՒԹԵԱՆՑ ՄԻՏՔՆ ՆԵՐԳՈՐԾԵՆ ----- | 81 |
| ԺԲ. ԶԻ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ Է ՄՏԱՑ ԲՆՈՒԹԻՒՆ ----- | 85 |

ԺԳ. ՀԱՐՑՈՒՄՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ, ՅՈՐՈՒՄ ԻՄԻՔ ԱՌԱՋԻՆՆ ԵՒ
 ԻՇԽԱՆԱԿԱՆՆ ՀԱՄԱՐԵԼԻ Է, ՅՈՐՈՒՄ ԵՆ ՅԱՂԱԳՍ
 ԱՐՏԱՍՈՒԲՑ ԵՆ ԾԱՂՈՒ ԲՆԱԽԱԲՍՈՒԹԻՒՆ ----- 87

ԺԴ. ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՄՆ ԲՆԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ԱՅՆՐ, ՈՐ ԸՍՏ
 ՆԻԻԹՈՅՆ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆՆ ԵՎ ՄՏԱՑՆ Է
 ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ----- 95

ԺԵ. ՅԱՂԱԳՍ ՔՆՈՅ ԵՒ ՅԱԻՐԱՆՉՄԱՆՆ ԵՒ ԵՐԱԶՈՑ
 ՀԱԿԱՌԱԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ [ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ]----- 99

ԺԶ. ԶԻ ՈՉ Ի ՄԱՍԻՆ ՄԱՐՄՆՈՅ ԵՆ ՄԻՏՔՆ, ՅՈՐՈՒՄ Է
 ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՐՄՆԱԿԱՆԱՑՆ ԵՒ
 ՇՆՉԱԿԱՆԱՑՆ ՇԱՐԺՄԱՆՑՆ-----111

ԺԷ. ԶԻ ՏԻՐԱՊԵՍ ՈԳԻ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ Է ԵՒ ԱՍԻ, ԻՍԿ ԱՅԼՔՆ
 ՀԱՄԱՆՈՒՆԱԿԻ ՊԻՏԱԿԱԲԱՐ ԱՆՈՒԱՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԵՒ
 ԸՆԴ ԱՍԵՆԱՅՆ ՄԱՐՄԻՆՍ ԹԱՓԱՆՑԱՆՑԷ ԶՄՏԱՑՆ
 ԶԱԻՐՈՒԹԻՒՆ, ԿՇՈՒՊԵՍ ԻԻՐԱՔԱՆՉԻՐ ՈՔ Ի ՄԱՍՆ
 ԽԱՌՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ -----113

ԺԸ. ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՆԻՆ. «ԱՐԱՍՑՈՒՔ ՄԱՐԴ
 ԸՍՏ ԿԵՐՊԱՐԱՆԻ ՄԵՐՈՒՄ», ՅՈՐՈՒՄ ՀԱՐՑԱՓՈՐՉԻ
 ԻՄՆ ԿԵՐՊԱՐԱՆԻՆ ԲԱՆ, ԵՒ ԵԹԷ ՆՄԱՆԻ ԵՐՁԱՆԿԻ ԵՆ
 ԱՆԱԽՏԻ ԱԽՏԱԻՈՐՆ ԵՒ ԱՌ ԺԱՄԱՆԱԿԵԱՅՆ, ԵՒ ԶԻԱՐԴ
 Ի ԿԵՐՊԱՐԱՆԻՆ ԱՐՈՒ ԵՒ ԷԳՆ Ի ՆԱԽԱՏՊԻՆ ՍՈՑԱ ՈՉ
 ԷԻՆ-----117

ԺԹ. ԶԻՆՉ ՊԱՐՏ Է ԱՍԵԼ ԱՌ ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ ՅԱՆՀՆԱՐ ՄՏԵԱԼ
 ԵՆ, ԵԹԷ ՅԵՏ ՄԵՂԱՆՉԵԼՈՅՆ ՄԱՆԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ԻԲՐ
 ԱՐԴԵԱԻՔ ԵՂԵՆ ՈԳԻՔՆ, ԶԻ ԵԹԷ ԱՆՄԵՂՔ ԿԱՑԵԱԼ ԷԻՆ
 Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԱՐԴԻԿ -----127

Ի. ԶԻ ԱՆԱՍՆԱԿԱՆ Ի ՄԵՉ ԱԽՏՔ՝ ԱՌ Ի ՅԱՆԱՍՆԱԿԱՆ
 ԲՆՈՒԹԻՒՆՆ ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆՆ ՊԱՏՃԱՌՍ ՈՒՆԻ-----133

ԻԱ. ԱՌ ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ ԱՍԵՆՆ՝ ԴԱՐՉԵԱԼ ԿԵՐԱԿՐՈԿ ԵՒ
 ԸՄՊԵԼԵԱԲ ԶՅՈՒՍԱՑԵԼՈՑՆ ԲԱՐԵԱՑ ԶՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ
 ԳՈԼ, ՎԱՍՆ Ի ՍԿԶԲԱՆԷ Ի ԴՐԱԽՏԻՆ ԳՈԼ [ԳՐԵԱԼ Է] Ի
 ԶԵՌՆ ՍՈՑԱ ՄԱՐԴՈՅՆ ԿԵԱԼ-----139

ԻԲ. ԶԻՆՉ Է Ի ԴՐԱԽՏԻՆ ԿԵԱՆՔ ԵՒ ԶԻՆՉ Է
 ՀՐԱԺԱՐԵՑՈՒՑԵԱԼ ՓԱՅՏՆ-----143

ԻԳ. ԶԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՉ ԱՅՍՉԱՓ Ի ԳՐՈՑՆ ՔԱՐՈՉՈՒԹԵՆԷ,
 ՈՐՉԱՓ ՅԻՆՔԵՆԷ ԻՐԱՑՍ ՀԱՐԿԷ ԸՍՏ ԿԱՐԳԻ
 ՅՈՒՍԱՑԵԱԼ ԼԻՆԵԼ-----147

| | |
|---|-----|
| ԻԴ. ԱՌ ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ ԱՍԵՆՆ, ԵԹԷ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԲԱՐԻ ԻՆՉ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ, ԸՆԴԷ՞Ր ԱՅԱ ՈՉ ԵՂԵՒ, ԱՅԼ ԺԱՄԱՆԱԿԱՒՔ ԻՄՆ ԵՒ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՍԲՔ ՅՈՒՄԱՑԵԱԼ ԼԻՆԻ ----- | 151 |
| ԻԵ. ՁԻ ՈՐ ՁՍԿԻՁԲՆ ՁԱՇԽԱՐՅԻ ԳՈՅԱՑՈՒԹԵԱՆ ԽՈՍՏԱՆԱՅ, ՀԱՐԿ Է ԵՒ ՅԱՂԱԳՍ ՎԱԽՃԱՆԻՆ ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒԼ----- | 159 |
| ԻԶ. ԹԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ [ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ] ԱՌ ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ ԱՍԵՆ ՅԱԲԵՏԱԿԻՑ ԳՈԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՁՆԻԻԹՆ ----- | 163 |
| ԻԷ. ՁԻԱՐԴ ՈՔ ԵՒ ՅԱՐՏԱՔՆՈՑՆ ՆՈՒԱՃԵՍՑԻ ՀԱԲԱՏԱԼ ԳՐՈՑ, ՈՐ ՅԱՂԱԳՍ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՈՒՄՈՒՑԱՆԷ ----- | 165 |
| ԻԸ. ՁԻ ՈՉ ԱՐՏԱՔՈՅ ՎԱՅԵԼՁԱԿԱՆԻՆ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ----- | 175 |
| ԻԹ. ՁԻ ԿԱՐ Է ՅԱՄԵՆԱՅՆԻՆ ՏԱՐԵՐՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅ ՔԱԿՏԵՑԵԼՈՅ ԴԱՐՁԵԱԼ Ի ՀԱՍԱՐԱԿԷՆ ԻԻՐԱՔԱՆՉԻՐ ՈՒՄԵՔ ՈՂՋ ԼԻՆԵԼ ----- | 177 |
| Լ. ԱՌ ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ ԱՍԵՆՆ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ԳՈՅԱՆԱԼ ՔԱՆ ՁՄԱՐՄԻՆՍ ՈԳԻՔ ԵՒ ԿԱՄ ԱՆԴՐԷՆ ԸՆԴԴԷՄ ՅԱՌԱՋ ՔԱՆ ՁՈԳԻՄՆ ՀԱՍՏԱՏԵՑԱԲ ՄԱՐՄԻՆ: ՅՈՐՈՒՄ ԵՒ ԵՂԾՈՒՄՆ ԻՄՆ ՓՈՓՈԽՄԱՆՆ ՅԱՅԼ ՄԱՐՄԻՆՍ ՈԳԻՈՑՆ ԱՌԱՍԴԵԼԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ----- | 183 |
| ԼԱ. ԿԱՋՄԱԾ ՁՄԻ ԵՒ ՁՆՈՅՆ ՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ ՊԱՏՃԱՌ ԷՈՒԹԵԱՆՆ ԳՈԼ ----- | 189 |
| ԼԲ. ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՄՆ ԲԺՇԿԱԿԱՆԱԳՈՅՆ ՅԱՂԱԳՍ ՄԱՐՄՆՈՅՍ ՄԵՐՈՅ ԿԱՋՄԱԾԻ ՍԱԿԱԲՈՒՔ ----- | 197 |
| ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----- | 219 |
| ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----- | 257 |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ----- | 261 |
| Summary ----- | 263 |
| Резюме----- | 265 |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----- | 267 |

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ

**ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
(ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ)**

**Քննական բնագիրը առաջաբանով և ծանոթագրություններով
Ստեղծված Վարդանյանի**

| | |
|---------------------------|---------------------|
| Համակարգչային շարվածքը՝ | Ստեղծված Վարդանյանի |
| Համակարգչային ձևավորումը՝ | Անահիտ Խանգաղյանի |
| Էջադրումը՝ | Հրատարակչական բաժնի |